

ԷԶՄԻԱԾԻՆ



1968

ՌՆԺԷ
ԻԴ ՏԱՐԻ
Փ ԵՄՐԱՍՐ

ԷԶՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Բ

1968




HA-9622



Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՎԵՀԱՓԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՅԻ կոնդակը գերաշնորհ տ. Գարեգին Լազո. Գազանեյանին Ավստրա- լիայի և Նոր Զելանդիայի առաջնորդ նշանակելու մասին	էջ 3
ՎԵՀԱՓԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՅԻ կոնդակը «Երիտասարդ հայունի» ամսագրի տասնհինգամյակի առիթով	5
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ—Արքայալսյո մետրերի օրենսդրումն և Վեհափառ Հայրապետի ձեռնդրան 80-ամյակը	8 9
Հաղորդագրություն	
ԳՐԻԳՐԻ ՍՐԿ. ՔՈՒՆԱՎՅԱՆ—«Խորհուրդ ս. պատարագի Հայաստանեայց առաջնակալ ս. եկեղեցւոյ հանդերձ փոքրովախրէն յարգմանուրեւմբն	10
Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ—«Մատենան ողորդուրեւմն» (Հատվածներ)	12
Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ւ Ո Ւ Մ	17
ԱՓՅՈՒՌՔՈՒՄ	
Հայ մշակույթի ամիս Վիեննայում	18
Պատարագ և Բարոզ Կրեւերի Իրաւիւն Բաղաւի հայոց ո. Հովնաճենս եկեղեցւոյ	20
Ա. ՀԱՅՆՅԱՆ—Համառոտ ակնարկ Մայր Աթոռ ո. Էջմիածնի պատմության վրա	21
ՎԱՀԱՆ ԵՊԻՍ. ՏԵՐՅԱՆ—Ա. Էջմիածնի դպրոցը 15—17-րդ դարերում	33
Հ. Ճ. ՍՈՐՈՒՆԻ—Կոմիտասին հետ	43
ՍՈՒՐԵՆ Ե. ՔՈՒՆԱՎՅԱՆ—Պատմարտն Գեորգե Քեղվիկեյին և Շրա հայագիտական աշխատությունները	52
Գ. ԱՅԿԱՐՅԱՆ—Սիրաբի գրքի հնագույն քարգմանության առիվ (լրացում)	62
Հանգիստ տ. Վաղան Եպս. Տիր—Սանեակյանի	63

Հանձնված է արտադրության 30/11 1968 թ.։ Ատորագրված է տպագրության 1/11 1968 թ.։
Տպագրական 4 ժամուկ, թուղթ 60x84/8, պատվեր 64



ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱՄԵՆ
«ԷՋՄԻԱՄԵՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Eichmiadzine», Eichmiadzine, Arménie, URSS.


Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1968 թ.

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱԺԱՌԻ ԵՒ ՍՐԲԱՋՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ





**ՎԵՀԱԹԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ
ԳԵՐԱԾՆՈՐՀ Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՊՍ. ԳԱԶԱՆԺՅԱՆԻՆ
ԱՎԱՏՐԱԼԻԱՅԻ ԵՎ ՆՈՐ ԶԵԼԱՆԴԻԱՅԻ ԱՌԱՋՆՈՐԴ
ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԵՐԱԾՆՈՐՀ Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԶԱՆԺՅԱՆԻՆ,
ԲԱՐԵՆՆԱՄ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ԹԵՄԻՆ ՀԱՅՈՑ ԱՒՏՐԱԼԻՈՑ
ԵՒ ՆՈՐ ԶԵԼԱՆՏԱՅԻ, ՀԱՐԱՋԱՑ ՈՐԴԻՈՑ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ
ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷԶՄԻԱՄՆԻ, ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ
ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ**

Գոհութիւն Ամենակալին որ Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցին իր հովանիին ներքեւ խաղաղ ու ապահով կը պահպանէ մեր հաւատաւոր պանդուխտ զաւակները ի սփիւռս աշխարհի, լուսաւորելով ու մխիթարելով անոնց հոգիները եւ մէկ ու անբաժան պահելով զանոնք՝ սուրբ Էջմիածնի աստուածային օրհնութեան ներքեւ:

Սենք յո՛ւժ երջանիկ ենք, որ Ձերդ Սրբազնութեան եւ եկեղեցական վարչութեանց ղեկավարութեան ներքոյ՝ Աւստրալիոյ եւ Նոր Զելանտայի հայ համայնքները արդէն հասած են անումի եւ կազմակերպման արժանի մակարդակի մը, որ իր լրումին հասաւ մշակումովը Ձեր թեմական կանոնադրութեան, որ վաւերացուեցաւ Մեր կողմէ յունուար 1967-ին ի գործադրութիւն:

Սոյն Մեր կոնդակով կը հաստատենք ստեղծումը Հայաստանեայց եկեղեցւոյ Աւստրալիոյ եւ Նոր Զելանտաի թեմին, եւ համաձայն վերոյիշեալ Ձեր թեմական կանոնադրութեան, զՁեզ կը կոչենք ստանձնելու նորաստեղծ վիճակի թեմակալ առաջնորդի պաշտօնը սրտագին մաղթանքով, որ Տէր Ձեզի օգնական ունենալով առաջնորդէք Ձեզի վստահուած հաւատացեալ ժողովուրդը համաձայն մեր եկեղեցւոյ կանոններուն, համաձայն Ձեր թեմական կանոնադրութեան եւ Ձեր բարեխնամ երկիրներու օրէնքներուն:

Արտանց կը մաղթենք Ձեզի՝ անուպառ ուժ ու եռանդ և սուրբ ներշնչումներ, Ձեր առաքելությանն ճանապարհին վրայ:

Թող Աստուած հաստատ, շէն եւ պայծառ պահպանէ Ձեր թիւը, իր եկեղեցիներով ու ժողովուրդով:

Հայրական սիրոյ ողջոյն եւ օրհնութիւն Ձերդ Արքագնութեան, թեմական-եկեղեցական վարչութեանց յարգարժան անդամներուն եւ համայն Աեր հաւատացեալ զաւակներուն:

«Յիշեցէք զառաջնորդս ձեր որ խօսեցան ձեզ զբանն Աստուծոյ. հայեցեալք յելս գնացից նոցա՝ նմանօրք եղերոք հաւատոցն» (Եբր. ԺԳ. 7):

Վարդգէս

ԵՄՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 15-ճ յունուարի
1988 փրկական ամի,
եւ ի տունարիս հայոց ՌՆԺԷ,
ի մայրավանս սրբոյ Էջմիածնի:
ՀՄՐ. 680





ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ
«ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅՈՒՀԻ» ԱՄՍԱԳՐԻ ՏԱՄՆՀԻՆԳԱՄՅԱԿԻ
ԱՌԻԹՈՎ

ԱԶՆՈՒԱՓԱՅՆ ՏԻԿԻՆ ՄԻՐԱՆ ՍԵԶԱՅԻՆ, ՀԱՐԱԶԱՏ ԴՍՏԵՐ ՄԱՅՐ
ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷԶՄԻԱԾՆԻ, ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ
ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Հայ հոգիի լուսարար Մայր Աթոռ սուրբ Էջմիածնէն ձեզի կը բերենք յարգալից ողջոյն եւ օրհնութիւն՝ Ձեր գրական-հրատարակչական քաղով տարիներու վաստակը տօնախմբելու երջանիկ առթիւ:

Յայտնի է Մեզի Ձեր գրական-հասարակական գործունէութիւնը, յատկապէս վերջին տասնհինգ տարիներու շրջանին Ձեր հրատարակած «Երիտասարդ հայութի» ամսագիրը, որ եղած է լուսաւոր արտայայտութիւնը Ձեր արունստագէտի անձնատրութեան, Ձեր պարկէշտ դաստիարակի շունչին, Ձեր մաքուր ու համարձակ հայրենասիրութեան: Այսպիսով ինչք գրսոնցիք պատուաբեր տեղ մը հայ սփիւռքի մեր ժամանակաշրջանի պատմութեան մէջ:

Հետեւաբար խղճի պարտք է նաեւ Մեզի համար ջերմապէս շնորհատրել եւ օրհնել Ձեր վաստակը անկեղծ գնահատանքով:

Կը խորհինք սակայն, թէ դուք կը գտնուիք տակաւին Ձեր իմացական ու ոգեկան ուժերու լիութեան մէջ եւ սպասելի է, որ Ձեր յոբելիական հանդիսութիւնը նկատէք հանգրտան մը միայն՝ շարունակելու համար Ձեր հանրագոտ գործը եւս երկար տարիներ, միշտ շրջապատուած մեր ժողովուրդի համակրանքով եւ գորգուրանքով:

Վարձքերնիդ կատար, յարգարժան Տիկին, ազնիւ մշակ եւ հաուստարիմ ծառայ հայ ժողովրդեան:

Ձեզի արեւշատ կեանք՝ քաջառողջութեամբ, խաղաղութեամբ եւ քեղուն գործունէութեամբ:

Ողջ լերուք, գորացեալ սուրբ հոգով եւ յաւետ օրհնեալ ի Տեառնէ եւ ի Մէնջ: Ամէն:

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

Տուալ կոնդակս ի 20-6 լուծուարի
 1985 փրկչական ամի,
 եւ ի տումարիս հայոց ՌՆԺԷ,
 ի մայրավանս սրբոյ Էջմիածնի:
 ՀՄԻ. 681



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄԵՌՈՆԻ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱԿԵՏԻ ԾՆՆԴՅԱՆ ՅՈՒՍՅԱԿԸ

Այս տարի սեպտեմբերի 20-ին լրանում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ծննդյան 60-ամյակը և գահակալության 18-րդ տարեդարձը:

Փետրվարի 8-ին Գերագույն հոգևոր խորհուրդը, Վեհափառ Հայրապետի թարձր մախազաբության ներքո, մասնավոր ճիստ գումարելով, քննության առավ այդ հոբելյանը նշելու հետ կապված միջոցառումներն և հետ խորհրդակցության որոշեց:

1. Խնդրել Վեհափառ Հայրապետին 1969 թվականի հոկտեմբերի 5-ին, կիրակի օրը, մեծահանդես շքով սրբալույս մեռոն օրհնել ի մխիթարություն հայ ժողովրդի:

2. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ծննդյան 60-ամյակը և գահակալության 14-րդ տարեդարձը նշել նույնպես 1969 թվականի հոկտեմբերի 5-ին, կիրակի օր, արժանավայել հանդիսությամբ:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ուրախությունն ունի հրատարակելու ամսագրի սույն համարի 8-րդ էջում պաշտոնական հաղորդագրություն այդ մասին, որպես թարի լուր՝ ի գիտություն և ի ղեկավարություն մեր թեմերին:

Վստահ ենք, որ մեր հավատացյալ և հայրենասեր ժողովուրդը թե՛ մայր հայրենիքում և թե՛ սփյուռքի մեջ սրտի բերկրանքով և խանդավառությամբ պիտի ընդունի հայրապետական այդ որոշումն ու հրավերը ու սփյուռքի մասնակցի Մայր Աթոռի կամարների

ներքո սրբալույս մեռոնի օրհնության և Վեհափառ Հայրապետի ծննդյան և գահակալության հոբելյանական հանդիսություններին:

Անտոնի օրհնությունը միշտ էլ հանդիսացել է մեր հավատավոր ժողովրդի սրտին խոսող ամենամկերական ու համաժողովրդական, հազվադեպ ու խորհրդավոր տոնական տարություններից մեկը: Այդ պատճառով անուշահոտ յուղի օրհնությունը, մեր եկեղեցու դարերով սրբազործված այդ սրտառույ խորհուրդը, միշտ էլ կատարվել է արժանավայել հանդիսությամբ, հոգևոր մխիթարության սրբազան բավականությամբ, իբր մեր նախնիքներից մեզ նվաճող մնացած հավատքի ցվիրականություն, որը շատ խոր տեղ է գրավել մեր ժողովրդի գիտակցության մեջ:

Հին կրոնների պատմության մեջ ևս ծանոթ են յուղի, ձեթի օրհնությունն ու գործածությունը ժողովուրդների հոգևոր կյանքի և ծիսական սովորույթների մեջ. «Բուղով, խնկով և գինով զուարճանալ սիրտ» (Առակք. ԻԸ 9):

Հատկապես հին ուխտի օրհնադրության մեջ կարևոր տեղ էր հատկացված յուղի օրհնության և կիրառմանը: Օծման յուղը որպես նյութեղեն միջնորդ աստվածային Զորության և Հոգո՛ւ, ներգործում էր մարդկանց և իրերի վրա. «խոսեցաւ Տէր ընդ Մովսիսի և ասէ... առ քեզ եղ ծիթեմեաց... ե արասցես

զայն եղ յօծումն սրբութեան... և օծցես ի նմանն զխորանն վկայութեան... և սրբեցես և ելիցի սրբութիւն սրբոց» (Եղբ. Լ 22—28): Իսրայելի թագավորներն ու մարգարեները և քահանաները նույնպէս օծվում էին:

Առաքյալներն իրենց քարոզության ընթացքում հիվանդներին բուժում էին աղոթքով և օծում յուղով՝ «լանում Տեառն» (Մարկ. 2, 13, Յակ. 5, 14):

Մեր եկեղեցու կյանքում ևս օծման յուղը՝ «անուշահոտ յուղն» կամ «յուղն անուշահոտության», շատ մեծ տեղ է զբաղում, որպէս ս. Հոգու շնորհների իրագործում, որպէս հավատքի, կյանքի անուշահոտություն: Այդ է պատճառը, որ սրբալուս մեռողով օծվում է, «կնքվում» մկրտվողը, քահանան, եպիսկոպոսն ու կաթողիկոսը մեր մեջ, ինչպէս նաև անցյալում հայոց թագավորները:

Ըստ Ագաթանգեղոսի վկայության, ս. Էջմիածնի Մայր տաճարի Ավագ սեղանի առաջ, բեմի վրա, առաջին անգամ դրվել է սրբալուս մեռողի կաթսան, և առաջինը մեռողն է օրհնել ս. Գրիգոր Լուսավորիչ. «Եւ իւղն օծութեան, զոր արկանէր Գրիգոր ի վերայ մարդկանն, շրջան առեալ ի մէջ գետոյն շուրջ զմարդկամբն խաղայր և քրիստոսեան դրոշման առ հասարակ ընծայեցուցանէր զամենեսեան լինել ամենեցուն Հոգւոյն Սըրբով»:

Այնուհետև մեր եկեղեցական մատենագրության մեջ յուղի օրհնության և զործածության մասին հնագույն երկրորդ վկայությունը գտնվում է ս. Սահակի սահմանած 55 կանոնների մեջ, որոնցից 20-րդ հրահանգում է. «Ամեն տարի, Ջատկից հետո, մկրտության յուղը որքան հարկավոր է, քահանաները բերեն մեզ և մեզնից ստանան օրհնած յուղը: «Մկրտության յուղ» բազատրութեամբ հասկացվում է մեռող (Հայոց եկեղեցական իրավունք, Ա գիրք. Ծուշի, 1903, էջ 521—522):

Երրորդ վկայությունը գտնվում է Կորյունի մոտ: Ս. Սահակի վախճանման առիթով «յերկրորդ ժամու աւուրն ի պաշտաման անուշահոտ իւղոյն հանդերձ աստուածահանոյ աղօթիւք՝ ծերունոյն ի Քրիստոս աւանդել: Կորյունի այս վկայության մեջ ունանք վերջին օծման մասին ակնարկություն եմ կարծում գտնել:

Մեռոն բառը չկա Աստվածաշնչի մեջ: Մեռոն, մյուտոն կամ միտոն բառը հունարեն է և նշանակում է անուշ օւղ, որը պետք է պատրաստվի ձիթեղու ձեթից կամ յուղից:

Առաջին անգամ այդ բառին հանդիպում ենք Հովհանն Օձնեցու մոտ, մեր եկեղեցական մատենագրության մեջ: 718 թվականին Դվինի Ե ժողովում սահմանված 32 կանոնների մեջ, 8-րդ հրահանգում է. «Պարտ և

արժան է զսուրբ միտոնն այսինքն է զիւղն անուշահոտութեան հայտապետէն օրհնել» (Հայոց. եկեղ. իրավունք, Ծուշի, 1903, էջ 412) և տարին մի անգամ, Ջատկի Ավագ հինգշաբթի օրը բաշխել եպիսկոպոսներին և քահանաներին սեղան, եկեղեցի, խաչ օրհնելու և մկրտվածներին դրոշմելու համար:

Մեռոնի պատրաստության հիմնական նյութերն են՝ ձեթ և բալասան:

Էջմիածնի Մայր Մաշտոցը, տպագրված 1830 թվականին, մեռոնի պատրաստության համար հրահանգում է 45 տեսակ հոտավետ ծաղիկներ, որոնց անունները թվելուց հետո, պատվիրում. «Եւ եթէ նիւթոցս մին և կամ երկու և երեք պակաս լիցի, մի՛ արգելցես զմեռոնի օրհնելն»:

Մեռոնի օրհնության համար անհրաժեշտ ծաղիկներ եղթարկվում են մասնավոր պատրաստության: Մայր Մաշտոցը հրահանգում է այդ նյութերը ձեծելուց և մաղելուց հետո, դնել փոքր կաթսայի մեջ, ավելացնել նաև «իւղ ձիթեղույ և գինի» և ապա եփել, որպեսզի բուրումնավետ այդ նյութերի բուրմունքն ու անուշահոտությունը փոխանցվի յուղին:

Ըստ Մաշտոցի հրահանգի, շաքաթներ առաջ պետք է պատրաստություններ տեսնել մեռոնի օրհնության համար. «Նախ ժողովեսցեն ծաղկունս, և եփեալ զնոսա... դիցեն ի սարկաւազարանն և ի իղս ձիթեղույ ըստ բաւականին լցեալ յանօթս և ապա դիցեն աւագ խորանն քառասուն աւուրք յառաջ և ծածկեսցեն եօթն շղարշով»:

Մեռոնի կաթսան առնվազն քառասուն օր առաջ պետք է մնա Մայր տաճարում՝ Ավագ սեղանի բեմի առաջ, ամեն չորեքշաբթի և ուրբաթ օրեր տեղի ունենա Հսկումի արարողություն, աղոթքով ու տաղմոսելությունք:

Մեռոնը խորհրդանշն է, «օրինակը» սուրբ Հոգու շնորհներին:

Նարեկացին նշում է, որ «բազում ծաղիկների բաղադրությամբ պատրաստված խընկելի, պաշտելի և գովելի յուղը ալես պարզ օծում չէ զանգիս և ոչ էլ զխիս մագերին օգուտ, եթե տերունական քո խաչով սյառնագրված չլիներ»:

Սարգիս Ծնորհալին իր Կաթողիկեայթ թղթի մեկնության մեջ գրում է. «Թող յուղով օծեն հանուն Տիրոջ... որովհետև ո՛չ թե յուղն է առողջություն տալիս հիվանդին, ալ Տիրոջ անունը»:

Ըստ եկեղեցական հիմնականների, մեռոնօրհնությունը կատարվում էր Ջատկի Ավագ Հինգշաբթին, ս. պատարագի ժամանակ:

Մեր Էջմիածնի Մայր Մաշտոցը հրահանգում է «և յաւուր մեծի հինգշաբաթոյ, և կամ յաւուր Պենտեկոստէի և կամ յաւուր ինչ պատշաճաւորս»:

Շատ հավանաբար Մաշտոցում մեռնօրինեքի կանոնը կազմված է ԺԱ դարում և մինչև Տաթևացու օրերը ճոխացել և ամբողջականացվել:

Գրիգոր Տաթևացին, տաթևյան թափով և ընդգրկումով, շատ գեղեցիկ, հոգեշահ և կրոնաբույր խորհրդածություններ է գրել այն մասին, «թե զի՞նչ նշանակե միտունին ամուսն հոտն» (ՏԵՍ Գր. Տաթևացի, Զմերան հատոր, էջ 568—564բ):

Քրիստոնեական ոչ մի եկեղեցու կյանքում օրհնած լուրջ այնքան մեծ, հոգևոր ու ազգային նշանակություն չի ունեցել, որքան սրբալույս մեռոնը հայ ժողովրդի կյանքում:

Սրբալույս մեռոնը ս. Գրիգոր Լուսավորչի օրերից մինչև մեր օրերը մեր ազգային-եկեղեցական գիտակցության և զգացմունքների համար միշտ եղել է և է նաև մեր ժողովրդի հոգևոր միասնության և մեր եկեղեցու անքակտելի միության նվիրական խորհրդանշանը, հոգևոր ու լուսավոր շաղախը: Այս իսկ պատճառով մեր ժողովուրդը անսպառ հավատով ու սրտառույշ քարեպաշտությամբ ներկա է եղել մեռոնի օրհնության, և մեռոնի կաթսայի առաջ ձմրադրելիս հաղորդակցել է իր նախնիների հավատի, ջերմեռանդության և հայրենասիրության հետ:

Սրբալույս մեռոնի կաթսան հայ հավատացյալ և հայրենասեր ժողովրդի մեռոնաբույր, անուշահոտ սիրտն է, ուր հայ հավատքն ու հոգին, հայ կյանքն ու միտքը օրհնվում և շատանում են և իբր մասունք բաշխվում բոլոր ժամանակների հայության:

1988 թվականի հոկտեմբերի 5-ը կոչված է նոր ու պատմական իրադրություն հանդիսանալու մեր հոգևոր-եկեղեցական կյանքում:

1988 թվականի հոկտեմբերի 5-ին ս. Էջմիածնի կամարների տակ Լուսավորչի գահի արժանընտիր հաջորդը և հայոց աշխարհի

սիրելի Հայրապետը՝ Ն. Ս. Օժոթյուն Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսը, սուրբ Լուսավորչի Աջով, իր աղոթքներով և օրհնությամբ իր ծննդյան 80-ամյակի և գահակալության 14-րդ տարեդարձի առթիվ սրբալույս մեռոն է օրհնելու՝ ի մխիթարություն մեր ժողովրդյան, մի անգամ ևս պայծառացնելով Մայր Աթոռ ս. Էջմիածինը, ուր նորից իջնելու է ս. Հոգին սրբալույս մեռոնի օրհնության պահին, որպես նոր շնորհաբաշխություն: «Քում ամենիմաստ էութեանդ իոստովանիմք զամենայն պարզ և մեզ ծաղկեալ և անեցեալ, որ ձեռնադրես ստաքեալս, լցուցանես մարգարէս, ոստոցանես վարդապետս» (Նարեկացի):

Թող երբեք չպակասի սրբալույս մեռոնը հայ ժողովրդի սրտից և սուրբ ձեթը՝ Լուսավորչի կանթեղից:

Հայ եկեղեցին և հայ հավատացյալ ժողովուրդը 1988 թվականի հոկտեմբերի 5-ին երախտագետ սրտով և որդիական ակնածանքով կնշի իր սիրելի Հայրապետի ծննդյան 80-ամյակը և Նրա գահակալության 14-րդ տարեդարձը:

Հայոց Հայրապետը տասնչորս տարիներ շարունակ աղոթքով, հսկումով, ինքնամոռազ նվիրումով ու աշխատանքով նոր լույս է իջեցրել սուրբ Էջմիածնի հազարամյա քարերին ու հայ սրտերի վրա և իր սուրբ և արի ձեռքերում պահել այնքան հեղինակությամբ և բարի արդյունավորությամբ հայրապետական իշխանության գավազանը՝ հանստսանություն Մայր Աթոռ ս. Էջմիածնի, ի պայծառություն հայ եկեղեցու և ի քարոթություն հայրենյալ:

Հայրապետական հոբելյանի առթիվ րովանդակ հայ ժողովրդի սրտագին աղոթքն է. «Տէր, լուսազարդ պայծառացո գաւազան իշխանութեան մերոյ հայրապետի, զի օրհնեսցուք զքեզ, Տէր, այժմ և յաւիտեան»:





ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության ներքո, Գերագույն հոգեվոր խորհուրդը ուրբաթ, փետրվարի 9-ին, մասնավոր նիստ գումարելով, քննության առավ սրբալույս մյուռոն օրհնելու և նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի ծննդյան 60-ամյակը հանդիսավոր կերպով նշելու հարցերը:

Գերագույն հոգևոր խորհուրդը հետ խորհրդակցության որոշեց.

1. Խնդրել Վեհափառ Հայրապետին՝ սրբալույս մյուռոն օրհնել ս. Էջմիածնի Մայր տաճարում, ըստ կանոնաց Հայաստանյայց եկեղեցվո, հառաքիկա տարի, 1989 թվականի հոկտեմբերի 5-ին, կիրակի օրը՝ ի մխիթարություն հայ հավատացյալ ժողովրդի:

2. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի 60-ամյակը և զահակալության 14-րդ տարեդարձը հանդիսությամբ նշել նույնպես 1989 թվականի հոկտեմբերի 5-ին, կիրակի օրը:

3. Այս որոշման մասին հաղորդել նվիրապետական Աթոռներից, թեմերին, ազգային-եկեղեցական մարմիններին պաշտոնական գրություններով և մամուլի միջոցով:

4. Մյուռոնօրհնեքի և Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ծննդյան 60-ամյակի հանդիսություններին հրավիրել ինչպես ներքին թեմերից, նույնպես և տիրուքի թեմերից հոգևորական և աշխարհական ներկայացուցիչներ:

5. Այս հանդիսությունների առթիվ հրատարակել Վեհափառ Հայրապետի կոնդակների և քարոզների ժողովածու:

ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ

10 փետրվար 1988 թ.

Մայր Աթոռ ս. Էջմիածին





«ԽՈՐՀՈՒՐԴ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ
ՀԱՆԴԵՐՁ ՓՈՐԹՈՒԿԱԼԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՄԲ»

(Ծնորդք վրդ. Գասպարեան, Պուէնոս-Այրէս, «Արարատ» տպարան,
1965 թ., 283 էջ)

1965 թ. Բուենոս-Այրէսում «Արարատ» տպարանը լույս է ընծայել Մայր Աթոռի միաբան Ծնորդք վրդ. Գասպարյանի «Խորհուրդ ս. պատարագի Հայաստանեայց առաքելական ս. եկեղեցւոյ հանդերձ փորթուկայերէն թարգմանութեամբ» աշխատությունը:

Հայոց պատարագը վաղուց թարգմանվել է մի շարք լեզուներով (հունարեն, լատիներեն, ֆրանսերեն, անգլերեն, ռուսերեն և այլն): Սակայն Ծնորդք վարդապետի այս շնորհակալ գործը իր տեսանկի մեջ եզակի է այն իմաստով, որ առաջին անգամ լինելով մեր պատարագը թարգմանվում է պորտուգալերեն լեզվի:

Տ. Ծնորդք վարդապետի նպատակն է եղել՝ հնարավորություն տալ Բրազիլիայի մեջ հասակ ճեղքող հայ սերնդին հաղորդակցվելու մայրենի լեզվով կատարվող սրբազան արարողություններին, որոնք անհաղորդ էին լեզվին չտիրապետելու պատճառով:

Թեպետև գրքի վերնագիրը միայն «Խորհուրդ ս. պատարագի» է դրված, սակայն այն բովանդակում է հինգ տարբեր մասեր՝ բաղկացած 283 էջերից:

Առաջին էջը բացվում է հայկական ոճով պատկերված գեղաքանդակ մի խաչքարով՝ նվիրված Ապրիլյան եղեռնի անգերեզման նահատակների հիշատակին:

Գրքի 7—8 էջերում տպագրված է Հարավային Ամերիկայի հայրապետական պատվիրակ տ. Բաբգեն արքեպ. Ապատյանի ողջույնի խոսքը, ուր սրտագին ողջունելուց հետո հայոց ս. պատարագի թարգմանությունը պորտուգալերենի, սրբազանը գոհունակության և գնահատանքի է արժանացնում տ. Ծնորդք վարդապետի կատարած աշխատանքը՝ «եկեղեցական մարդու ազնիւ եռանդին համար»՝ քնութագրելով Ծնորդք վարդապետի անկեղծ նվիրումը և նրա այս երկասիրության հոգևոր արժեքը:

Հաջորդ՝ 10—13 էջերում «Ծնորհակալիք» վերնագրի տակ հրատարակիչ վարդապետը իր երախտագիտությունն է հայտնում բոլոր նրանց, ովքեր օգտակար են հանդիսացել գրքի կազմության և հրատարակության գործում:

Էջ 14—18-ը հառաջաբանն է, որի մեջ հեղինակը ընթերցողին է ներկայացնում գիրքը:

գրելու իր մտահղացման դրդապատճառը, իր ծրագիրը և նպատակը:

Առաջաբանը վերջացնում է այսպես. «Անհրաժեշտ նկատեցինք Ա մասին անցնել առաջ կրօնական կարևոր հարցերու շուրջ որոշ բացատրություններ տալ հատապարհալ ընթերցողին: Վստահ ենք որ այս մասին շատեր անտեղեկ վիճակի մէջ են ու հետաքրքրութեամբ պիտի ուսումնասիրեն յաջորդ էջերը, որպեսզի անգիտութեան մէջ չի մնան, այլ սուրբ պատարագի իմաստը ըմբռնելով կարենան ամեն անգամ անելի լոյս, անելի շնորհք ու զօրութիւն քաղել անկէ»: Հեղինակը անցնում է հաջորդ գլխին, «Նախագիտելիք» վերնագրով, որն ամենածավալունն է գրքում, էջ 20—81:

Այստեղ տրված են բացատրություններ պատարագի ծագման, խորհրդանշական իմաստի, հաղորդության խորհրդի վերաբերյալ և համառոտ կերպով շարադրված է պատմականը հայոց ս. պատարագի հաստատման: Տրված են բացատրություններ հայոց ծեսի, պաշտամունքի, խորհուրդների վերաբերյալ: Բացատրված են նաև ս. պատարագի մէջ եղած որոշ ծիսական տարբերությունները Մեն Պահքի մէջ և տրված են հանձնարարություններ հավատացյալների հիւտ ու կացի վերաբերյալ եկեղեցում:

Այնուհետև խոսվում է այն մասին, թե հավատացյալը ինչպիսի երկյուղածությամբ, «պահքով ու ծամով, իր խղճի մաքրութեամբ և քննութեամբ, խոստովանութեամբ» մոտենա ս. հաղորդության խորհրդին:

Առաջին մասի վերնագիրն է՝ «Զւլջում և խոստովանութիւն մեղաց» (էջ 82—121), որը հատկացված է անհատական աղոթքների գործությանը: Մեն մասամբ աշխարհաբարով ներկայացված են ծամագրքի առաջին էջում բացվող «մեղալ ամենասուրբ Երրորդութեան» աղոթքը, 50-րդ սաղմոսը, երկու աղոթք Նարեկից և «Հաւատով խոստովանիմք»-ը: Առաջին մասն ավարտվում է Ներսէս Շնորհալու նկարով:

Երկրորդ մասը՝ «Ժամերգություն» վերնագրով (էջ 124—179), պատարագից առաջ կատարվող ժամերգության մասն է, սկսվում է Յուդաբերից Ավետարանով և վերջանում է անդաստանի արարողությամբ:

Երրորդ մասը (էջ 182—257) ս. պատարագն է:

Չորրորդ մասը (էջ 260—271) «Պաշտօն հոգեհանգստեան» (requiem)՝ համապատասխան ավետարանական ընթերցումներով և մաղթանքով:

Հինգերորդ մասը (272—283)՝ Հայրապետական մաղթանք:

Գրքի վերջում դրված է երեք էջերից բաղկացած մի հիշատակարան, պորտուգալերեն լեզվով, «Մեր ընտանիքի կյանքը» վերնագրի տակ՝ հիշատակելու համար ընտանիքում կատարված դեպքեր (ծնունդ, մկրտություն, ամուսնություն, մահ և այլն), որպեսզի անհատը կապվի գրքին:

Նկատելի է, որ հատորում տեղ են գտել արարողության այն մասերը, որոնք յսելի են հավատացյալ ժողովրդին, և որոնց յուրաքանչյուր հավատացյալ պարտավոր է հետեւելու:

Ս. պատարագի ընթացքում պատարագյի ծածուկ աղոթքները զանց են առնված, այսպիսով գիրքը թե չի խճողված և թե հեշտացնում է հավատացյալի քալ առ քալ հետևելու արարողության ընթացքին: Գրքի մէջ գետնելված աղոթքների, ավետարանական ընթերցումների աշխարհաբար հատվածները Թորգոմ պատրիարք Գուշակյանի և Գարեգին պատրիարք Խաչատրյանի թարգմանություններն են:

Թարգմանության գործում իր գնահատելի աշխատակցությունն է քերել յրազհիացի մի հոգևորական՝ հայր Անդրե Մուկիզ դը Ռեզենտեն Դոմինիկյան միաբանությունից, որն ըմբռնելով թարգմանության նպատակը և հավատարիմ մնալով բնագրի աստվածաբանական վարդապետությանը, աշխատել է թարգմանված բնագրի ոճի հղկման և գեղեցկացման վրա:

Հարկ է նշել, որ հոգ. տ. Շնորհք վրդ. Գասպարյանի աշխատությամբ պատրաստ է նաև նույն գործի իսպաներեն թարգմանությունը, որը տպագրության է սպասում:

Շնորհավորելով տ. Շնորհք վարդապետին, իր այս կատարած գործի առիթով, ցանկանում ենք, որ նա այսուհետև ևս այսպիսի հոգեշահ աշխատություններով հարուստացնի արդի հայ եկեղեցական և կրօնական գրականության էջերը:

ԳՐԻԳՈՐ ՍՐԿ. ԲՈՒՆԻԱԹՅԱՆ



ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ*
(Հատվածներ)

Թարգմանություն՝
ՎԱԶԳԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

Լսի՛ր ինձ, Աստված,
Դու, որ աստված ես ամեն մի մարմնի, ամեն մի հոգու,
Ըստ դավանության աստվածաշնորհի,
Եվ երկայնամիտ ու բազումողորմ, ըստ սուրբ Հովնանի,
Շնորհ արա ինձ, որ օրհնյալ կամքիդ բարեհաճությամբ
Ավարտի հասնի աղերսամատյանն...
Այս ողբերգական, որ սկսել եմ:
Եվ մինչ այժմ ես, երբ ոտք եմ դրել այն ճանապարհին,
Որը տանում է դեպի պատրաստած օթևաններդ,
Արցունքներով եմ խոսքս սերմանում,
Երբ հասնի ժամը ինձի հավաքման,
Թող որ կատարյալ քաղությամբ դառնամ գոհ ու բերկրալից՝
Ընտիր խրճերի երջանիկ բերքով:
Չտա՛ս ինձ սրտի անորդի արգանդ. Իսրայելի պես,
Ոչ էլ աչքերի ցամաք տոհմքներ, ո՛վ ամենագո՛րծ:
Լսի՛ր բանական աղաչանքներին, հզոր ողորմա՛ծ,
Նախքան երկնքին, երկինքը՝ երկրին,
Եվ սա՛ ցորենին, գինուն ու ձեթին,
Իսկ սրանք բոլորն էլ Իսրայելին:
Երկնավորների աղերսն, ուղղված քեզ,
Թող որ ավելի ազդի իմ հոգուն,
Քան թե տալիքն իմ ապականացու:
Դու ստեղծող ես, իսկ ես՝ միայն կալ.
Տարակուսվածիս այս հեծե՛ծագին

* Գրիգոր Նայիվկացու այս Ռաճարեղ ստեղծագործությունը աշխարհաբարի վերանելու առաջին երախտափորներից եղան Գարեգին արքեպիսկոպոս Տրապիզոնցին, Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյանը և շնորհալի բանաստեղծ-թարգմանիչ Մկրտիչ Խերանյանը: Սակայն Նարեկացին այն հեղինակը չէ, որի երկի կատարյալ թարգմանությունը հնարավոր լինի մեկ կամ մույնիսկ մի քանի մարդկանց ջանքերով: Մենք կս համարձակվեցինք մեր համեստ ուժերը փորձել այս ծանր ու դժվարին գործի մեջ, աճուշտ մեծ երկյուղածությամբ և առանց վերջին խոսք ասելու հավակնության: Աշխատանքը դեռևս ընթացքի մեջ է, իսկ թե որքանով է երաշխավորվում նրա հաջողությունը, այդ արդեն մենք չենք, որ պիտի ասենք:

Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Աղերսանքների սկզբից հայտնի՜ր կամքդ քարեգութ,
 Որ կարողանամ գորանալ այստեղ,
 Որպեսզի երբ որ երկինքը վերին իմ առաջ բացվի,
 Չլիցի հանկարծ, լույս վայելելուն անվարժ, անընտել,
 Սի մոտի մեան հալվելով իսպառ ջնջվեմ մեջտեղից:
 Սիրտ տո՛ւր գրկվածիս, ինչպես ասողն է գոչել աղոթքով:
 Ուժ՝ թալկացածիս և կանք՝ մաշվածիս խղճի խաթերից,
 Ոչ թե անձկությամբ ու տառապանքով քեզ որոնելուց:
 Ա՛ն ավանդն իմ այս աղաչանքների
 Եվ ողորմության շնորհներդ տո՛ւր,
 Ընդունի՛ր փոքրը այս՝ տկարիցս
 Եվ հզորիցդ՝ մեծը շնորհի՛ր:
 Զորավոր դարձրու խոսքերս զղջման՝
 Ուղարկելով մեզ հոգի բարձունքից՝
 Քո աստվածաշունչ այն պատգամներով,
 Որ գետեղել եմ այս մատյանի մեջ:
 Ըշմարտությանքդ լուսավորելով
 Առակով ասված խոսքը Եսայու,
 Հաճի՛ր, բարերա՛ր, պարզել մահվան արժանավորիս՝
 Իմ անարգածայն սղոճի տեղակ՝ շնորհիդ ոսկին,
 Անգարդ սնաթույր իմ երկաթի տեղ՝
 Հրաշեկ պղինձը Լիբանանի,
 Որ օրինակն է առաքինության:
 Ինչո՞ւ կարծրացնես սիրտդ եղկելուս, անճառ ահավո՛ր,
 Որ չթափանցի երկուդդ այնտեղ:
 Թող որ անվաստակ չմնամ փոքր այս աշխատանքից,
 Ինչպես զրաջան սերմնացան ամուլ, անքերքի հողի:
 Թող չպատահի ինձ հանկարծ երկնել, սակայն չծնել,
 Ողբալ՝ չարտասվել, խորհել՝ չհառաչել,
 Ամպել՝ չանճրնել, գնալ՝ չհասնել,
 Քեզ ձայն տալ, և դու ձայնս չլսես,
 Պաղատել, սակայն անտեսված մնալ,
 Կողկողել, սակայն դու չողորմես,
 Աղաչել քեզ, բայց ոչինչ չշահել,
 Զոհել մատուցել, բայց չճենճերել,
 Քեզ տեսնել, սակայն ձեռնունայն դուրս գալ:
 Լսի՛ր ինձ, նախքան ես կդիմեմ քեզ, ո՞վ միայն հզո՛ր:
 Մեղքերով ապրած օրերիս չափով՝
 Անվճար թողած պատժի տուգանքը
 Ինձ՝ չարագործիս, նոր տանջանքներով վճարել մի՛ տուր:
 Փրկի՛ր ինձ, գթա՛ծ, լսի՛ր, ողորմա՛ծ:
 Մարդասեր եղի՛ր իմ հանդեպ, ներո՛ղ,
 Խնայող եղի՛ր, ո՞վ երկայնամիտ,
 Պաշտպանի՛ր, ապավե՛ն, բարերարի՛ր, հզո՛ր,
 Ազատի՛ր, ամենակա՛լ, կյանք տո՛ւր, նորոգո՛ղ,
 Վերականգնի՛ր, ահավո՛ր, լուսավորի՛ր, երկնայի՛ն,
 Բժշկի՛ր, հնարագետ, քավի՛ր, անքնի՛ն,
 Պարգևատրի՛ր, առառածե՛ռն, շնորհագարդի՛ր, աննախա՛նձ,
 Հաշտվի՛ր, անախտակի՛ր, ընդունի՛ր, անխակալ,
 Զնչի՛ր պարտքերս, օրհնյա՛լ:
 Երբ թշվառության պահին աչքերս սևեռած լինեմ.
 Ինձ սպառնացող գույգ վտանգներից,
 Թող որ տեսնեմ քո փրկությունը, հո՛ւյս ու խնամակա՛լ:
 Եթե հայացքս դեպի վեր հառած՝
 Դիտելու լինեմ ամենագլուխ ուղից սոսկալի,
 Թող խաղաղության հրեշտակդ ինձ պատահի սիրով,
 Իսկ վերջին օրս, շունչս արձակելիս,

Ցույց տո՛ւր երկնա՛ից երջանիկներից
 Մի լուսաթուփ ու մաքուր հոգի,
 Որ հասնի ինձ մոտ սիրուդ պարզևով,
 Նաև վախճանված արդարներից ինձ կարեկից հասցրո՛ւ:
 Հոսահատ օրս չարագործիս, տե՛ր,
 Քո անակնկալ բարին շնորհի՛ր,
 Ո՛վ բարեքանալ փրկի՛չ բոլորի,
 Հիվանդ ոչխարիդ որպես ուղեկից
 Չիցնի որ տաս դժնդակ գազան:
 Մեղքով մեռածիս պարզևի՛ր, գթա՛ծ, անապական կյանք
 Ու կործանվածիս ծանր պարտքերից՝ քո փրկությունը:
 Բան Բ

*
* *

Սրտիս դառնահեծ հառաչանքների
 Վայն ու ողբաձայն աղաղակները
 Վերընծայում եմ քեզ, ո՛վ զաղտմատես.
 Եվ իմ սասանված մտքի ճենճերող
 Իդձերի պտուղն ու բերքը դրած
 Անձս տոչորող թախծի կրակից՝
 Կամքիս բուրվառով առաքում եմ քեզ:
 Սակայն կնայես նրան, ո՛վ գթած,
 Ու կհոտոտես ավելի սիրով,
 Քան պատարագն այն բոլորանվեր,
 Որ մատուցվում էր ծխով թանձրաբարդ:
 Ընդունիր հյուսվածքն իմ այս կարճատոտ ու սեղմ խոսքերի
 Բարեհաճորեն, ոչ թե բարկությամբ:
 Բանական զոհիս մտքի խոհածուսի սենյակի խորքից
 Սրտիս անձկությամբ ելած կամավոր այս մկերը թող,
 Ողջակիզվելով պարարտակուտակ ճարպիս զորությամբ,
 Բարձրանա ու քեզ հասնի անհապաղ:
 Եվ աղերսախառն դատի մտնելս քեզ հետ, ո՛վ հզո՛ր,
 Թող քեզ տաղտկալի չթվա հանկարծ,
 Ինչպես ձեռքերի կարկառումն ի վեր
 Ամբարշտացած Հակոբի ցեղի,
 Որի դեմ բողոք գրեց Եսայից
 Կամ թե սաղմոսի առակում հիշված
 Անիրավությունը Բաբելոնի,
 Այլ ընդունելի թող լինի այն քեզ,
 Ինչպես Սելովի խորանի անուշ խնկաբուրումը,
 Դավթի նորակերտ խորանի՝ հանուն այն տապանակի,
 Որն իր վերստին գերեղարձությամբ
 Վերագտնումն է խորհրդանշում,
 Ասես, նաև իմ կորուսյալ հոգու:

*
* *

Ընտիր քարության ո՛վ անկշռելի անսահմանություն,
 Արդ ընդունեցիր քո ընտրյալներից
 Դու քեզ արժանի ու ախորժելի բուրր կենդրուկի,
 Մինչդեռ ես այստեղ, ըստ արժանիքիս,
 Ստացա միայն դրա համեմատ
 Բազմակրկնակի բարդված պարսավեր:
 Բայց եթե այսպես անքիժներն էին նաև աղերսում,
 Հապա ինձ համար, որ դժնաբարո

Բոլոր մարդկանցից խիստ վրիպեցի,
 Նախատիքների ի՞նչ տողեր հյուսեմ:
 Անստակ վարքով մոլոր ընթացա հաճց վայրենամիտ.
 Շրթունքներովս համարձակվեցի
 Բարբառել անվերջ երկասեր խոսքեր.
 Խեղճի մոլությամբ սիրանարվեցի
 Ամոթալի ու զագիր գործերին.
 Փքվեցի անգուսպ, վերացա ես, որ
 Քիչ հետո մահվան հույն եմ իջնելու.
 Գոռոզացա ու քարձրամտեցի,
 Երբ նույնիսկ հոգուս գրավականի՝
 Շնչատությանս, տնօրենը չեմ:
 Ամբարշտացա փոշիս շնչավոր,
 Սնալարձեցի կալս ձայնավոր,
 Խիստ հույարացա հույս անարգված,
 Հույժ խրոխտացա մոխիրս մերժելի,
 Բազուկ բարձրացրի բաժակս փշրելի.
 Տարածվեցի շա՛տ, շատ ավելի, քան վեհագույնները.
 Սուկյան ետ մղված՝ նորից ինձս իմ մեջ ներամփոփվեցի:
 Բարկության բոցով ժպրհեցի ցուլս տիղմիս բնական.
 Մեծամտեցի որպես մի անմահ
 Ես, որ մահվան եմ եմթակա անբան շորքոտանու պես.
 Գիրկս բաց արի այս կյանքի սիրուն.
 Դեմքի փոխարեն թիկունք դարձրի քեզ.
 Մտքիս թռիչքով մույթ խորհուրդների միջով սլացա.
 Անարատ հոգիս մարմնիս փրկությամբ հավետ վատեցի.
 Զախ կողմիս ուժգին գորոթյուն տալով՝
 Տկարացրի աչիս ուժերն ու հաղթեցի նրանց.
 Հոգածությունդ իսկ տեսա իմ հանդես,
 Որ այստեղ գրել չեմ կարող, սակայն չափառեցի.
 Վայրի հավքի պես դեպի վաղեմի
 Սովորությունն իմ նորից սլացա,
 Ինչպես երբեմն Եփրեմի մասին ասել է Օլսեն.
 Աղոթքիս պահին նույնիսկ այս կյանքից չկտրվեցի.
 Մտքիս երիվարը ոտքի կանգնած չափանցի ես
 Բանականության երասանակով.
 Հին չարիքների վրա քարդեցի նորեն ինքնաստեղծ.
 Ըստ Հորի խոսքի, իմ իսկ ձեռքերով
 Պրկվեցի ծանր ու անտանելի անուրների մեջ,
 Ըստ Երեմիայի, ինքս իմ ձեռքով
 Անկարկատելի մի գոգնոց դարձա.
 Անանվանելի մի վիժվածքի պես, ըստ առակողի,
 Մարդահամարից իսպառ ջնջվեցի...

Բան Ի, Բ

* * *

Ինչպե՞ս համարեմ ես ինքս ինձ մարդ,
 Երբ կարգն եմ դասված տմարդիների,
 Կամ ինչպե՞ս պիտի բանական կոչվեմ,
 Երբ հիմարությամբ իմ՝ անբանների կցորդն եմ միայն.
 Ինչպե՞ս կարող եմ անվանվել տեսնող,
 Ե՛ս, որ իմ ներքին լույսերն եմ մարել,
 Եվ ինչո՞ւ պիտի ունենամ համբավ զգայականի,
 Երբ իմացության դռներս եմ փակված,
 Ինչո՞վ կարող եմ ցույց տալ ինձ որպես անեղծի տիպար.
 Երբ անձնասպան եմ եղել հոգեպես:
 Նույնիսկ շարժուն ու շնչավորական

Իրավունք չունեմ ինքս ինձ կոչելու,
Թո՛ղ թե հոգևոր և կամ քանական:
Անոթների մեջ անպետքագույնն եմ,
Անարգագույնն եմ որմնաքարերից,
Արհամարհվածն եմ կանչվածների մեջ,
Վատթարագույնը՝ հրավիրյալներից:
Սուրբ Երեմիայի առածի նման,
Բռնված ցավերով ու տանջանքներով Երուսաղեմի՝
Ահաբեկվել ու սմբել եմ մահվան արհավիրքներով,
Բուրբից լքված ու անմխիթար.
Խամրեցիմ օրերս հեծեծանքներից
Ու տարիներին ընթացքը՝ անվերջ հառաչանքներից,
Ըստ սաղմոսողի նվագերգության.
Ջերթ ասվին՝ ցեցից և փայտը՝ որդից,
Ըստ իմաստունի, ես էլ հալվեցի խիթերից սրտին,
Ինչպես սարդոստայն իսպառ մաշվեցի,
Ըստ սաղմոսողի, ու դարձա խոտան.
Ըստ Մարգարեի, ինչպես փութանցիկ առավոտվա ամպ
Ու վաղորդյալն ցող՝ անհետ ցնդեցի:

Բան Իս, Գ

*
* *

Աղբյու՛ր գթության և ողորմության,
Բարեպարզ և տե՛ր, որդի բարձրյալի Հիսուս Քրիստո՛ս,
Գթա՛, խնայի՛ր ու մարդասիրի՛ր,
Նայի՛ր վտանգիս, հայացք ձգի՛ր իմ սրտաբեկության,
Թշվառությանս վրա խոնարհվի՛ր,
Տե՛ս տազնապներս ու տվայտանքներս անդարմանելի,
Կարեկից եղի՛ր իմ կորստաբեր տառապանքներիմ,
Շոշափի՛ր ախտերս ամենաթշվառ՝ բժշկի նման,
Քաղցրությամբ ականջ դի՛ր ողորմագին հեծեծանքներին,
Լսի՛ր խորախոր անդուհից շիրիմի
Մահվան անմոռուկ հառաչանքներս.
Թո՛ղ ամենալուր քո լսելիքը թափանցի հլուծված
Անդամներին ձայնը պաղատագին:
Եվ քանզի հոգին՝ կենդանությանս
Գրավականը, անապական է,
Թո՛ղ որ անալալ լինի նաև քո սերը գթառատ.
Հեզությամբ կցորդ եղի՛ր դժնդակ տկարությանս,
Մեռած պատկերին դեմ ոխ մի՛ պահիր,
Դատաքննության մի՛ մտիր անշունչ կերպարանքիս հետ,
Խեղճ մահատանջիս վրա հարվածներ, մորից մի՛ տեղա՛,
Ջարդված խեցեղեն անոթիս դեմ մի՛ մարտնչիտ ուժգին,
Բարկությունների մի՛ կրկնիր վճռով խոշտանգվածիս դեմ,
Մի՛ բեր պատուհաս ավեր շինվածքիս,
Ապանված շանս էլ մի՛ քարկոծիր,
Ջախջախված լվիս վրա սաստկապես դու մի՛ որոտա,
Անպատված հոգիս վրա մի՛ իբրև
Ամբարհավաճի մոնչա ուժգին,
Մերժելի մոխրիս մի՛ կանչիր դատի,
Ցնդելի սիռուս մի՛ համարիր դու քեզ ընդդիմամարտ,
Տրորված տիղմիս մի՛ հաշվիր ոսոխ,
Եղուկ անարգիս մի՛ վանիր իբրև բռնամարտիկի,
Նետվելիք կոճղիս մի՛ պահիր իբրև գեհեմի ճարակ
Եվ բազմապատիկ այսքան խոսքերով հեզ կշտամբվածիս
Դու էլ վերստին մի՛ հանդիմանիր:

ԿԶ, Բ



HA-9622

ՄԱՅՐ ԱԹՈՒՈՒՄ

* *

* *

Հունվարի 21-ին՝ կիրակի. — Բ կիրակի զվե՛ր ձնեղեան.

Մայր տաճարում պատարագեց արժանապատիվ տ. Մկրտիչ քհն. Մկրտչյանը, քարոզեց հոգ. տ. Շնորհք վրդ. Գասպարյանը՝ «Հոգին է կենդանարար, մարմին ինչ ոչ օգնէ» (Հովհ. Զ 64) քնարանով:

* *

* *

Հունվարի 28-ին՝ կիրակի. — Գ կիրակի զվե՛ր ձնեղեան.

Մայր տաճարում պատարագեց և քարոզեց հոգ. տ. Ներսես ծ. վրդ. Պողոսյանը՝ «Ես եմ հացն կենդանի» (Հովհ. Զ 51) քնարանով: Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգիստ՝ նոր հանգուցյալ զեր. տ. Վարդան եպս. Տեր-Սահակյանի հիշատակին:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* *

* *

Փետրվարի 2-ին՝ ուրբաթ. — Երեկոյան ժամը 6-ին, Վեհափառ Հայրապետի րարձր նախագահությամբ ներքո, զումարվեց Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը, ուր քննության առնվեցին և հաստատվեցին 1968 թվականի մարտի 28-ից ապրիլի 5-ը Պրագայում քրիստոնեական եկեղեցիների խաղաղության համագումարին և հուլիսի 4-ից 20-ը Ուփսալայում եկեղեցիների համաշխարհային խորհրդի 4-րդ համաժողովին հայ եկեղեցու մասնակցության հարցերը:

Վեհափառ Հայրապետի առաջարկով Գերագույն հոգևոր խորհուրդը արձանագրեց մասնավոր եկեղեցական պատվիրակությունների ուղարկումը երկու համաժողովներին:

Փետրվարի 4-ին՝ կիրակի. — Դ կիրակի զվե՛ր ձնեղեան.

Մայր տաճարում պատարագեց արժանապատիվ տ. Հովհաննես քհն. Մարությանը, քարոզեց հոգ. տ. Ներսես ծ. վրդ. Պողոսյանը՝ «Ես եմ հովիւն քաջ հովիւ քաջ զանձն իւր զնէ ի վերայ ոլխարաց» (Հովհ. Ժ 11) քնարանով:


* *

Փետրվարի 7-ին՝ չորեքշաբթի. — Այսօր Մայր Աթոռ ս. Էջմիածին ժամանեց Ռումինիայի և Բուլղարիայի թեմերի քարեխնամ առաջնորդ զեր. տ. Տիրայր եպս. Մարտիկյանը, Ողանավակայանում սրբադան հորը զմավորեցին հոգ. ա. Նարեկ վրդ. Շաքարյանը և շնորհունակ Հովհաննես սրկ. Հակոբյանը: Մայր տաճարում իր աղոթքը կատարելուց հետո տ. Տիրայր եպիսկոպոսը Վեհափառում ընդունվեց Վեհափառ Հայրապետի կողմից:

* *

Փետրվարի 9-ին՝ ուրբաթ. — Երեկոյան ժամը 6-ին, Վեհափառ Հայրապետի րարձր նախագահությամբ ներքո, զումարվեց Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը:

Գերագույն հոգևոր խորհրդի նիստին հրավիրված էր նաև ներկա լինելու ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Ռումինիայի և Բուլղարիայի թեմերի առաջնորդ զեր. տ. Տիրայր եպս. Մարտիկյանը, որը ղեկուցեց 1967 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին, Վեհափառ Հայրապետի արտոնությունով և Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ զեր. տ. Սերովբե արքեպ.



Մանուկյանի հրավերով, Փարիզ, Լիոն, Մարսել և Լոնդոն իր հովվական այցելությունների և տպավորությունների մասին:

Գերադույն հոգևոր խորհուրդը զոհունակությամբ արձանագրեց ղեկ. տ. Տիրայր եպս. Մարտիկյանի բանավոր տված ղեկույցագիրը: Նիստի վեցերում Վեհափառ Հայրապետը, հանուն ժողովի, իր պոհունակությունը հայտնեց ղեկ. տ. Տիրայր եպիսկոպոսին՝ մաղթելով նրան լավագույն հաջողություններ իր պաշտոնավարության մեջ:

* * *

Փետրվարի 11-ին՝ կիրակի.— հ կիրակի զվնի ծննդեան:

Մայր տաճարում պատարագեց հոգ. տ. Մուշեղ վրդ. Պետիկյանը և քարոզեց «Ամենասուրբ Երրորդութեանն ընտրեալ ծառայ և հաւատարիմ, յաղթող սպառազէն և քաջ նահատակ, երազահաս սուրբդ Սարգիս շնորհաց օթեան» (Շար.) քնարանով:

Այսօր առավոտյան Մայր Աթոռից և Վեհափառ Հայրապետից հրաժեշտ առնելով, իր պաշտոնատեղին մեկնեց հոգ. տ. Շնորհք վրդ. Գասպարյանը, որը շուրջ երկու ամիս ուխտավորաբար գտնվում էր Մայր Աթոռում:

* * *

Փետրվարի 13-ին՝ ԼՐԵԼՂԱՐՐԻ— Երեկոյան Մայր տաճարում տեղի ունեցավ Տյառնդուռաջի նախատոնակը՝ հանդիսադրությամբ Վեհափառ Հայրապետի, Եկեղեցական երգեցողությունները կատարեցին հոգևոր ճեմարանի սաները:

Ժամերգությանը հերկա էին բաղում հավատացյալներ և հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը:

Ժամը 7-ին Վեհարանի բակում, ի ներկայությամբ Մայր Աթոռի միաբանության, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմի և ուսանողության, Վեհափառ Հայրապետը վառեց Տյառնդուռաջի ավանդական խարույկը, որի շուրջ ուսանողները երգեցին և ուրախացան:


Ժամը 8-ին Վեհափառ Հայրապետը քուրեհաճեց ընթրիքին իրեն սեղանակից դարձնել Մայր Աթոռի միաբանությանը և հոգևոր ճեմարանի դասախոսական կազմին:

* * *

Փետրվարի 14-ին՝ ՆՐԵԼՂԱՐՐԻ.— Տեսարեղառաջ:

Մայր տաճարում պատարագեց արժանապատիվ տ. Նշան քհն. Բեյբերյանը:





Ս Փ Յ Ո Ւ Ռ Զ Ո Ւ Մ

ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՄԻՍ ՎԻՇՆՆԱՅՈՒՄ

Վիեննայի Աֆրո-Ասիական ինստիտուտը հոկտեմբեր ամսից 1867—1868 տարեշրջանի համար ներկայացնում է ամենամսյա հայտագրերի մի ծրագիր՝ «Ժողովուրդների մշակույթ» անվան տակ։ Այս ծրագրի նպատակն է ավստրիացի հասարակությանը ներկայացնել տարբեր ժողովուրդների պատմությունն ու մշակույթը, և ամեն ամիս երկու օր հատկացվում է որևէ ժողովրդի պատմությանն ու մշակույթին։

Դեկտեմբեր ամիսը նվիրված էր հայ մշակույթին և պատմությանը։

Այս երեկոյներից, դեկտեմբերի 6 և 20, մասնակցում էին ամբողջ Ավստրիո հայ գաղութը, «Հայ եկեղեցական միություն» և «Հայ ուսանողներու մշակութային ընկերություն»-ը։

Առաջին երեկույթին բացատրություններով ցուցադրվում են լուսանկարներ ա. Էջմիածնի տաճարի, ա. Հոփիսիսի տաճարի, Գեղարդի, Գառնիի, Օշականի եկեղեցիների, Երևանի Մատենադարանի ընտիր ձեռագրերի նկարները։ Հայտագրի երկրորդ մասում կատարվում են վեց երգեր Կոմիտաս վարդապետի, Ալեքսանի և Կանայանի ստեղծագործություններից՝ օր. Անձել Կարասյետյանի կատարմամբ, ընկերակցությամբ դաշնակահար Ռաֆֆի Արմենյանի։ Արմեն Գարամանյանը արտասանում է Ավ. Իսահակյանի «Արարատին» քերթվածը և բացատրում գերմաներենով։ Գաղափար տալու համար հայոց լեզվի հնչյունային արտասանության մասին, նա արտասանում է նաև Հերման Հեսսեի «Մշուշին մեջ» քերթ-

վածը՝ Ս. Աշոյանի թարգմանությամբ (Բեյրութ, 1848)։

Երեկոյի վերջում տիկ. Սեդա Վեպորը դաշնամուրի վրա նվագում է Ա. Խաչատրյանի Տոկատան, որից հետո, ստեղծված մտերմիկ մթնոլորտում, օտար և հայ ներկայացրը հյուրասիրվում են հայ տիկնանց կողմից պատրաստված հայկական համադամ ուտեփքներով ու զովացուցիչներով։

Հայկական մշակույթի ամսվա երկրորդ երեկոյին կարդացվում են երեք դասախոսություններ։

Առաջինը խոսում է դոկտ. Վ. Յ. Պալըզյանը գերմաներենով՝ «Հաս-թուրքական հարաբերություններ» հարցի շուրջը։ Նկարագրելուց հետո, թե երկու ժողովուրդների կապերը 18—20-րդ դարերի ազգայնականության շարժումների հետևանքով այդքան սուր և դժբախտ բնույթ կրեցին, եզրակացնում է, որ երկու ժողովուրդներն էլ իբրև մնացուց դրացիներ, գոյություն ունեցող հարցերի պատշաճ լուծումից հետո, պիտի գտնեն համերաշխության ճամփան։

Երկրորդ դասախոսությունը կարդում է Վիեննայի հայոց հոգևոր հովիվ տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը՝ գերմաներեն լեզվով՝ հյոթ ունենալով հայ եկեղեցու կատարած պատմական դերը ժողովրդի կյանքում։ Բանախոս մարդապետը օրինակներով ցույց է տալիս, թե ի զին ինչպիսի աննկարագրելի զոհողությունների, հաւ ժողովուրդը կապված է մնազել իր մայրենի եկեղեցուն, գիտակցելով, թե իր քաղաքական ու մշակութային արժեքները ամբողջական են միայն նրանով։

Վերջին դասակարգումներ կարգում է պատմական գիտություններու առկա ուսանող Ժ. Սաթյատնիկը, խոսելով օտարների՝ հայերի վերաբերյալ ունեցած ծանոթությունների և կարծիքների մասին: Ելնելով իր անձնական տպավորություններից, նա առում է, որ հասարակ եվրոպացի հայերի մասին շատ քիչ երբեմն էլ միակողմանի կարծիք ունի: Մյուս կողմից նա շեշտում է, որ պատմությամբ ու մշակույթով զբաղվողներ շատ մոտից ծանոթ են հայոց պատմությանը, գրականությանը, ճարտարապետությանը ու երաժշտությանը, և հայ ժողովրդին

համարում են աշխատանք, տաղանդավոր և լատաղության ձգտող ժողովուրդ:

Երեկույթի եզրափակմանը ամփոփելով հայկական ամսի նվիրված նյութերն ու տպավորությունները Աֆրո-Ասիական ինստիտուտի գործադիր-տնօրեն Ժ. Ե. Բիստերը շնորհակալություն է հայտնում մասնակիցներին և ընդգծում նման միջոցառումների կարևորությունը հայ ժողովրդի և այլ ժողովուրդների պատմությունը, մշակույթն ու կենցաղը ներկայացնելով միջազգային ու շաղրությանը:

**ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈՋ ԿՐԵՏԵԻ ԻՐԱՔԼԻՈՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՅՈՑ
Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ**

Եկեղեցիների համաշխարհային խորհրդի մոտ Մայր Աթոռի մշտական ներկայացուցիչ և Վիեննայի հայոց հոգևոր հովիվ հոգ. տ. Մեսրոպ Ժ. վրդ. Գրիգորյանը 1887 թ. օգոստոսի 21-ին մասնակցել է Կրետեի Իրաքլիոն քաղաքում Եկեղեցիների համաշխարհային խորհրդի համաժողովին:

Տ. Մեսրոպ Ժ. վարդապետը այս առթիվ պատարագել է նաև տեղի հայոց ս. Հովհաննես եկեղեցում և, հաղորդելով Ամենայն Հայոց Հայրապետի ողջույններն ու օրհնությունները, թանին կենաց քարոզությամբ՝ մխիթարել է հայ համայնքին:





Ա. ՀԱՏԻՏՅԱՆ

ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ա. ԷՋՄԻԱՇՆԻ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎՐԱ*
(1920—1967 թթ.)

ԽՈՐԵՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄՈՒՐԱԴԱԲԵԳՅԱՆ
(1932 ճուլնբեր—1938 ապրիլ)

Տեղակայության շրջան

1930 թվականի մայիսի 8-ին, Գևորգ Ե-ի մահը օրակարգի վրա էր դնում Մայր Աթոռում ազգային-եկեղեցական ժողով հրավիրելու և նոր կաթողիկոսի ընտրության հարցերը:

Գևորգ Ե-ի մահից անմիջապես հետո, տ. Խորեն արքեպ. Մուրադբեգյանը, որը 1923 թվականին հայրապետական մասնավոր կոնդակով նշանակվել էր Ամենայն Հայոց կաթողիկոսի տեղակալ և նախագահող անդամ Գերագույն հոգևոր խորհրդի, 1930 թվականի մայիսից ստանձնում էր իր պատասխանատու և ծանր պաշտոնը, իր ժողովրդի և եկեղեցու նկատմամբ պարտքի ու պարտականության խորը գիտակցությամբ, պաշտոն, որը նա վարում էր մեծ ձեռնհասությամբ և արժանավորությամբ շուրջ երկու և կես տարի, մինչև նոր կաթողիկոսի ընտրությունը՝ 1932 ճուլնբեր 12, համերաշխ մթնոլորտում, սերտ և սեռն համագործակցությամբ Գերագույն հոգևոր խորհրդի:

Երուսաղեմի հայոց պատրիարք տ. Թոր-

գոմ արքեպ. Գուշակյան տ. Խորեն արքեպիսկոպոսի տեղակայության շրջանի գործունեության մասին գրում է. «Մայր Աթոռ պատվական տեղակալը՝ տ. Խորեն արքեպ. Մուրադբեգյանը, որ քաջի հոգեղույս Տ. Գևորգ Ե-ի վերջին տարիներուն միջոցին հայտնաբերած իր արդյունավոր գործունեությունեն, ամոր վախճանումեն հետո ևս, Աթոռ պարապության երկուքուկես տարիներուն ընթացքին, լիովին արժեքուցած էր փորձ, կիրք, գործունեա, ազգի և եկեղեցվո սիրով տոգորված և լավագույն ձեռնհասությունններով օժտված հոգևորականի իր առավելությունները» («Ախոն», 1932, էջ 373):

Հայ եկեղեցու մի այլ կարկառուն դեմք՝ Կիլիկյան Աթոռի Տ. Բաբգեն և աթոռակից կաթողիկոսը նույնպես քաջի վկայություն էր բերում տ. Խորեն արքեպիսկոպոսի տեղակայության շրջանի գործունեությանը, նշելով, որ նա «իր տեղակալի պաշտոնը կատարեց ձեռնհասությամբ և վայելչությամբ» («Հասկ», 1932, էջ 51)՝ արժանաճալով քովանդակ հայության վստահությանը, համակրանքին և հայրենի կառավարության սիրալիր ուշադրությանը:

* Ճարտանկված «Էջմիածին» ամսագրի 1967 թվականի ժԲ և 1968 թվականի Ա ռամարներից:

Լուսահոգի Գևորգ Ե-ի թաղումից և ավանդական սգո շրջանի ավարտից հետո, տեղակալ տ. Խորեն արքեպիսկոպոսի և Գերագույն հոգևոր խորհրդի գործունեության հիմնական ու գլխավոր նպատակը, Մայր Աթոռի ընթացիկ գործերի ղեկավարության հետ, վեց ամսվա ընթացքում, ս. Էջմիածնում ազգային-եկեղեցական ժողովի հրավիրումն ու նոր կաթողիկոսի ընտրության նախապատրաստական աշխատանքներն էին:

Ըստ 1925 թվականի հոկտեմբերի 22-ին Մայր Աթոռում Գևորգ Ե-ի կաթողիկոսի կողմից հաստատված «Ազգային-եկեղեցական ժողով գումարելու հատուկ կանոնադրության» 22-րդ հոդվածի, «Նոր կաթողիկոսի ընտրությունը տեղի է ունենում կաթողիկոսի մահվանից ոչ ուշ, քան վեց ամիս հետո»:

Հայրապետական հրահանգի համաձայն տեղակալ տ. Խորեն արքեպիսկոպոսն ու Գերագույն հոգևոր խորհուրդը, հանգամանորեն քննելով Մայր Աթոռում ազգային-եկեղեցական ժողով հրավիրելու հետ կապված հարցերը, որոշում էին ընդունում 1930 թվականի հոկտեմբերի 26-ին Մայր Աթոռում հրավիրել ազգային-եկեղեցական ժողով:

Գերագույն հոգևոր խորհրդի սույն որոշումը, 1930 թվականի հուլիսի 18-ին, Մ. 863 պաշտոնական գրությամբ, տեղակալի և ժողովի մնացուց նախաձեռնեց տ. Բագարատ, տ. Մատթեոս, տ. Գարեգին և տ. Գևորգ արքեպիսկոպոսների ստորագրություններով, ուղարկվում էր որպես «Շրջաբերական» թուղթ թեմակալ առաջնորդներին, ուր ասվում էր.

«Հանգուցյալ երջանկահիշատակ Տ. Տ. Գևորգ Ե ընդհանրական կաթողիկոսի թաղման սգահանդեսը՝ ըստ ներման ժամանակի՝ ամենայն շուքով կատարելուց հետո. հայրապետական տեղակալի և Գերագույն հոգևոր խորհրդի էական հոգսն էր ջանք ու աշխատանք չխնայել հայրապետական Աթոռը երկար թափուր չթողնել, այլ վեց ամսվա ընթացքում գումարելով ազգային-եկեղեցական ժողով՝ ընտրել տալ կաթողիկոս Ամենայն Հայոց, ինչպես և ազգային-եկեղեցական ժողով գումարելու հայրապետահաստատ կանոնադրության 22-րդ հոդվածով նախատեսված է»:

Շրջաբերականում առաջարկվում էր ազգային-եկեղեցական ժողովի հետևյալ օրակարգը.

«Ա) Ընտրություն Ծայրագույն Պատրիարք-կաթողիկոսի Ամենայն Հայոց:

Բ) Ընտրություն տեղակալի Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք-կաթողիկոսի:

Գ) Ընտրություն ս. Էջմիածնի Գերագույն հոգևոր խորհրդի անդամների:

Ի) Ազգային-եկեղեցական տանհամարության քննություն և հաստատություն:

Ե) Զեկուցում հայոց ազգային եկեղեցու քարեկոթիկության մասին:

Զ) Ա. Էջմիածնի և նորա հոգևոր, կրթական ու կուլտուրական հարակից հաստատությունների նախահաշվի վավերացում»:

Գերագույն հոգևոր խորհուրդը նվիրապետական Աթոռներից գրած իր 1930 թվականի հուլիս 18 թվակիր և № 825 պաշտոնական գրության մեջ անհրաժեշտ էր համարում ս. Էջմիածնում գումարվելիք ժողովում ներկայությունը նաև նվիրապետական Աթոռների զահակալներին, ըստ 1925 թվի կանոնադրության 5-րդ և 6-րդ հոդվածի տրամադրության, ուր ասված էր.

Հոդված 5. Տանց Կիլիկիո կաթողիկոսը, Երուսաղեմի և Կ. Պոլսի հայոց պատրիարքները ժողովի նախաթոռ անդամներն են:

Հոդված 6. Ամենայն Հայոց կաթողիկոսի հիվանդության դեպքում, ազգային-եկեղեցական ժողովին նախագահում են Սսու կաթողիկոսը կամ Երուսաղեմի պատրիարքը. սոցա բացակայության դեպքում նախագահում է Ամենայն Հայոց կաթողիկոսի տեղակալը:

Նվիրապետական Աթոռների զահակալներին ուղղված Գերագույն հոգևոր խորհրդի ուղերձը ավարտվում է հետևյալ գեղեցիկ խորհրդածություններով ու սրտատուչ քարեմաղթություններով.

«Պարտ է ամենայն պատգամաւորաց պատրաստ գտանիլ աստ՝ ի Մայր Աթոռոջ, ի 26-րդ աւուր հոկտեմբեր ամսոյ այսր 1930 ամի, վասն ընտրելոյ զարժանաւոր յաջորդ սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի առ ի կառավարել զեկեղեցիցն Քրիստոսի և պաշտօնացուցանել զհայրապետականն Աթոռ, որպէսզի ընտրեալ Պետն և Գլուխն Հայաստանեայց ս. եկեղեցոյս վարեսցէ զհայրապետական իշխանութիւնն յամենայնի ըստ անտեղիւր անտարանական վարդապետութեան և ըստ եկեղեցական կարգաց սրբոց Հարց և ազգային-եկեղեցական ժողովոց՝ ի պարծանս յութեան ազգիս, ի պաւծառութիւն եկեղեցոյ մերոյ սրբոյ:

Առաջի աչաց ունելով և կշռադատելով զամենայն հանգամանս Հայաստանեայց առաքելական ս. եկեղեցոյս, նաև զազգային-կրօնական, զքաղաքական և զկանոնական պարտիս կաթողիկոսական պատգամաւորաց հոգևորականաց և հարազատ և հավատարիմ զավակաց Մայր Աթոռոյս, Գերագույն հոգևոր խորհուրդս յոյժ անհրաժեշտ համարէ զներկայութիւն Ձեր և պատգամաւորաց և զանմիջապէս մասնակցութիւն ի

գործ ընտրության Մարագոյն Պատրիարք-կաթողիկոս Ամենայն Հայոց և ի վճռահատումն խնդրոց, յիշատակելոց յօրակարգի առաջին ազգային-եկեղեցական ժողովոյ:

Ներկայութիւն Ձեր աստ՝ ի Մայր Աթոռոջ, յազգային-եկեղեցական համագումարի, լիցի, այդարեւ, միայնարութիւն և ուրախութիւն վասն Գերագոյն հոգևոր խորհրդոյս և միաբանական ուխտի սրբոյ Աթոռոյս: Իսկ եթէ անհնարին լիցի այդ, յայն դէպս բարեհաճեալք առաքել զհոգևորական ներկայացուցիչ Ձեր:

Ի վերջ քանիցս Գերագոյն հոգևոր խորհուրդս հանգեալ միաբանական ուխտի սրբոյ Էջմիածնի ջերմագին աղոթիք առ Աստուած հայցել զանասանութիւն և զհաստատութիւն վասն Մայր Աթոռոյս և բնդհանրական հայրապետութեան հայոց, զայս ծառայութիւն վասն զարաստանեաց ս. եկեղեցւոյ, զշինութիւն և զբարգաւաճումն վասն Հայաստան աշխարհիս, զերջանիկ կեանս և զյաջողութիւն ամենայն բարեկապտակ գործոց վասն ամենայն ժողովրդականաց հայազնէից, պահպանելով զամենեսեան ընդ հովանեաւ ամենագոր Աջոյ իւրոյ ի խաղաղութեան և յերջանկութեան, ամենա:

Մայր Աթոռում ազգային-եկեղեցական ժողով հրավիրելու և կաթողիկոսական ընտրություն կատարելու բարի լուրը երախտագիտութեամբ և ուրախությամբ էր ընդունվում յովանդակ հայ ժողովրդի կողմից:

Ափսյուքի հայ մամուլը ևս, իր հերթին,

հանգամանորեն զբաղվում էր ս. Էջմիածնում ժողովի գումարման և կաթողիկոսական ընտրության հրատապ հարցերով:

1925 թվականի կանոնադրության և Գերագոյն հոգևոր խորհրդի վերոհիշյալ հրահանգի համաձայն, մվիրապետական Աթոռներում և թեմերում մախանձախնդրությամբ ժողովներ էին գումարվում պատգամավորների ընտրության համար: Ափսյուքի հայությունը ապրում էր ս. Էջմիածնի կյանքով, նրա ապագայով:

Սակայն 1980 թվականի հուլիսից մինչև սեպտեմբեր անցնող ամիսների ընթացքում Գերագոյն հոգևոր խորհուրդը փաստերի հիման վրա նկատի ունենալով, որ սփյուռքի հոգևորական և աշխարհական պատգամավորների Մայր Աթոռ ժամանումը հանդիպում է վիզայի և արտասահմանի տեղական որոշ դժվարությունների, օրինակ՝ այդ օրերին Լիբանանի, Սիրիայի, Մեթմավոր Արևելքի և այլ երկրների «քաղաքացիներուն համար սկզբունքային արգելք կա խորհրդային երկրներ ճամփորդելու» («Հասկ», 1982, էջ 49), որոշում է ժամանակավորապես, մինչև այդ դժվարությունների հարթումը, հետաձգել հոկտեմբերի 26-ին Մայր Աթոռում գումարվելիք ազգային-եկեղեցական ժողովը:

1980 թվականի սեպտեմբերի 11 թվակիր և № 1075 շրջաբերականով Գերագոյն հոգևոր խորհուրդը հայտնում է ժողովի հետաձգման մասին ըստ հետևյալի.

Բոլոր թեմակալ առաջնորդներին

Գերագոյն հոգևոր խորհուրդը գրությամբ տալիս է Ձեզ տարվույս հոկտեմբերի 26-ին գումարվելիք ազգային-եկեղեցական ժողովի հետաձգման մասին կազմած արձանագրության պատճենը ի գիտություն և ի հրահանգություն:

Գերագոյն հոգևոր խորհուրդը ի նկատի առնելով, որ արտասահմանյան պատգամավորների վիզեի աղթով գրագրությունները կարող են երկարել և հետավոր վայրերից անկարող կլինեն արտասահմանի պատգամավորները ժամանակին վիզա ստանալ և հոկտեմբերի 26-ին ներկա լինել ազգային-եկեղեցական ժողովին, մինչդեռ Գերագոյն հոգևոր խորհուրդը ցանկալի է համարում ազգային-եկեղեցական ժողովը անպայման լրիվ կազմով գումարել, ուստի նպատակահարմար է դատում ազգային-եկեղեցական ժողովի գումարումը հետաձգել:

Այս մասին հայտնել նախ կիլիկիոյ շնորհազարդ կաթողիկոսին, Երուսաղեմի և Կ. Պոլսի անգնապատիվ պատրիարքներին և

արտասահմանյան բոլոր թեմակալ առաջնորդներին, որ առանց անապարանքի, համաձայն տրված հրահանգների կատարել ազգային-եկեղեցական ժողովին մասնակցելու համար պատգամավորների ընտրությունը և բոլոր պատգամավորների (թե՛ հոգևորական և թե՛ աշխարհական) ցուցակը ուղարկել Գերագոյն հոգևոր խորհրդին և սպասել ազգային-եկեղեցական ժողովի գումարման նոր ժամկետ նշանակելուն:

Ժողովը հետաձգելու մասին Գերագոյն հոգևոր խորհրդի պատճառաբանություններն ու որոշումը տրամաբանական էին և ընդունելի:

Էջմիածնի ժողովի հասկանալի պատճառներով հետաձգումը սակայն սփյուռքում որոշ շրջանակներ անմիջապես օգտագործեցին դիտումնավոր հերյուրանքներով հակա-Էջմիածնական և հակահայաստանյան պայքարի բորբոքման համար՝ առեղծելով ավելորդ մտավախություններ, կասկածներ և տագնապայից կացություն հանրային կար-

ծիքի մեջ՝ փորձելով պղտորել նաև հայ ժողովրդի ուրախության ու խանդավառության ակունքները և քանդել կաթողիկոսական ընտրության շուրջ ստեղծված միասնականությունը:

Հատկապես պոլսահայ թերթերը ավելի շատ էին աղմկում հրապարակել, Մայր Աթոռը արտասահման փոխադրելու հիվանդագին առաջարկով:

Բարեբախտաբար, սակայն, զգաստ, խոհուն ու շրջահայաց էր հայ մամուլի մեծամասնությունը ու կենդանի՝ հայ ժողովրդի ողջմտությունը:

Մայր Աթոռը արտասահման փոխադրելու տխուր փորձերը ստացան իրենց արժանի հակահարվածը:

Առաջինը՝ Երուսաղեմի հայոց պատրիարքության պաշտոնաթերթ «Սիոն» ամսագիրը՝ իր կորովամիտ և համարձակախոս խմբագրապետ տ. Բաբգեն եպ. Կյուլեսերյանի գլխավորությամբ, դատապարտեց ախտավարակ այդ հոգեբանությունը, շեշտելով, որ Գևորգ Ե-ի մահը «առիթ» կընծայե հայ մամուլին՝ զբաղվելու Անոր հաջորդին ընտրության վերաբերյալ խնդիրներով. մասնավորաբար Կ. Պոլսի հայ թերթերը եռանդուն կխոսին այդ խնդիրներու վրա: Ծառ փափուկ է կացությունը և հարկ է, որ հայ մամուլը մեծ խոհեմությամբ արտահայտվի ինչպես Ամենայն Հայոց Հայրապետի հաջորդի, նույնպես Երուսաղեմի պատրիարքի ընտրությանը մասին:

...Կ. Պոլսի հայ թերթերուն մեջ ակնարկություններ մը եղան Մայր Աթոռը Երուսաղեմ փոխադրելու մասին: Այսպիսի դիտողություն մը նույնիսկ մտքե անցնելու չէր, թող հրապարակավ արտահայտվիլը:

Պահ մը Արտագու Թադեոս առաքյալի վանքը մատնահիշ վերին, իբրև ապահով տեղ Մայր Աթոռի փոխադրության» («Սիոն», 1930, էջ 161—162):

«Սիոն» ամսագիրը արժանի հակահարված տալուց հետո նման ազգավնաս ու եկեղեցաքանդ մտաւնությանց, եկեղեցափրական առողջ դիրքերի վրա կանգնած և առաջնորդված միայն և միայն հայ եկեղեցու և հայ ժողովրդի գերագույն շահերից, եզրակացնում էր համարձակությամբ և իրենց հատուկ լրջությամբ.

«Ո՛ր հարկի և պետքի առջև Մայր Աթոռը ստիպված պիտի ըլլար խախտիլ իր տեղն:

...1441-են ի վեր Մայր Աթոռը մնաց Էջմիածին, իր լուսավորչության պատվանդանին վրա, պարսիկ, օսմանյան, վերջապես՝ ռուս տիրապետություններու ներքև...

...Այսօր Հայաստան մը ունիմք. ինչ ալ եղած ըլլա անոր քաղաքական և կրոնական նկարագիրը, վերջապես Հայաստանն է հայ

ժողովուրդին, ամենեն հոծ և ամենեն ավելի կեդրոնացյալ բնաշխարհը, հայրենիքը, և պետք է որ հայ եկեղեցւոյ հոգևոր վերին իշխանության Մայր Աթոռը անշարժ մնա հոն:

Ո՛չ Արտագ, ո՛չ ալ Երուսաղեմ, այլ միայն Էջմիածին և միշտ Էջմիածին: Անոնք որ տարբեր կխորհին, կսխալին բոլորովին և անգիտակցաբար կդավաճանեն Ամենայն Հայոց կաթողիկոսության գոյության դեմ: Ի՛նչ ալ եղած ըլլա հիմա քաղաքական պայմանները և պահանջները Երևանի մեջ, Մայր Աթոռը պետք է մնա Էջմիածնի մեջ: Եվ մեր, այսինքն արտաքու Հայաստանի, սփյուռքի մեջ գտնվող հայության սրբազան պարտքը պիտի ըլլա թե-թիկունք ըլլալ Մայր Աթոռին, որ մնա հո՛ն՝ իր պատմական պատվաճառանի վրա, և վայելե Հայաստանյայց եկեղեցւոյ բովանդակ գավակներուն սերը, քաջալերանքը և գործնական օգնությունը:

Էջմիածինը խորհրդանշանն է ամենայն հայոց միության: Էջմիածինը պատմական հողակապ է ի սփյուռս աշխարհի ցանցիկի հայ եկեղեցիներու: Էջմիածինը այսօր կգտնվի Հայաստանի սրտին վրա: Մայր Աթոռը իր բուն տեղն է հիմա և պետք է որ հո՛ն մնա:

Երանի թե բովանդակ հայ մամուլը արձագանք տար սա նշանաբանին:

Մայր Աթոռը Էջմիածնի մեջ ա՛յժմ և մի՛շտ» («Սիոն», 1930, էջ 162—163):

Մինչ՝ Էջմիածնում ազգային-եկեղեցական ժողովի գումարման և մանավանդ կաթողիկոսական ընտրության հարցի հետաձգումը աշխուժացրեց հակաէջմիածնական ճակատի «դժկամ մտայնությանց» մարդկանց գործունեությունը, մյուս կողմից բովանդակ հայությունն ու հայ հոգևորականությունը չկորցրին իրենց հույսն ու համոզումը, թե շուտով Էջմիածնում կհրավիրվի ազգային-եկեղեցական ժողով և արժանավոր ընտրությամբ սգո քողը կվերանա արիացյալ Մայր Աթոռից:

Ժամանակի ամենատիրական և ինքնատիպ հոգևորականներից մեկը ես՝ Երուսաղեմի պատրիարք տ. Թորգոմ արքեպ. Գուշակյանը, այդ օրերին նույնպես չէր կորցնում երբեք իր լավատեսությունն ու հույսը դեպի հայրենի կառավարությունն ու դեպի Էջմիածնի հոգևոր ղեկավարությունը՝ շեշտելով, որ «Մայր Աթոռը հոգևոր իշխանությունը զո է, Էջմիածնի մեջ, և կգտնվի գործոն դիրքերու վրա», հայ ժողովուրդը «Կճանչընա Գերագույն հոգևոր խորհուրդը, իբրև հայ եկեղեցւոյ նվիրապետական իշխանության վարիչ վերին մարմինը և գործադիր իշխանությունը» («Սիոն», 1932, էջ 193):

«Սեր, հնազանդություն և պատկառանք» էր քարոզում մեծանուն պատրիարքը դեպի

Էջմիածինն ու Գերազույն հոգևոր խորհուրդը: «Ժամանակն է, որ Էջմիածնի այդ անունին, անոր այդ պատկերին, անոր այդ գաղափարին առջև բովանդակ հայությունը որևէ ատենե ավելի այսօր մանավանդ իրականացնե իր պատկառանքին պարտքը, ու Հայաստանայոց եկեղեցվո լրությունը, այս անգամ ալ, ու գերազանցորեն, հատուցանե իր սիրտն ու հնազանդության ամենասիրտագին տուրքը:

Այս միջոցիս մանավանդ չմտածել ընդհանրական հայրապետությունը կամ արևմտյան հայության, այսինքն՝ արտաքո խորհրդային Միությանն ապրող գաղութահայության հոգևոր հովվապետությունը գեթ, կիլիկյան կաթողիկոսության փոխանցելու մասին իսկ փորձի մը վրա: Էջմիածնեն այդպիսի խզում մը, ներկա ժամանակին մեջ մանավանդ, մեծագույն արևելքներեն մին պիտի ըլլար Հայաստանայոց եկեղեցվո համար:

Գեո սուգի քողը կծածկե Լուսավորչի Աթոռը, բայց չէ խորտակված հոն բնաժ հայրապետական իշխանությունը, զոր այդ Աթոռը կխորհրդանշեր: Մեն է մեր հույսը, թե Հայաստանի կառավարությունը՝ հայ հայրենիքին հայկական իշխանությունը, պիտի զնահատե միայն բարենկատ և արդար այն ակնկալությունը, զոր համորեն հայ ազգը անձկալից զգացմունք կտածե իրեն հանդեպ, հայությանը սրտին ամենեն նվիրական իղծերեն այս մեկին ևս կարգադրությանը համար:

Մինչ այդ, սակայն, ամբողջ ազգին վրա պարտականություն կծանրանա ապրիլ և ի հանդես բերել քարոյական քաջություն, այսինքն՝ խաղաղ հոգիի լրջության իրական վիճակ մը, չենթարկվելով ջղաձգական մտայնության, և իր այդ ընթացքով մույնիսկ հասկացնելով ամենուն, թե «զարմված չէ՞ հովիվը ու ցրված չէ՞ անոր հոտը»:

Պատկա՞ն կենանք Էջմիածնի գաղափարին:

...Ահա պատգամը, զոր Էջմիածին իր լույսամբն իսկ կուտա հայության. ո՞ր հայ՝ սիրտը պիտի ունենար չանալու անոր» («Սիրոն», 1932, էջ 163—165):

Արդարև, բովանդակ հայությունը ու ուխտապահ հոգևորականությունը չէին խաբված դեպի ս. Էջմիածինն իրենց ունեցած սիրտն ու հավատարմության և լավատեսության մեջ, երբ ի վերջո Մայր Աթոռից նորից հասավ ավետավոր լուրը: Ազգային-եկեղեցական ժողով գումարելու ճանապարհին վրա ծագած երկրորդական դժվարությունները հարթվել էին Գերազույն հոգևոր խորհրդի աշխատանքների շնորհիվ և 1932 թվի մայիսի 10-ին Մայր Աթոռում հրավիրվում էր ցանկալի ազգային-եկեղեցական

ժողով, համաձայն հայ եկեղեցու կարգաց և կանոնաց և հոգելույս Հայոց Հայրապետի՝ Գևորգ Ե-ի կողմից նախազգված կանոնադրության:

Արդարև, շուտով հրապարակվում էր տեղակալ տ. խորեն արքեպիսկոպոսի ստորագրությամբ նվիրապետական Աթոռներին և թեմերին ուղղյալ հատուկ պաշտոնական հրավերը «ճշմանկալ ժամանակին ժամանելու Մայր Աթոռ և մասնակցելու ազգային-եկեղեցական ժողովին»:

Այս առթիվ դարձյալ տ. Թորգոմ պատրիարքը, հանուն սփյուռքի բովանդակ հայ եկեղեցու և ժողովրդից գրում էր.

«Հագիվ երկու ամիսներ այլևս կբաժանեն զմեզ ավելի քան երկու տարեներն ի վեր հեծնված սպասված այն օրեն, ուր ազգովին ընտրության ձայնը, իբրև ձայն Աստուծո, Լուսավորչի Աթոռին վրա պիտի բազմեցնե վշտալի Գևորգ Ե-ի հաջորդը, ի հայրապետություն Ամենայն Հայոց:

Կսիրենք հավատալ, ու ասիկա՝ ի պատիվ Հայաստանի կառավարության բարձր հայեցողության և Մայր Աթոռի հոգևոր վարչության անվհատ և աշխույժ ջանքերուն, թե ամեն դժվարություն հարթված ու բոլոր թյուրիմացություններ պարզված են արդեն, ու մոյներ 10-ը կոչված է մեր ազգային-եկեղեցական տարեգրությանց մեջ արձանագրվելու իբրև բարենշան օր մը, ուր ազգն համորեն պիտի կարենա ողջունել առանց որևէ օտար կամ արտաքին ազդեցությանը՝ որևէ օտար կամ արտաքին օրենքներու համեմատ ու մեկ անգամեն ընտրված և ժողովրդից խղճմտանքն իսկ վավերացված իր հոգևոր գլուխը:

Գիտենք, թե դժկամ մտայնություններ դեռ ի՞նչ առարկություններ պիտի ուզեին որոճալ այդպիսի լավատեսության մը հանդեպ. բայց հանդարտ սրտով կանցնինք այդ բոլոր մտավախությանց առջևն, լի հույսով, թե իրականությունը շուտով պիտի գա ինքն իսկ տալ հերքումը այդ կարգի անճիշտ դատումներու»:

Հայրենի կառավարության ընձեռած դյուրությունները Էջմիածնում ազգային-եկեղեցական ժողովի գումարման, կաթողիկոսական ընտրության համար, արժանացան բովանդակ հայության երախտագիտության և սիրուն:

«Ջերմորեն կզնահատենք,—գրում էր այս առթիվ Տ. Բաբգեն Ա. աթոռակից կաթողիկոսը.— մոյներ 10-ի ազգային-եկեղեցական ժողովին հաջորդության համար Հայաստանի կառավարության կողմեն ընձայված բոլոր դյուրությունները («Հասկ», 1932, էջ 51):

Ազգային-եկեղեցական ժողովի գումարման

մասին խոսելուց առաջ, կարևոր է նաև նշել տ. Խորենի արքեպիսկոպոսի տեղակալության շրջանում Մայր Աթոռի միջեկեղեցական գործունեությունը:

1832 թվականի օգոստոսի 24—31 օրերին Վիսրադենում գումարվելու էր Հավատքի և կարգի համաժողովը, որին հրավիրվել էր նաև Մայր Աթոռը:

Կիլիկյան Աթոռը ևս հրավիրվել էր այդ համաժողովին:

Մարտ ամսին Անթիպատում, Տ. Սահակ կաթողիկոսի նախագահությամբ, գումարվում է կիլիկյան թեմերի եպիսկոպոսական ժողովը, ուր Եկատի առնելով եղած հրավերը, որոշվում է, որ «Մայր Աթոռի հետ խորհրդակցությամբ կարգադրվի մասնակցության խնդիրը՝ ըստ այսմ Վեհափառ Սահակ Ս. Հայրապետը մարտ 22-ին գրեց Էջմիածին, տեղակալ Խորեն սրբազանին, նշանա-

կելու՛ նաև, թե իր ներկայացուցիչն է դրսևելանուց վերատեսուչ գեր. տ. Շահեն եպիսկոպոս» («Հասկ», 1932, էջ 48):

Այս առթիվ Գերագույն հոգևոր խորհուրդը, նշանակում էր, իր ներկայացուցիչներին՝ մայիս 2 թվակիր և համար 298 գրությամբ Ռումինիայի հայոց առաջնորդ տ. Հուսիկ սրքեպ. Ջոհրաբյանին, Մանչեստրի հայոց հոգևոր հովիվ տ. Ղևոնդ արքեպիսկոպոսին և Անթիպատի դպրեվանքի վերատեսուչ տ. Շահեն եպս. Գաուպարյանին, որոնց իրավունք էր տրվում նաև մասնակցելու 1837 թվականին Լոգանում գումարվելիք համաժողովին՝ որպես «Հայաստանյայց եկեղեցու լրության ներկայացուցիչներ»:

Գերագույն հոգևոր խորհուրդը այս առթիվ մշակում էր նաև հետևյալ մասնավոր հրահանգը՝ որպես ուղեցույց նման միջեկեղեցական համաժողովներում մեր եկեղեցու պատգամավորների համար.

«Գերագույն հոգևոր խորհրդի

Հրամանագիր

Հավատքի և կարգի եկեղեցական համաժողովին մասնակցող Հայաստանյայց առաքելական եկեղեցվու լրության ՆԵՐՎԱՅԱՑԱՑՈՒՑԻՆԵՐԻՆ

Գերագույն հոգևոր խորհուրդը 1828 թվին հանգուցյալ Հայրապետի պատվերի և ցանկության համաձայն մշակել էր այն սկզբունքները, որոնցով պարտավոր էին դեկավարվել Հավատքի և կարգի եկեղեցական համաժողովին մասնակցող Ամենայն Հայոց Հայրապետի կողմից նշանակված հայ եկեղեցու լրության ներկայացուցիչները:

Գերագույն հոգևոր խորհուրդը անհրաժեշտ է համարում տալ նաև Ձեզ մոյն հրահանգը, որը հետևյալն է՝

Ողջունել համաքրիստոնեական համագումարը, հայտնել հայ առաքելական հնադարյան ազգային եկեղեցու սիրով մասնակցելը նորան, որ եկեղեցիների մերձեցման է ձգտում և ընդհանուր համագործակցությամբ Քրիստոսի սիրո շնչով աշխարհը ջերմացնելու և նրա Ավետարանի հավիտենական գաղափարները կյանքի մեջ մտցնելու նպատակը դրել և դեպի այդ նպատակն առաջնորդելու ուղիներ հարթելու է հետամուտ:

Հայ եկեղեցին պատմական անցյալում մշակած կանոնական իրավունքի և սրբազործած ավանդությունների համաձայն, իր կյանքի ամենատեսակ խնդիրների լուծման մեջ վախճանական որոշումներ ընդունել է Ամենայն Հայոց ընդհանրական Հայրապետի գլխավորությամբ գումարված ազգային-

եկեղեցական ժողով: Ուստի և գումարվելիք համաժողովում հայ եկեղեցու ներկայացուցչությունը իրավունք չպիտի ունենա նրա վախճանական որոշումներին մասնակցելու և պարտադիր ճանաչելու այն հայ եկեղեցու համար: Այլ հանձնարարվում է միայն խորհրդակցական մասնակցություն ունենալու և եղած բոլոր որոշումներն ու համաժողովի ամբողջական պատկերը ընդարձակ գեկույցով մատուցանելու Վեհափառ Հայրապետին առաջիկա ազգային-եկեղեցական ժողովի խորհրդակցության և քննության ենթարկելու և նորա հեղինակավոր որոշման համեմատել հիշյալ համաժողովի անպագա գումարումների մեջ իր դիրքը որոշելու:

Քրիստոնեական եկեղեցիների մերձեցման և համագործակցության նախադրյալ համարելով եկեղեցիների փոխադարձ ծանոթությունը, այլև ի Եկատի առնելով համաժողովի կատարելիք աշխատանքների ծրագիրը հանձնարարվում է մեր եկեղեցու ներկայացուցիչներին, ըստ պահանջել հարկին, տալ հայ եկեղեցու դավանական և ծիսական-արարողական նկարագիրը, ուղեցույց ունենալով տիեզերական երեք ժողովները և Ներսես Ծնորհալու «Ընդհանրական»-ը, ինչպես նաև հատկապես հայ եկեղեցու վարչական կազմակերպության Եկատիամբ հանգուցյալ Մաղաքիա արքեպ. Օրմանյանի ընդհանուր գնահատության արժանացած «Հայ եկեղեցին»:

Այլև պարտք է դրվում ներկայացուցչու-

թյան վրա հատկապես շեշտելու հայ եկեղեցու ազգային-ժողովրդական ոգին, նկարագրելով նրա պատմական համառոտ անցյալը, ընդգծելով Արևելքի բազմացեղ և բազմակրոն ժողովուրդների մեջ դարեր շարունակ քրիստոնեական կրոնին հավատարիմ մնալը և համատակ եկեղեցու կանգնող ապրելը, տալով բյուրավոր վկաների շարքեր, մինչև իսկ մեր օրերում:

Գերագույն հոգևոր խորհուրդը նախագրեելով այս համառոտ դեկավար սկզբունք-

ները, վստահ է, որ հայ եկեղեցու ներկայացուցչությունը լրջությամբ, շրջափառությամբ և հայ եկեղեցու ոգուն հարազատությամբ կընթանա գումարվելիք համաժողովում, զգալով և գիտակցելով ա՛յն մեծ պատմամատվությունը, որ ծանրանում է նրա վրա պատվով ներկայացնելու հայ եկեղեցին, այդ քրիստոնյա հնագույն եկեղեցիներից մեկը, իր մեծության, վեհության և քրիստոնեական ամենատեսակ սկզբունքների հավատարմության մեջ:

Մայր Աթոռում ազգային-եկեղեցական ընտրություն (1982

ժողովի գումարում Ե կաթողիկոսական
ճուղմերի 10—18)

Երջանկահիշատակ տ. Գևորգ Ե Ամենայն Հայոց կաթողիկոսի մահից շուրջ երկուեկես տարի հետո, 1982 թվականի նոյեմբերի 10-ին, Մայր Աթոռում հանդիսավոր իրադրության մեջ և խանդավառ պայմաններում գումարվում էր ազգային-եկեղեցական ժողով՝ նախագահությամբ տեղակալ տ. Խորեն արքեպիսկոպոսի և ի ներկայության սփյուռքից և հայրենական ու միութենական թեմերից ընտրված և ժամանած 80 ձայնի իրավունքով 72 հոգևորական և աշխարհական պատգամավորների՝ զբաղվելու առանձնապես կաթողիկոսական ընտրությամբ և ընդհանրապես հայ եկեղեցու սահմանադրության, բարեկարգության, կազմակերպության և այլ հարցերով:

Տեղակալ տ. Խորեն արքեպիսկոպոսի ստորագրությամբ մասնավոր նամակ-հրավերներ էին ուղարկվել նվիրապետական Աթոռներին, որպեսզի էջմիածնի ժողովը լինի լրիվ ներկայացուցչական և համազգային, իր բնույթով:

Այսպես, 1982 թվականի հունիսի 22 թվակիր գրությամբ տեղակալ սրբազանը առանձին-առանձին նամակով հրավեր էր ուղարկել Ս. Սահակ կաթողիկոսին և Տ. Բաբգեն աթոռակից կաթողիկոսին՝ մասնակցելու էջմիածնում գումարվելիք ազգային-եկեղեցական ժողովին:

Սահակ կաթողիկոսը, սույն հրավերը սիրով ընդունելով, «հարմար դատեց, որ իր սթոռակիցը ներկայացնե Կիլիկիո կաթողիկոսությունը հիշյալ ժողովին մեջ» («Հասկ», 1982, էջ 48):

Այս մասին Անթիոխիայից պաշտոնական գրությամբ հաղորդվում էր տեղակալ սրբազանին, հուլիսի 25-ին, «հայտնելով, թե աթոռակիցը պատրաստ էր ճամփա ելնելու, հերիք է որ իրեն անցագրի վիզեն սպահովվի» (Նույն տեղ, էջ 48):

Բաբգեն աթոռակից կաթողիկոսի վիզան ստացվեց Փարիզում հոկտեմբերի 26-ին:

Բայց Բաբգեն Վեհը չկարողացավ մեկնել Մայր Աթոռ, որովհետև այդ օրերին «Սյուրիո և Լիբանանի քաղաքացիներուն համար սկզբունքով արգելք կա խորհրդային երկրներ ճամփորդելու: Այս պատճառով Վեհափառ Սահակ Ա. Հայրապետը հետագի ուղեք էջմիածին հոկտեմբերի 25-ին՝ տեղակալ տ. Խորեն արքեպիսկոպոսին:

«Բաբգեն կաթողիկոս լուրջ արգելքով մը պիտի չկրնա ներկա գտնվիլ ճուղմերի 10-ի ժողովին: Սեր և բոլոր ազգին քաղաքն է, որ արժանավոր եպիսկոպոս մը ընտրվի կաթողիկոս: Եթե փոխանորդություն կընդունվի, Դուք ներկայացուցեք Կիլիկիո կաթողիկոսությունը»:

Նման արգելքների պատճառով դժբախտաբար չկարողացան էջմիածնի ժողովին մասնակցել նաև Երուսաղեմի և Կ. Պոլսի հայոց սրբազան պատրիարքները: Երեք Աթոռներն էլ հշանակեցին անձնափոխանորդներ. այսպես՝ տ. Խորեն արքեպ. Մուրադբեգյանը ներկայացնում է Կիլիկյան Աթոռն ու կաթողիկոսին, իսկ Տ. Բազարատ արքեպիսկոպոսը՝ Երուսաղեմի պատրիարքին:

Արդարև Ամենայն Հայոց կաթողիկոսի տեղակալը և Գերագույն հոգևոր խորհուրդը «Արել էին իրենցից կախված բոլոր հնարավորը, որպեսզի այս ընտրությունը լինի համազգային-եկեղեցական, բառի լայն և ժողովրդական հասկացողությամբ և Հայաստանյայց եկեղեցու լավագույն ավանդությունների համաձայն. երկար դարերից հետո հնարավորություն էր ստեղծված վերջապես, որ առանց օտար և տիրող կառավարության ճնշումների և միջամտության, եկեղեցու ամբողջությունը ի մի գումարվեր հաճին յուր նվիրապետության բարձր ներկայացուցիչների, ինչպես Կիլիկիո Տան շնորհազարդ կաթողիկոսն է, Երուսաղեմի և Կ. Պոլսի պատրիարքները, մեր Միության և արտասահմանյան ամբողջ եպիսկոպոսու-

թյունը, թեմերից ընտրված հոգևորական և աշխարհիկ դասերի պատգամավորությունը, եկեղեցու ընդհանրական Պետի ընտրությունը կատարելու, խորհելու և դարձման գտնելու բարեկարգության, ցավերի բուժման, կենդանի առաքելության իրագործման ուղիների մասին» («Սիոն», 1953, էջ 59):

Ազգային-եկեղեցական ժողովը գումարում է Յ ճիստեր՝ 1832 թվականի նոյեմբերի 10—13 օրերին:

Ա, Բ, Գ և Դ ճիստերում սպասվում է օրակարգի բոլոր հարցերի քննարկումը և ընդունվում համապատասխան որոշումներ:

1832 թվականի նոյեմբերի 12-ին, շաբաթ օր, Մայր տաճարում գումարված հանդիսավոր ընտրական ճիստում, կաթողիկոս է ընտրվում տեղակալ տ. Խորեն արքեպ. Սուրադյանը՝ 60 ձայների քաջարձակ մեծամասնությամբ:

Ժողովն իր աշխատանքներն ավարտում է 1832 թվականի նոյեմբերի 13-ին, կիրակի օր երեկոյան վեցերորդ և վերջին ճիստում, ուր ընդունվում է նաև ընդհանրական ուղերձ Ամենայն Հայոց կաթողիկոսի և ազգային-եկեղեցական ժողովի կողմից՝ Հայաստանի բարեխնամ կառավարության ցույց տված քարեհաճ վերաբերմունքի համար:

Գերագույն հոգևոր խորհուրդը 1832 թվականի դեկտեմբերի 25-ին և համար 874 պաշտոնական գրությամբ, հրատարակում է հետևյալ շրջաբերականը՝ ուղղված բոլոր թեմակալ առաջնորդներին և թեմական կենտրոնական հաստատություններին, Մայր Աթոռ ս. Էջմիածնում գումարված ազգային-եկեղեցական ժողովի և Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրության մասին՝ որպես ժողովի պաշտոնական արձանագրություն:

«Պատգամավորները հավաքվել սկսան Մայր Աթոռում նոյեմբերի 5-ին մեր Սիրության թեմերից և փոքր չափով արտասահմանից: Նոյեմբերի 6-ին, պատարագից առաջ, հոգեհաճությամբ կարգ կատարվեց Տ. Կեվորգ Ե կաթողիկոսի գերեզմանի վրա: Սրվան պատարագիչն էր տ. տեղակալը, որ «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց հայրապետական Աթոռի և Հայաստանյայց եկեղեցու նշանակության մասին, և ապա հանդիսադիր եղավ Իջման սեղանի առաջ կատարվող հայրապետական մատուցման: Դորա-հից հետո նա երգվեցրեց բոլոր պատգամավորներին՝ խղճի մտոք կատարելու իրենց պարտքը ընտրության գործում:

Նոյեմբերի 7, 8, 9 նախապատրաստական ոչ-պաշտոնական և մասնակի աշխատանքներ էին կատարվում ժողովի օրակարգի և կանոնավոր ընթացքի նկատմամբ, իսկ պատգամավորները ծանոթանում էին իրար հետ, այցելում հնադարյան վանքերն ու ա-

վերակները: Բուն ժողովներն սկսվեցան նոյեմբերի 10-ին, առավոտյան 11 ժամին, տեղակալ տ. Խորեն արքեպիսկոպոսի նախագահությամբ և վաթսուն և վեց պատգամավորների մասնակցությամբ: Տ. տեղակալի հակիրճ ճառից և հոգեւոյս Տ. Գևորգ կաթողիկոսի հիշատակին «Հոգվոց» ասելուց հետո, ընտրվում է աստեմապետություն և ապա մանդատային հանձնաժողով՝ պատգամավորների թղթերն ստուգելու համար: Ատեմապետությունը կազմված էր վեց հոգուց. երեք աստեմապետներ (Ստեփանոս Մալխասյան, Գեղամ Տեր-Պետրոսյան և Լևոն Կյուվոյզկերտյան), քարտուղարներ (Ստեփան Կանայան, Ռուբեն ավագ քահանա Բեկզոյան և Կոստանդին Գյուլմազարյան): Մանդատային հանձնաժողովի անդամներ էին տ. Մատթեոս արքեպիսկոպոս, տ. Երվանդ ավագ քահանա Նալբանդյան, տ. Սահակ ավագ քահանա Սահակյան և Հովսեփ Տիգրանյան:

Պատգամավորների հանձնարարականները ստուգության ենթարկելուց հետո, նորոգվում է ճիստը և հաստատվում օրակարգի հետևյալ հարցերը՝ աստեմապետության թուղևներով նրանց քննության ենթարկելու կարգը:

1. Որոշումն Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրության եղանակի:

2. Գերագույն հոգևոր խորհրդի գեկուցումներ:

ա) Գերագույն հոգևոր խորհրդի հաստատության և գործունեության մասին,

բ) Մայր Աթոռի նյութական կարիքների մասին,

գ) Հայաստանյայց եկեղեցու սահմանադրության մասին:

3. Զեկուցումներ Հայաստանյայց եկեղեցու բարեկարգության մասին:

4. Ընտրություն Ամենայն Հայոց կաթողիկոսի:

5. Ընտրություն Գերագույն հոգևոր խորհրդի անդամների:

6. Ողջույն և զոհունակությունն ազգային-եկեղեցական ժողովի կողմից խորհրդային Հայաստանի կառավարության:

Ապա տ. տեղակալը կարդում է Գերագույն հոգևոր խորհրդի կողմից գեկուցում՝ նրա հաստատության և ուղեմյա գործունեության մասին: Ժողովը հանձնարարում է աստեմապետության բանաձև կազմել և բերել հաստատության:

Նույն երեկոյան ճիստում տ. Գարեգին արքեպիսկոպոս կարդում է Գերագույն հոգևոր խորհրդի կազմած սահմանադրության նախագիծ, իսկ տ. Մատթեոս արքեպիսկոպոս՝ Մայր Աթոռի նյութական կարիքների մասին գեկուցումները: Ժողովը մտքերի փոխանակությունից հետո, հանձնարարում է աստե-

նապետության՝ սրանց համար ևս բանաձե-
վեր կազմել:

Այստեղ մեջ է բերվում ժողովի հաստա-
տած բանաձևերը երեք զեկուցումների մա-
սին, առաջինը հաստատված, նոյեմբերի
10-ի երեկոյան ճիստում, իսկ մնացած եր-
կուսը՝ նոյեմբերի 11-ի առավոտյան ճիս-
տում:

Գերագույն հոգևոր խորհրդի հաստատու-
թյան և գործունեության մասին ժողովը որո-
շում է՝

1. Ողջունել Գերագույն հոգևոր խորհրդի
հիմնումը և հավանություն տալ 1924 թվի
հունվարի 1-ի հայրապետական կոնդակին,
որով հիմնվում է խորհուրդը:

2. Հավանություն տալ Գերագույն հոգևոր
խորհրդի գործունեության՝ նորա հիմնման
օրից մինչև այսօր:

3. Ընդունել Գերագույն հոգևոր խորհրդի
ներկա կազմի հրաժարականը՝ շնորհակա-
լություն հայտնելով նորա շրջահայաց և օգ-
տակար գործունեության համար, խնդրելով
այդ պաշտոնը առժամանակ շարունակել,
մինչև նոր կազմի ընտրությունը ներկա
պատգամավորական ժողովի կողմից:

Հայոց եկեղեցու սահմանադրության բա-
նաձևը.

Հանձնարարել Կեդրոնական հոգևոր
քարձրագույն իշխանության՝ կազմել հատուկ
մասնաժողով հմուտ անձերից և նրան հանձ-
նել մշակել նախագիծ՝ Հայոց եկեղեցու նոր
սահմանադրության, ելակետ ունենալով մեր
եկեղեցու ավանդական ընտրական սկզբուն-
քը, կանոնական ճանապարհով եկեղեցա-
կան գործերի կառավարության մեջ մուծված
քարեվիտխությունները և ժամանակակից ի-
րավակարգերը: Այս նախագիծը հաղորդել
Տաճն Կիլիկիո կաթողիկոսին և Երուսաղեմի
ու Կ. Պոլսի հայոց պատրիարքներին և, ի
նկատի առնելով նրանց դիտողությունները,
հաստատել հայրապետական կոնդակով և
մտցնել գործունեության մեջ, իսկ առաջին
մերձավորագույն ազգային-եկեղեցական ժո-
ղով գումարելիս՝ առաջարկել նրանց վերջ-
նական քննության և հաստատության:

Մայր Աթոռի նյութական կարիքների զե-
կուցման մասին որոշում է՝

1. Ժամաչել Մայր Աթոռի նյութական վի-
ճակը միանգամայն անապահով նրա եկա-
մուտների պակասության և պատահական
բնույթի պատճառով:

2. Ժողովը պարտք է դնում միութենական
և մանավանդ արտասահմանյան թեմերի ե-
կեղեցիների, առաջնորդների և հայ հա-
մայնքների վրա հոգալ պարբերական նը-
պատներով Մայր Աթոռի քաղաքատեսակ
կարիքները՝ նրան արժանավայել դիրք տա-
լու նպատակով:

3. Մայր Աթոռի կարիքների վրա ժողովը
հրավիրում է Տաճն Կիլիկիո կաթողիկոսի,
Երուսաղեմի և Կ. Պոլսի պատրիարքների ա-
ռանձին ուղարկությունը:

4. Հանձնարարել Գերագույն հոգևոր
խորհրդին՝ քննության առնել և հնարավորու-
թյան չափով իրագործել հաստատուն եկա-
մուտների աղբյուրներ ստեղծելու միջոցնե-
րը, ինչպես են կամավոր տուրք սահմանելը,
մոմավաճառություն և այլ հնարավոր միջոց-
ներ:

Օրակարգի երրորդ հարցի, այն է՝ Հա-
յաստանյայց եկեղեցու քարեկարգության
մասին Գերագույն հոգևոր խորհրդի կողմից
զեկուցում է կարդում տ. Գևորգ արքեպիս-
կոպոս: Այդ զեկուցման հիման վրա ժողովը
հաստատում է նախ հանգուցալ կաթողիկո-
սի 5 կանոնական կոնդակները. ա) Քահա-
նաների կրկնամուսնությունը (Թ. 644, նո-
յեմբեր 11, 1922), բ) Ազգակցական հիմնե-
րորդ և խնամակալ չորրորդ ատիճանի և
հոգևոր ազգակցության, կնքահոր և սանու-
հու ամուսնության արգելքի վերացումը (Թ.
645, նոյեմբեր 11, 1922), գ) Գոր տոմար
մտցնելու (Թ. 350, նոյեմբեր 3, 1923), դ)
Երգեհոնի գործադրության (Թ. 350, նոյեմ-
բեր 3, 1923) և վերջապես ե) Հայաստան-
յայց եկեղեցու ընտրության սկզբունքի վե-
րահաստատության, թեմական խորհուրդնե-
րի և առաջնորդների նկատմամբ (Թ. 678,
1917): Երկրորդ կոնդակի՝ կնքահոր և սա-
նուհու վերաբերյալ մասը ժողովը ընդու-
նում է միայն ծամանակավոր, մինչև հետա-
գա ազգային-եկեղեցական ժողովի նոր
սահմանադրության հաստատությունը: Բա-
րեվիտխության մյուս խնդիրների վերաբե-
րմամբ ժողովը հանձնարարում է քարձրա-
գույն հոգևոր իշխանության՝ մասնագետների
ձեռքով հաղուցված հարցերը ուսումնասի-
րել, ապա Տաճն Կիլիկիո կաթողիկոսի, եր-
կու պատրիարքների կարծիքները լսելուց
հետո, ամհրամձեշտ հրատարակել կանոնա-
կան կոնդակով, իսկ մնացածը պահել ի
վերջնական հաստատություն հետագա ազ-
գային-եկեղեցական ժողովի:

Գումբերի 11-ի երեկոյան ճիստում ո-
րոշվում է Ամենայն Հայոց կաթողիկոսի
ընտրության եղանակը. թեկնածուների ըն-
տրությունը կատարել թերթիկներով, յուրա-
քանչյուր ձայնի համար միայն մի անուն
գրելով, իսկ վերջնական ընտրությունը՝ տու-
փելով:

Ժողովը անհրաժեշտ է համարում Գերա-
գույն հոգևոր խորհրդի գոյությունը՝ նախա-
գահությամբ Ամենայն Հայոց կաթողիկոսի,
քաղկացած չորս հոգևորականներից, որոնց
ընտրում է ազգային-եկեղեցական ժողովը, և
երկու աշխարհականներից, որոնց հրավի-

րում է այդ կազմը ներկա ժողովին մասնակցող աշխարհական պատգամավորներից հավասար իրավունքով. հոգևորականների կողմից դուրս եկող անդամների տեղ մնացածներն ընտրում են նոր անդամ հոգևորականներից՝ դարձյալ հավասար իրավունքով:

Նույն նիստում ազգային-եկեղեցական ժողովը հանձնարարում է Գերագույն հոգևոր խորհրդին՝ յուր նախագահ Վեհափառ կաթողիկոսի միջոցով միջնորդություն հարուցել խորհրդային Հայաստանի կառավարության առաջ՝ բավարարություն տալու հայոց եկեղեցու անհրաժեշտ և անհետաձգելի կարիքներին, այն է՝ իրագործել հոգևոր դպրոցի բացումը հայոց եկեղեցու պաշտոնյաներ պատրաստելու համար, ունենալ պարբերական ամսաթերթ իբրև օրգան և Էջմիածնի բարձրագույն հոգևոր իշխանության, ստեղծել եկամտի հաստատում աղքատներ և Էջմիածնի տաճարի և միաբանության պահպանության, բացվելիք դպրոցի և պարբերական օրգանի ծախսերի և եկեղեցական գրքերի տպագրության համար:

Նույնների 12-ին ազգային-եկեղեցական ժողովի նիստը գումարվում է տաճարում՝ կատարելու Ամենայն Հայոց կաթողիկոսի և Գերագույն հոգևոր խորհրդի անդամների ընտրությունը: Թերթիկներով, գաղտնի քվեարկության արդյունքն է, յոթանասուն և ինը ձայնից (Արշակ Չոպանյանը այս քվեարկությունից հետո միայն հասավ և մտավ տաճար) 51 ձայն ստանում է տ. Խորեն արքեպիսկոպոս, 12 ձայն՝ Մատթեոս արքեպիսկոպոս, 10 ձայն՝ Մեսրոպ արքեպիսկոպոս, 2 ձայն՝ Բագարատ արքեպիսկոպոս, և մի-մի ձայն՝ տ. Թորգոմ, Գարեգին, Գեորգ արքեպիսկոպոսներ: Բացի Խորեն և Մատթեոս արքեպիսկոպոսներից, բոլորը, հրաժարվում են քվեարկությունից:

Կես ժամ ընդմիջումից հետո կատարվում

է երկրորդ և վերջնական քվեարկությունը: Ութսուն ձայնից վաթսուն ձայն ստանում է տ. Խորեն արքեպիսկոպոս, տասներեքն ձայն ստանում է տ. Մատթեոս արքեպիսկոպոս, իսկ մեկը՝ սպիտակ թերթիկ: Տեղ Խորեն արքեպիսկոպոս հայտարարվում է ընտրված կաթողիկոս Ամենայն Հայոց: Մեսրոպ արքեպիսկոպոս որպես ավագագույն, շնորհսվորում է ընտրությունը, և բոլոր պատգամավորները մի-մի մտնենում և համբուրում են ընտրյալի աջը:

Որոշ ընդմիջումից հետո կատարվում է Գերագույն հոգևոր խորհրդի անդամների ընտրությունը: 63 ձայն ստանում է Գարեգին արքեպիսկոպոս, 52 ձայն՝ Գեորգ արքեպիսկոպոս, 50 ձայն՝ Մատթեոս արքեպիսկոպոս, 44 ձայն՝ Մեսրոպ արքեպիսկոպոս, 49 ձայն՝ Բագարատ արքեպիսկոպոս: Առաջին չորսը պիտի համարվեին ընտրված, բայց որովհետև տ. Մատթեոս, տ. Մեսրոպ և տ. Բագարատ արքեպիսկոպոսները հրաժարվեցին, ընտրված համարվեցան միայն առաջին երկուսը, իսկ կրկնաքվեարկությամբ ապստ. Արտակ և տ. Արսեն եպիսկոպոսները, որով յրացավ չորս անդամների թիվը:

Բոլոր պատգամավորների միահամուռ գանկությամբ նորընտիր Հատրապետի օծումը կատարվեց հետևյալ օրը՝ կիրակի, նոյեմբերի 13-ին: Ձեռնադրության և օծման կարգը կատարող 12 եպիսկոպոսների ավագըն էր տ. Մեսրոպ արքեպիսկոպոսը:

Նույն երեկոյան ժողովի վերջին նիստն էր, որ զբաղվեց շնորհակալության ուղերձ պատրաստելով խորհրդային Հաստատանի կառավարության անունով, ցույց տված բարեհաճ վերաբերմունքի համար:

Ժողովի վերջում Ս. Հայրապետը՝ կրկին օրհնելով պատգամավորության, հայտարարեց ազգային-եկեղեցական ժողովը փակված:

Օծում և գահակալությունը նորընտիր

Նորընտիր Հայրապետի օծումը կատարվում է 1992 թվականի նոյեմբերի 13-ին՝ կիրակի օրը:

Կիրակի, ավանդական հանդիսությամբ և ըստ կարգաց և կանոնաց, կատարվում է հայրապետական հանդիսավոր ձեռնադրության և օծման կարգը՝ 12 արքեպիսկոպոսների և եպիսկոպոսների մասնակցությամբ, ավագագույն տ. Մեսրոպ արքեպիսկոպոսի հանդիսադրությամբ:

Օրվա հանդիսավոր պատարագիչն է նորընտիր Հայրապետը:

Նոյեմբերի 13-ը համառոտալից ուրախու-

Ամենայն Հայոց կաթողիկոսին

թյան և հոգեկան մխիթարության տոն էր Հայաստանյայց եկեղեցու, ս. Էջմիածնի և բոլոր հայ հավատացյալ հոգիների համար:

Տ. Խորեն Ա կաթողիկոսի ընտրությունն ու գահակալությունը հանդիսացավ մեր եկեղեցական տարեգրության բացառիկ թվականներից մեկը:

Այս առթիվ տ. Թորգոմ պատրիարք, արտահայտելով համայն սփյուռքի հոգևորականության, ժողովրդի և մտավորականության զգացմունքներն ու խոհերը, գրում էր ուրախությամբ և խանդավառությամբ:

«Գոհ ենք և ուրախ: Հանգույցը լուծված է:

հնչ որ լավատես իղձերե թելադրված հախազագցում մը լսել տված էր մեզի քանիցս՝ «Արհմ»-ի այս պլանակներուն մեջ, իրականացավ յոթի:

Նոյեմբերի 10-ին Էջմիածնի նվիրական կաթողիկեին ներքև քաղվեցավ ազգային-կեղեցական ընդհանուր ժողովը. երկու օր ետք, նոյեմբեր 12-ի շաբաթ օրը, ի հանգ ելավ կաթողիկոսական ընտրությունը, Աթոռ պատվական տեղակալը տ. Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեգյան, ընտրվեցավ, և հաջորդ կիրակի օրն իսկ, նոյեմբեր 13, օծվեցավ կաթողիկոս Ամենայն Հայոց:

Առաջին կետը, որ ուրախություն պետք է առթե ամբողջ ազգին, այն է, թե ընտրողները Լուսավորչի Աթոռին կրցած են մտածել և համաձայնիլ իրական արժանիքի մը վրա: Կնտրադրեմ վերևի այդ մեկ քառը, անոր մեջեն ցույց տալու համար միայն այն թեք մտայնությունը, որով սկիզբեն ի վեր գրեթե ամբողջովին վարակված կթվեր հանրային կարծիքը՝ խորհելով, թե քվեներ հարկադրորեն պիտի կեղդոնանային դուրսեն, այսինքն եկեղեցվո ոչ-քարեկամ ազդեցություններն մատնանշված թեկնածուի մը վրա...

Այս մտայնության շուրջը սկսեր էր, ընտրության օրը վերջնապես նշանակվելեն ետք մանավանդ, կեղև կապել տեսակ մը մտախախտություն ևս, թե մեծամասնական ամբողջականության գույցեր պատգամավորներու ընտրությունը և մեկնումը պիտի արգիլեին իրենց իսկ խորհրդային երկիրներուն մեջ, և մետո պիտի արգիլեին բուն հայրապետական ընտրությունը Վաղարշապատի մեջ:

Հեռագիրը, ինչպես հովի թեթև շունչ մը, թուխ խոշոր ծվեցները ցրվեց, ցնդեց նպատակավոր հերյուրումներով կարկատված այդ կտակածանքները:

Գոհունակության արժանի երկրորդ պատգամ, որուն սուղենն ներելի չէ լուրջամբ մնցնիլ, արդարամիտ այն կեցվածքն է, զոր Հայաստանի կառավարությունը ցույց տվավ միայն խորհրդային սահմաններն ներս սլորող հա հասարակությանց, այլև արտասահմանյան գաղութներու պատվիրակությանց հանդեպ:

Բայց ինչ որ ամենն ավելի մխիթարական է և ամեն մասամբ զմահատելի, այն իողությունն է մանավանդ, թե Ամենայն Հայոց ընդհանրական Հայրապետի ընտրությունը, դարերն ի վեր այս առաջին անգամն ըլլալով, Մայր Աթոռ մեջ կատարվեցավ ազգային օրենքի համեմատ, այսինքն ազգն կեղեցին ներկայացնող պատգամավորներու տեսությանն ու կառվածքին համաձայն պայաններու մեջ, բոլորովին հետևողականությամբ այն կանոնագրին, զոր հոգեկոյն Գե-

վորգ Ե կաթողիկոս տարիներ առաջ իմաստությունը ունեցած էր տնօրինելու և հրամանակարգելու՝ նկատի առնելով ստեղծված նոր կացությունը:

Անշուշտ ազգին կամքն էր միշտ, որ կրնոր իր եկեղեցիին պետք, և մեր բոլոր հայրապետները, վերջիններն և իր նախորդներն, իզմիրյանեն և Նրիմյան Հայրիկեն ուղարկված իրենց նախագույն նախորդները, ազգին ցանկացածներն ու կամեցածներն եղած են ընդհանրապես. բայց խոստովանիլ պարտինք վերջապես, թե ազգին կամքն մինչև դեռ երեկ կատարվեր արքունական որոշությունն և երկրորդաբանի ձևական այնպիսի պայմանադրականություններով, որ կարծիքի ազատությունը կամ անկախությունը, երևութապես զեյթ, շատ քան կկորսնցնեն իր իմաստեն և արժեքեն:

Ներկա ընտրությունը, հայտնի է, գերծմաց այս անպատեհություններն:

Երկար դարերն ի վեր առաջին անգամ է, որ կունենանք ոչ միայն կատարելապես ազդեցիկ ընտրված կաթողիկոս, Էջմիածնի մեջ, այլ նաև Ընդհ. պատգամավորական ժողովեն նույնիսկ ընտրված հոգևոր ժողով:

Պետք չէ ուշադրությունն վրիպեցնել սա-կալ, որ իրենք կատարեցին այսպես զոհաբողի ընթացք մը, ո՛չ թե դեպքերու պատմական դատախոսման կամ, ինչպես սովորությունն եղած է լուրջ. պարագահ տրամաբանական շարահարման հետևանքով, այլ որովհետև, մեկ կողմեն սկիզբեն չպակ-սեզավ քննալ թարեջան աշխատանքի հարա-տեվությունը և մյուս կողմէ՝ հետզհետե կարծես ավելցան թարեհոծալը նկատառման տրամադրությունները:

Ազգին և եկեղեցիին համար քախտավորություն մըն էր աղաքին, որ ամեն կերպով տագնապալից առնեն մը, որպիսի ելալ արդարև պատերազմի և հետպատերազմյան ժամանակի այս տասնութամյա շրջանը, Մայր Աթոռ մեջ ունեցանք ընտիր հույ մը պատվական եպիսկոպոսներու, որոնք ոչ միայն իրենց համալսարանական լուրջ կրթությունները, այլ նաև ազգային և հոգևորական կյանքի իրենց իրատես ըմբռնողությամբ ու փորձառությամբ՝ ի գլուխ ունենալով ներկա նորընտիր Ս. Հայրապետը, իրենց տիրոն ու միտքը ի սպաս դրին Լուսավորչի Աթոռին պահպանությանն անհետաձգելի պատասխանության. քացատրելու համար, ուր որ պետք էր, թովանդակ հայության Էջմիածնի հաճելի տաճար հոգևոր զգացմանց մեկ կողմէն բուսավորությունը, ազգային տեսանկյունով նույնիսկ, և օրինավորությունը՝ իրավական ըմբռնումներով, և մյուս կողմէ՝ առ զբացումներուն գոնավորված չըլլալը որևէ քաղաքական հայեցողությամբ:

Հայաստանի կառավարությունը, որուն ամենեւնի բանավոր և բացորոշ մտահոգություններեն մին կթվի հայ ժողովուրդին տեղական իշխանության պահպանումին իղձը, չունինք տարակույս, թե պիտի ուզե այս մասին իրեն աջակից մը միայն տեսնել հայ եկեղեցվո կազմակերպության մեջ. բավական է, որ կամենա հասկնալ զայդ. ու բավական է մանավանդ, որ մարդիկ, որոնց պարտքն է այդ, կարենան հասկցնել զայդ իրեն խոսքով և գործքով միանգամայն:

Կկրկնենք. երևույթները քաջալերական են. Աստուծո նախախնամող աջը կհսկե հայ եկեղեցվո ճակատագրին վրա. ողջմտությունը և բարեհոգությունը չէ, որ կպակսին Էջմիածնի մեջ. հասկցողներ և հասկցնողներ միանգամայն կան այնտեղ՝ Մայր Աթոռ շուրջը. մարդիկ, որ իրենց անկեղծ խոսքովն ու ընթացքովը կգորացնեն և կպայծառացնեն եկեղեցիին դիրքն ու ոգին աշխարհիկ իշխանության մոտ:

Լուսավորչակրոն հայությունը, կուզեի ըսել՝ ազգն ամբողջ, պետք է կարենա գնահատել այս սրտապնդիչ կացությունը:


Հարգա՛նք անոր, որ նման ի լուս անհատության, վշտալի Հայրապետին՝ Գևորգ Ե-ի. հարգա՛նք նաև անոր, որ իմաստուն և րարի գործունեության մը խոստումներով կուգա, խորեն Ա-ի, պիտի փափուսգեի ըսել՝ մեր հուսալի Հայրապետին:

Կանցնին և կուգան անհատները, բայց կմնա սկզբունքը, երբ կենդանի է սերը. կրհաջորդեն հայրապետներն իրարու, բայց կմնա հայրապետությունն Ամենայն Հայոց, վասնզի անմեռ են հայության հավատքն ու հույսը:

Է՛ջմիածին, սուրբ և փարեհի տեսիլ, զոր հայության հոգվույն մեջ ընդմիշտ և խորագույնս տպավորեց մեր հոգիներուն լուսատու հայրը, ազգ ու ժողովուրդ ամենքս մորեն ոտքի կեցած ենք քու անքիծ հուշքիդ առջև, մեր հոգիներուն բուլանդակ երկնադաժությանը Երկնավոր Քահանայապետին ուղերձված՝ երգելու համար.

«...միշտ անշարժ պահեա՛ զԱթոռ Հայկազնեայս» («Սիոն», 1932, էջ 374—376):

(Շարունակելի)



ՎԱՀԱՆ ԵՊՍ. ՏԵՐՅԱՆ

(Փոխանորդ Արարատյան թւմի)

Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ԴՊՐՈՑԸ 15—17-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

Պատմական Հայաստանի սրտում՝ Արարատյան դաշտավայրում 15-րդ դարում վերահաստատված հայրապետական Աթոռը գոյություն ունեցող պայմաններում, ձգտում էր հայ ազգային-եկեղեցական կյանքի զարթոնքին:

Այուրյաց և Վասպուրականի դպրոցների երազը այդ էր, երբ ոգի ի բոհն պայքարում էին Աթոռի փոխադրության համար:

Հոգևոր և մշակութային պատմական այդ կենտրոնի շուրջ աշխարհիկ և եկեղեցական գործիչների համախմբումը Ստեփանոս Օրբելյանի բառերով փորձում էր վերականգնված տեսնել «գաթոռ թագաւորիւն և զգաւազան պատրիարքիւն», նորից ծաղկած, այսինքն գլուխ բերել Հայաստանի լիակատար անկախությունը:

Հայրապետական Աթոռը 1441 թվականին վերստին Էջմիածին տեղափոխվելուց հետո, նոր թափում գարկ տրվեց հոգևոր մշակութային կյանքի բարձրացման և կազմակերպման: Վաճառված մշակութային կյանքը Այուրյաց մեծ անապատի օրինակով ծաղկեց, բացվեցին լուսավորության նոր կենտրոններ:

Վերագարծման այս հզոր ալիքում, բնական է, մեծ բաժին ունեւ Էջմիածնի Ամենայն Հայոց կաթողիկոսարանը՝ ամբողջ Հայությունը անխորտակելի կենդանի կրող գողող ամենահուսալի և վստահելի ուժը: Իսկ Էջմիածինը կարող էր գործել իր դիրքին վայել

մի դպրոցի միջոցով միայն, որի գործիչները կրթված լինեին իր հետապնդած եկեղեցական-ազգային սուրբ ձգտումներով:

Էջմիածնի «Նոր դպրոց»-ը հիմնադրվեց 1441 թվին՝ Աթոռի փոխադրության զուգընթաց:

Այսպանյան մանրամասն կանգ է առնում այս հարցերի վրա. «Էջմիածին, երբ 1441-ին վերստին դարձավ Ամենայն Հայոց կաթողիկոսական Աթոռ, Կիրակոս Վիրապեցիի կաթողիկոս ընտրությամբ, Թովմա Մեծոփեցի հոգ հաստատվեցավ և ուսուցանել սկսավ հավաքված աշակերտության:

Առաջին՝ Մայր Աթոռի մեջ հիմք դրվեցավ ուսումնարանի մը, ինչպես եղած էր հին առնել և ինչպես վայել էր: Սակայն Կիրակոս Վիրապեցիի տապալումով՝ վասպուրականցիք, որոնց ազդեցիկ դիրքը Էջմիածնի մեջ գլխավոր պատճառը եղած էր այս գահընկեցություն, ամենքն այ հեռացան Էջմիածնեն, ընդ որս նաև Թովմա Մեծոփեցի, որ իր վանքը դարձավ: Հազիվ երկու տարվա կյանք մը ունենաղ հետո փակվեցավ հայրապետանոցի դպրոցը»¹:

Պարզ է, որ այս շփոթ և խառնակ ժամանակաշրջանում կրթական գործը մեծապես տուժեց: Այնուամենայնիվ գործում են մի շարք դպրոցներ, Հայաստանում առկայծյալ

¹ Այսպանյան, «Պատմություն հայ դպրոցի», էջ 347:

պահպանվում է մտավորական կյանքի դող-
դուջում ջահը: Այնտեղ նույնիսկ հանդիպում
ենք իրենց ժամանակին համար ուշագրավ
գարգացման բարձր աստիճանի հասած մի
քանի նշանավոր մարդկանց ու կենտրոն-
ների:

Այդ նշանավոր մարդկանցից մեկն է
Ստեփաննոս Սայմաստեցի (1548—1552)
կաթողիկոսը, որը, ըստ Ակինյանի «Նա-
խավկայի վանքին առաջնորդն էր և Գրիգոր
կաթողիկոսի մահեն հետո բարձրացավ էջ-
միածնի Աթոռը»¹:

Երկրորդ մեծ անունը, որ պետք է հիշվի,
Միքայել Սեբաստացի կաթողիկոսն է
(1567—1578): «Ժամանակիս մեջ իրենց
ուսումնական ջանքով, թե ոչ երկասիրու-
թյամբ, նշանավոր անձերուն գլուխը պիտի
հիշենք դարձյալ Ստեփաննոս Սայմաստեցի
և Միքայել Սեբաստացի կաթողիկոսներուն
անունները, անոնց կցելով նաև Գրիգոր Աղ-
թամարցին: Հիշենք ևս Մաղաքիա Դեղջան-
ցի վարդապետը, որուն աշխարհաշեն և
ազգագուտ ձեռնարկներեն գատ, բանիբոց և
հմտ: անձ մը եղած ըլլալն վկայված է: Ի-
րեն դրացի, հավանաբար և գործակից եղած
է Ղուկաս Կեղեցի կամ Խորձենացի վար-
դապետը, որ հատուկ աշակերտություն մը
ալ կազմած է. և իրեն ձեռնասուններեն ա-
րժանավոր կաթողիկոսներ ալ եղած են»²:

Այն փաստը, որ կրթական առաքելաբե-
րական կաթողիկոսներ կամ անմիջա-
պես նրանց գործակից անձնավորություններ
են, վկայում է այն մասին, որ որքան էլ
քննվող շրջանում հականե հանվան չի հիշ-
վում էջմիածնի վարդապետարանը, որպես
աղաչիսին, բայց կարելի է եզրակացնել, որ
այդ հիմնարկը գոյություն ուներ, եթե ոչ իր-
րև կանոնավորյալ սիստեմի վերածված
ռաբոց, այլ ընտանեվարի, ձեռնասուններ
հասցնելու ձևի տակ:

Եղվարդի դպրոցը գոյություն ուներ նախ-
քան 1441 թվականը, շնորհիվ Սիմեոն Ա-
րիվանեցու ջանքերին: Նա Տաթևում և Այրի-
վանքում նշանակալից մանկավարժական
գործունեություն ծավալելուց հետո վերջնա-
կանապես հաստատվում է Արարատյան
դաշտի Եղվարդ գյուղում կամ ժամանակա-
կիցների ասելով «մեծ ավանում»: Եղվար-
դում Սիմեոն Արիվանեցին ունենում է տաս-
նամյա մանկավարժական գործունեություն:
Նրա հովանավորը ու պաշտպանն էր իշխան
Ազիզբեկ, նրա մահից հետո էլ՝ որդիները:

Ստեղծվում է իմաստասիրական մի մեծ
դպրոց, որտեղ նա «բազում կրթնատուր և ա-

շակերտեալ մանկունս եկեղեցույ ժողովեալ
յուսուցանել զհիմն և զնոր մատենան սուտ-
ու: անաշունչ գրոց, զսուրբ և զարտաքին փի-
լիսոփայութիւն՝ ամս տասն»³: Սիմեոնը
Սյունյաց դպրոցից էր, Գրիգոր Տաթևացու
աշակերտներից: Նա վախճանվեց Կոտայքի
Ջազավանք վանքում, 1428 թվին, երբ վա-
րում էր տեղի վանահայրությունը, անշուշտ
դպրոցական գործից հետ:

Եղվարդի վանքում Սիմեոն ռաբունու գյու-
ծունեության մասին կարևոր տվյալներ է
հաղորդում իր իսկ պատվերով գրված մի
Հայսմավուրքի հիշատակարանը. «Յիշեսցիք
գտաացող օրինակի սորին՝ զաստուտեա հա-
նոյ և զարդինական և մեծ վարժապետն
հայոց զՍիմեոն, որ յայնմ ժամանակի վաչ-
լեր ի մեջ եկեղեցույ իբրև զարեգակն: և մե-
ծաւ յուսով և եռափափագ սիրով սկսաւ ու-
րոգել և զարդարել զվանորայս Արարատեան
նահանգիս, որ յախտեալ կային ի տսմա-
նաց և ի կրօնից յառաջին հարցն»⁴:

Աթոռի փոխադրությունից հետո անշքա-
ցած Վաղարշապատը մոտիկից հսկողու-
թյան տակ առնված կրթական գործունեու-
թյունից տարբեր որևէ այլ աշխատանք չէր
կարողանում կատարել: Այդ էր պատճառը,
որ Ամենայն Հայոց կաթողիկոսները, ժամա-
նակավորապես, վարդապետարաններ պահ-
պանեցին Արարատյան դաշտի կամ Սյունի-
քի մեջ մի կերպ դեռևս չեն մնացած վան-
քերում:

Մինչև ժեղ դարի առաջին կեսերը Հայաս-
տանում կազմակերպված մի յուսավորու-
թյան կենտրոն չկար: Արևելյան մասը դեռ
նոր էր հայաթափ եղել Օսմ Արքայի կող-
մից:

Ընդհանուր կերպով բոլոր վանքերն ան-
շքացել էին և գրեթե ամբողջությամբ զրկվել
իրենց անցյալի փառքից ու պերճությունից:

Կրակի ու արյան հեղեղի մեջն իսկ գտնե-
վեցին անձնուրաց գործիչներ, որոնք հնա-
րավոր չափով անհնար փորձեցին. լույսի
ջահը վառ ու բարձր պահելու համար, սր-
պեսզի փարատվի համատարած խավարը
Հայաստան աշխարհից: Դրանցից մեկն է
ահա լուսամիտ Սրապիոն կաթողիկոս Եդի-
սացին:

Սրապիոնը «աշակերտած Ղուկաս Կեղե-
ցի վարդապետին, որ էր գլուխն ամենայն
վարդապետաց ժամանակին, և անկե ընդու-
նած էր վարդապետական գալազան,

¹ Հանդես ամսօրյա, 1917—18, էջ 70:

² Օրմանյան, նույնը, էջ 2261:

³ Խաչիկյան Լ., Ժեղ դարի հայերեն ձեռագրերի հի-
շատակարաններ, հատ. 1, Երևան, 1955, էջ 561:

⁴ Անադոլոս Է., Հայոց անձնանունների բառարան,
Երևան, հատ. Դ, 1848, էջ 509:

⁵ Խաչիկյան, նույնը, էջ 561:

1586 թվի փետրվարի 20-ին..., և ինքն այնուր աշակերտություն բացած, և նշանավոր վարդապետներ նուստուցած: Այսպես ելան, Գրիգոր Կեսարացի, Բարսեղ Ամդեցի, Հովհաննես Ուտիսեցի, Արիստակես Տարոնեցի, Հովսեփ Հզո:եցի, Հովհաննես Հզո:եցի, Հովհաննես Քաջբերունի և Մովսես Տաթևացի»:

Հիշված վարդապետներից Մովսես Տաթևացին հետագայում կաթողիկոս դարձավ և Էջմիածնի վերադարձների գլխավոր հեղինակը հանդիսացավ իր երկու անմիջական հաջորդների՝ Փիլիպոս Աղբակեցու և Հակոբ Ջուղայեցու հետ:

Ս. Էջմիածնի դպրոցը ԺԷ դարում

Ս. Էջմիածնի ԺԷ դարի դպրոցը «Հարանց Անապատի» և Ամրտոլուի մեծ դպրոցի օրինակով կազմակերպվեց: Այս դպրոցներն իրենց լույսն ու ավանդությունները փոխադրեցին Էջմիածնի և նոր փայլով այնտեղ վառեցին շիջած լուսավորության ջահը. «Այուրյաց դպրոցը՝ Ամրտոլուի դպրոցի ուղղությամբ պատվաստված փոխադրվեցավ Էջմիածնի և իսկապես բարերար դեր մը կատարեց, մաքառելով տգիտության դեմ, իբր առաջնորդ վերածնության շարժումի մը»¹:

Ս. Անապատի անապատում (այժմյան Երևան քաղաքի ս. Ջորավոր եկեղեցին) Մովսես Տաթևացու գործունեությամբ հիմն է դրվում Երևանյան վարդապետարանի գործունեության, որ Տաթևացու կաթողիկոսանալով իր ծաղկման բարձրակետին է հասնում: Աստիճանաբար քայլեր են առնվում վարդապետարանը նորից Մայր Աթոռում հաստատելու համար, որին քաղաքական և տնտեսական լուրջ արգելքները խանգարում են:

Ս. Անապատի անապատի մասին Դավրիժեցի վկայում է. «Բնակեցաւ անդէն վարդապետն իւրովք միաբանօքն, կարգաւ և սահմանաւ այն, զոր կարգեցին ի Մեծ Անապատն: Առ որ ժողովեցան միաբանք բազումք, միայնակեացք և գրոց աշակերտք իմաստունք և սրբակեացք. կաին ի միասին մեծք և փոքերք սիրով հանդերձեալք ի խցի, հանապազօր կանխեալ յաղօթս և յընթերցում սուրբ գրոց»²:

Մովսես Տաթևացու գործունեությունը հրաճ բոլորին սիրելի դարձրեց: 1629 թվին միաձուլությամբ կաթողիկոս րնտրվեց: Մովսես կաթողիկոս անօրինակ թափով լըծ-

վեց շինարարության: Ջաքարիա Վաղարշապատցին հետևեալ կերպով տալիս է այդ գործունեության բնութագիրը. «Ջաթոռ սուրբ ի յալբեազ ի վեր առեալ հաւասար արար երկնից»³:

Իր խմբողջ գործունեությունը եկեղեցու պայծառացման, ուսման տարածման նվիրած Մովսես Տաթևացու շուրջ խոստովանելից և ջանասեր աշակերտներ խմբվեցին: Մատենադարանի ձեռագրի հիշատակարանում այդ մասին կարդում ենք.

«Ջաքարիա եթ թաճի սպասաւորը՝ կոչմամբ վարդապետ, աշակերտ գոլով, մեծի եւ տիեզերահոյակ երկրորդ լուսատուին հայոց և վերստին նոր նորոգողի սուրբ Էջմիածնի»: Այնուհետև Ջաքարիան թվում է իր աշակերտակիցների անունները, «առաջնորդ մեծի անապատին Ստաթեի արի և Շգնագեաց Արիստակեսն Շամբեցի, Խորայն վարդապետ Մեղրեցին... վարդապետաց վարդապետն Եաչատուր Կեսարացին՝ առաջնորդն մեծին Ջուղայու, Փիլիպոս Աղբակեցին, Նաչատուր Երջնկացին, Յակոբ Աստապատցին» և այլն⁴: Վերոհիշյալները ալագ սերունդի սաներից են: Մատենադարանի № 507 ձեռագիրը մեծ տվյալներ է հայթալթում կրտսեր աշակերտների մասին: Հիշատակարանը գրված է 1636 թվին Էջմիածնի Ջաքարիա արքեպիսկոպիտից: «Մովսես քաջ րաբունապետ... եկեալ լուսատրեաց գաշխարհս մեր...»: Գովեստով խոսում է իր ընկերների մասին, որոնցից են՝ Միհաս, Հովհաննես, Ջաքարիա, Հովսեփ, Նաչատուր և Պողոս: Ինքը Ջաքարիան կրտսերներից է. «Եւ մանկագոյն աշակերտքս՝ որ պատուաստեալ եմք առ ոստ՝ սորա գտէր Յովհաննէս և Էս նուաստ Ջաքարիաս Էջմիածնեցի, գտէր Նաչատուրն, գտէր Յակոբն, Առաքելն, որ կարի տկարն է մարմնով... սարկաւագ Եսային, լուսարար Ջաքարիայն և ջահրնկալ մանկունքն՝ Ղուկասն և Ղազարն, և խոհարար Կարապետն և այլ միաբանք սուրբ ոխտիս, որ կամք առ ոստ սուրբ վարդապետիս տեառն Մովսիսի»⁵:

Այս ազգագույն գործունեության լուրջ գույքարար անձրևի պես տեղաց կրթության ծառայի հալ հոգիների վրա, որոնք շտապեցին դեպի Էջմիածնի մաս առնելու աշխատանքից կամ կրթվելու, իրենց հերթին կրթությունը տարածելու համար խավար մնազած տիեզերում: Ս. Անապատի անապատը հասավ մեծ անունի ու բարձրության և աշխտանալիս ճանաչվեց որպես Ամենայն Հայոց կաթողիկոսարանի գործող վարդապետարանը:

¹ Օրմանյան, Բ. 2-րդ, էջ 2882:

² Ալպիշանյան, Տոլմե, էջ 461:

³ Պատմություն Առաքել վարդապետի Դարիմեցի, Վաղարշապատ, 1896, էջ 285:

⁴ Մատենադարան, ձեռագիր № 201, էջ 812ա:

⁵ Մատենադարան, ձեռագիր № 201, էջ 812ա:

⁶ Մատենադարան, ձեռագիր № 507, էջ 823ա-ր.

Այնտեղ պատրաստվեցին բազմաթիվ գործիչներ: Սերունդը պատրաստողներից մեկն էր նաև Սելքիսեղեկ Վժանցի, որ Լիմ ահապատից (Վան) գալիս է ս. Էջմիածին: Նա իր ժամանակի գիտուն մարդկանցից մեկն էր: Վժանցի իր ուսուցչական գործունեությունը ծավալում է Երևանում և Էջմիածնում: «Եւ լիներ յորժամ Սելիքսեթ վարդապետն կանխէր ի դաս եւ ի քարոզ, իբրև գլորձանս ուլխիք և հեղեղաց ընթանայր բանն ի քերամոյ նորա, յորոյ իմաստութիւնն ամենեքեան ապուշ եղեալ՝ հիանային և բաղձային»¹³:

Սելքիսեղեկ վարդապետ Վժանցու դասախոսությունները ոգևորություն և հիացում են առաջ բերում իր ունկնդիրների շարքերում, սակայն արդյունքը համեմատաբար մեծ չէր, որովհետև նյութը աշակերտների գլխից վեր էր մնում շատ անգամ, նրանք չունեին անհրաժեշտ մախապատրաստական պատրաստությունը, և մեղ էր նրանց մտահորիզոնը հասկապես «արտաքին գիտություն»-ների մարզում:

Այնուամենայնիվ Սելքիսեղեկ Վժանցին չի հուսահատվում և մեծ նվիրումով շարունակում է իր դասախոսությունները ս. Ահապատի անապատում: Նա ոգի ի թոին աշխատում է իր պարզամիտ ունկնդիրներին ծանոթացնել Դավիթի Սահմանաց գրքին, Պրովիտրի Վերլուծություններին, Արիստոտելի Ստորոգության, Պերիարմենիասին, Աշխարհացն և այլն:

Սելքիսեղեկի դասախոսությունները այնքան բարդ էին թվում իր հազիվ նախնական գիտելիքներ ունեցող աշակերտներին, որ նրանք հետազայում էլ առանց քաշվելու խոստովանում էին իրենց համար այն ժամանակ դժվարիմաց թվացող այդ նյութերը: Ակինյան գրում է. «Հավանական է կարծել, թե ինչպես Մեծ Անապատի և Լիմ Ահապատի մեջ, նույնպես հոս ամենահետաքրքրական երևցավ դասախոսություններու նյութը: Կգրե գոնե Ոսկան թե իրեն համար անմարսելի էին անոնք»¹⁴:

Վժանցու դասախոսությունները այս ձևով շարունակվում են մինչև այն ժամանակ, երբ Լեհաստանից վերադառնում են խաչատուր Կեսարացին և իրեն ընկերացող երիտասարդ արեղաները, որոնք գնացել էին այս քարելու լատինացման դեմ և լատինական հոգևորականության բովանդակ կրթված հրետանու դեմ ցույց էին տվել միայն հարդա միզակներ: Հայրենիք դառնալով նրանք երգել էին զինվել հակառակորդի բոլոր

զենքերով և գերազանցել նրան իր իսկ զենքերի պատրաստության և գործածության ասպարեզում: Իսկ այդ անելու համար, նրանք շատ լավ հասկանում էին, թե պետք էր հաղթահարել այսպես ասած արտաքին գիտություններին:

Էջմիածնի միաբաններից Վժանցուն աշակերտել են Սիմեոն Ջուլայեցին և Ոսկան Երևանցին: Սիմեոնը Փիլիպոս Աղքակեցի կաթողիկոսի ժամանակ հանդիսանում է Էջմիածնի վարդապետարանի սյունը, իսկ Ոսկանը տպագրության գործում մատուցանում է լավագույն ծառայություն, հրատարակելով Աստվածաշունչը և ուրիշ գրքեր: Վժանցու համբավը այնքան մեծ էր, որ հեռավոր Լեհաստանից, Ղրիմից գալիս էին իրեն լսելու:

Մովսես կաթողիկոս անջքացած Էջմիածինը նյութապես նորոգելուց քաջի, այնտեղ հիմք է դնում հոգևորականներ պատրաստելու հատուկ բարձրագույն մի դպրոցի, որտեղ, շնորհիվ Վժանցու դասախոսությունների, զարգանում են «ոճս և գիտութիւնս արտաքին գրոց և արուեստ քերականութեան», որոնք ըստ Դավրիժեցու «քնալին բարձրեալ և անհիւս լեալ էին»:

1832 թվականին վախճանվում է Մելքիսեղեկ Վժանցին, և իր վախճանումով վերջ են գտնում այնքան հետաքրքրություն և աշխույժ առաջացրած «արտաքին գիտություն»-ների: դասերը:

Վժանցու աշակերտներից ամենից հաջողը ու ամենից նշանավորը հանդիսացավ Սիմեոն Ջուլայեցին, որը 1840 թվին, Փիլիպոս կաթողիկոսի օրով (1833—1855), վերադառնում է Էջմիածին և ստանձնում նրա վարդապետարանի տեսչությունը և արտաքին ուսման դասավանդման պարտականությունները:

Ղուկաս Կարանցին էլ այս դպրոցի սաներից է: Նա թողել է մի ձեռագիր. որի մեջ ամփոփել է ավանդվող արտաքին գիտությունների նյութերը:

Մովսես կաթողիկոսին հաջողվեց վերջ տալ Էջմիածնի ողբալի դրության և հանդիսացավ Էջմիածնի վերանորոգիչը: Խաչատուր Կեսարացի վարդապետը իրավունք ունի ասելու «կրկին լուսավորիչ եղև հայկազուն սեռիս, նորոգելով զսուրբ Էջմիածինն և զեղծեալ կարգս մեր, որ ի թուլութենէ լառաջնոցն»¹⁵:

Մովսես Տաթևացին ընդարձակեց և բարձրացրեց նաև Հովհաննավանքի դպրոցը, այն դարձնելով կաթողիկոսարանի վարդապետարան: Այդ մասին Դավրիժեցու մոտ կարդում ենք. «Այլ և հոգեւից սուրբ վարդապետս տէր Մովսէս կարգեաց գղարատուն և

¹³ Պատմություն Առաքել վարդապետի Դարիժեցւոյ, Վաղարշապատ, 1898, էջ 388:

¹⁴ Ակինյան, «Մովսես կաթողիկոս», էջ 202:

¹⁵ Աղայան, Տույնը, էջ 448:

սեծալիառ սուրբ ուխտն Յօհաննականք, որ ժողովեաց մանկունս յոլովս»¹⁶:

Նույն դպրոցի մասին ժամանակակից հիշատակագիր Լուկաս Գառնեցի 1631 թվին հետևյալն է ասում. «Եւ արդ, եղև սկիզբն եւ կատարումն այսմ գծագրութեանս ի յերկիրս Արարատեան, ի յոտն Արագածու, ի սահմանս գիողաքաղաքին Կարբու՝ ի հրեշտակարանկ մեծաստանս Ս. Կարապետի, ընդ հովանեաւ քարծրաքերձ երկնահանգիստ սուրբ Աստվածածնի տաճարիս որ մակադրեալ յորջորջի Յոհաննականք, որ է այժմ դպրոց, և ժողովեալ կան յոլով համբալատիս մանկունք ի յուսումն եւ ի վերծանութիւն Աստուածաշունչ գրոց՝ հրամանաւ եւ ծախիւք տեառն Մովսեսի սրբազան կաթողիկոսի ընդհանուր հայկազյան սեռի կրկին յուսավորչի...»¹⁷:

Փիլիպոս կաթողիկոս Հովհաննականքի այս դպրոցը փոխադրեց Էջմիածին, այնտեղ վանահայր և դպրոցի տեսուչ թողնելով Զաքարիա Վաղարշապատցուն, որը քարեխրոնոգրէն պահպանում է վանքի դպրոցական ավանդությունները: Այդ դպրոցի աշակերտներից մեկն է Զաքարիա սարկավագ պատմիչը, որն իր ուսուցչի գործունեության մասին գրում է. «Հաստատեաց եւ դպրատունս եւ գնուաստութիւնն իմ կարգեաց ուսուցիչ մանկանց»¹⁸:

Այլոյաճյանը անդրադառնալով Զաքարիայի այս տողերին գտնում է, թե Հովհաննականքի այս նոր դպրոցը գոտ ժողովրդական էր և կապ չուներ հոգևորականներ պատրաստելու գործին հետ: Այս կարծիքը մասամբ միայն ճիշտ է: Վանական դպրոցներ միշտ էլ առաջնահերթ նպատակ են ունեցել կրոնավորներ պատրաստել, սակայն Մովսես Տաթևացիի դպրոցի դուռը բացում է անխտիր բոլոր հայերի առաջ, հոգևոր ասպարեզի ընտրությունը թողնելով աշակերտի կամքին: Լուսամիտ հայրապետի նպատակն էր յուսավորել իր ազգը, դրա հետ զուգընթաց պատրաստել հասարակական գործիչներ՝ հոգևորական և աշխարհիկ կյանքի ու գործունեության համար:

Այսպես, Էջմիածնի դպրոցից դուրս եկած աշակերտների ձեռքով սկսվում է վերանորոգչական մեծ մի աշխատանք. «Շինեցան եկեղեցիք ի գեղաստանս, զարդարեցան վանօրայք պարկեշտ կրօնիւք և առաքինաց միայնակեացք յանապատս: Եւ զի՝ է քեզ, գրեթէ ամենեւիմք առաքելամամաւ էր շնորհաց տարածումն»¹⁹:

Մովսես Գ Տաթևացու (1629—1632 թթ.) հաջորդում է Փիլիպոս Ա Աղբակեցի (1633—1655 թթ.): Փիլիպոսը իր ժամանակի ուսյալ հոգևորականներից է եղել: «Լուսաւորէր զամենայն մարդիկ իբրեւ զարեգակն»: Խնամքով կրթված նորաբաց վարդապետարանի իղեայներով և իր սեծալիաստակ ուսուցչի օրինակով՝ Փիլիպոս Աղբակեցի ջանաց ըստ ամենայնի արժանավոր կերպով ի սպաս դնել իյ բոլոր ընդունածը իր սիրելի ազգի բարօրության համար:

Ժամանակակից մի հիշատակագիր (1651 թ.) հետևյալ գնահատականն է տալիս Փիլիպոս Աղբակեցու կաթողիկոսական և դպրոցական գործունեության. «Նստոցիմ յաթոռ հայրապետութեան զհարց մեր, զսուր Փիլիպոս վարդապետն. ի թոխն ՌԶԲ ամին, յոր եւ սկիզբն կաթողիկոսութեան իւրոյ. գորացաւ ևս հանդեսի կրօնիւք և ամենավայելունչ քաղաքավարութեամբք, և եից աշխարհս ուղիւ կարգօք և կրօնատրօք և ընդարձակեաց դպրոցս և դասստունս և ժողովեալ յոլով մանկունս՝ տալ յրջեցեցումն աստուածային բանից, յորոց ժամանեալ յարբուն ուսման և հասակին պարգևէ արժանատրացքն իշխանութիւնս և շնորհս և վիճակս, որք արձակեցան ի բազում տեղիս եւ տակաւին ևս գիտեն արձակեայ»²⁰:

Փիլիպոս կաթողիկոս Աղբակեցի, ինչպես վկայում է Դավրիժեցի, «յետ ամաց ինչ», ենթադրաբար 1640 թվին, Հովհաննականքում գործող վարդապետարանը վերջնականապես փոխադրում է Էջմիածին:

Այս մասին շատ հստակ է Դավրիժեցու ջոցմունքը. «Եւ զդպրատունն զոր ի Յօհաննականք հաստատեցին, սա ևս կարի հաստատեաց, և ուսմամբ և առաքինութեամբ վարձեալ հասուց ի կատարելութիւն. և յետ ամաց ինչ փոխեաց ի Յօհաննականից և երբ ի սուրբ Էջմիածինն»²¹:

Աղբակեցին վարդապետարանը տեղավորում է Մովսես Տաթևացու կառուցած շինություններից մեկում, վանքի արևելյան թեփում: Չամչւանց էլ վկայում է. «Ենաց Փիլիպոս կաթողիկոս և դպրատուն մեծ լէջմիածին, ուր ժողովեալ զմանկունս՝ ետ մարգել գնուս յուսումն, կարգեալ նոցա դասատու զՍիմոն վարդապետ Զուղայեցի, զաշակերտ Մելքիսէթ վարդապետի, որ և յետ ուսուցանելու նոքա զարուեստ քերականութեան՝ եւ անտի և շրջեալ յայլ և այլ տեղիս հոսակ յետոյ գնաց յեղդուկիս և անդ մեռաւ յամի

¹⁶ Դավրիժեցի, նույնը, էջ 307:

¹⁷ Դավրիժեցի, նույնը, էջ 307:

¹⁸ Զաքարիա սարկավագ, Պատմություն, Գ ԺԶ:

¹⁹ Մատենադարան, ձեռագիր Մ 2808, էջ 888բ:

²⁰ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր Մ 1502, էջ 528ա:

²¹ Դավրիժեցի, նույնը, էջ 325:

1657»²²։ Դավրիժեցի՝ թվարկում է Ջուղայեցու դասալուսնողած առարկաները. «Նախ՝ սկիզբն արարին ի քերականութենէն, և ապա գարտաքին գրեանքն բովանդակ մինչև ցվերջն. զկնի նորին գթողութն Պօլոսի՝ գերայեցուց զյուսին, և ամենքեան օգտեալք և յուսաորեալք յիմաստից սորա, որք էին քառակն ինքեանց և այլոց»²³։

Սիմեոն Ջուղայեցու ուսումնական գործի մաս է կազմել նաև դասագրքերի պատրաստությունը։ Այսպես, Հավուց թառում մա գրել է «Արտաքին գրոց» իբր ներածություն այդ անվան տակ ավանդված առարկաների և «Տրամաբանություն»։ Տպագրում է նաև Պրոկղի վրացերենից թարգմանված իմաստասիրական մեկ երկը։ Սիմեոն Ջուղայեցու գրական վաստակի մասին յուրջ ուսումնասիրություն ունի պրոֆ. Վ. Չալոյանը (Պատմա-քանասիրական հանդես, 1958 թ., էջ 136—141)։

Այս դպրոցներից դուրս եկած գործիչները տարածվեցին թեմերում և Մայր Աթոռի օրինակով կրթական կյանք ու գործունեություն կազմակերպեցին ամենուրեք։ Մայր Աթոռում ևս ստեղծվեց կշիռ ու հեղինակություն ունեցող պատկառելի մի միաբանություն։ Դավիթ Բաղիշեցին նշում է այդ ուրախալի երևույթը. «Աչօք մերովք տեսանեմք ի Ս. Էջմիածին անթի վարդապետք և արեղայք խարազանագեստք, կրոնաորք անելի քան 500»։

«Նախ Յակոբ վարդապետ Ջուղայեցի, որ լետոյ կաթողիկոս. Զաքարիա Վաղարշապատու, խաչատուր Ագուլեցի, Ծալի Երեմյակայ, միս խաչատուր Ասպահանցի, Գրիգոր Կեսարացի, Կարապետ Մոկացի օծեալ ձեռամբ սորա. Յովհաննէս Ուռայեցի, Բարսեղ առաջնորդ Ամրոյ Գալուցի, խաչատուր վարդապետ աշակերտ Բուժիկ Յովհաննէսի աշակերտի Բարսղի, որ շինեաց զԱմրոյու ս. Յովհաննէսն այս խաչատուր և Յովհաննէս Բաղիշեցի և Մեսրոպ վարդապետ քաջ քարտուղարն և լցեալ շնորհօքն հոգւոյն սրբոյ Բաղիշեցի, որ թուին ՌՁԷ (1638) օծեալ եղև եպիսկոպոս և նոյն ատուր ընկալեալ գաւազան վարդապետութեան. ձեռամբ այս Փիլիպպոսի սրբազան կաթողիկոսի և շնորհեալ առաջնորդ մայրաքաղաքին Բաղիշու... այլ եւ զթիւ վարդապետաց ժամանակի սորա ո կարէ ընդ գրով արկանել. զի ձեռնադրեաց անելի քան զչորս հարիւր եպիսկոպոս եւ վարդապետ որոց

ամենեցուն վերակացու և գլուխ Յակոբ վարդապետ Ջուղայեցին էր»²⁴։

Ս. Էջմիածնի դպրոցը Հակոբ Դ Ջուղայեցու օրով

Հակոբ Դ Ջուղայեցին (1655—1680 թթ.) իր ուսումը ստացել է Նոր Ջուղայի և Էջմիածնի դպրոցներում, խաչատուր Կեսարացու և Փիլիպպոս կաթողիկոսի շնչի ներքո։ Զաքարիա պատմիչը հաղորդում է, որ Ջուղայեցին խաչատուր Կեսարացուց «ուսաւ զամենայն վարս առաքինութեան» և զամենայն գիտութիւնս Աստուածաւիճ գրոց. և եղև կուսակրօն քահանայ»²⁵։

Հակոբ Ջուղայեցին իր ուսուցչի վերջին տարիներին եղել է Էջմիածնի վարդապետարանի զիսավոր դասախոսն ու վարիչը, կաթողիկոսի աջ բազուկը նրա վարչական և դպրոցական գործերում։

Հակոբ Ջուղայեցին ավելի մեծ եռանդով առաջ է մղում հայրապետանոցի վարդապետարանը։ Հարստանում է նաև վանքը։ Մի հիշատակագիր այսպես է նկարագրում այդ. «Սովա և ի ծեռն սորին յաւելուն եւ սպասք յոլովք և անօթք քազմաթիւք մեծի տաճարիս, ընդ որս եւ մատենից գումարութիւնք ի մի ոչ սակաւք և նոցին խոկացօղք եւ ի նոյնս պարապօղք յօգնականառք»²⁶։

Ջուղայեցու օրով ս. Էջմիածնի վիտրն է հանդիսանում Ստեփանոս վարդապետ Լեհացին։ Նրա թարգմանություններից են. «Յովսեփոսի պատմագրութիւն», ինչպես նաև «Ի գրոց պատճառաց Արիստոտելի կամ ոմանց թոփ Պրոկղի», «Գիրք բնագրական Արիստոտելի և յունմունք նորին», «Բանք իմաստաօրինականք եւ աստուածաքանականք համառօտաբար իբր սահմանօրեն արտադրեալք եւ հաւաքեալք ըստ այբուրենից»։ Այս վերջինները գոտ փիլիսոփայական աշխատություններ էին, իսկ նրա կրօնական-աստվածաբանական թարգմանություններից հայտնի են «Գիրք սրբոյն Դիոնիսիոսի Արիստագացոյ յաղագս երկնայնոց քահանայապետութեանց», «Հայելի վարուց որ կոչի ֆրանկաց հարանց վարք», «Համառօտ հաւաքումն յաղագս հրեշտակաց», «Բուրաստան աղօթից», «Գիրք Յեսուայ որդւոյ Սիրաքայ» աստվածաշնչական գրքի թարգմանությունը այս շարքում հատ-

²² Աղանյան, Դիվան, Ժ, էջ 51—52։

²³ Զաքարիա սարկավագ, Պատմագրութիւն, Էջմիածին, 1870, Բ. Բ, էջ 80։

²⁴ Մատենադարան, ձեռագիր № 881, էջ 502ա։ Այս մասին տես նաև «Յուդակ Ձեռագրաց», Ա. Բ., Երևան, 1965, Օ. Եկանյանի ներածությունը, էջ 19—20։

²⁵ Չալոյան, Պատմություն հայոց, Բ. Գ, էջ 819—820։

²⁶ Դավրիժեցի, էջ 405։

կանչակազմ տեղ է բռնում: Նույնը կարելի է ասել Ղուրանի թարգմանության մասին, որը վերնագրված է «Գիրք օրինաց հազարաց-
ուց կամ իսմայելացուց որ կոչի Ղուրան,
այսինքն, հատաքումն պատուիրանաց,
թարգմանեցաւ ի լատինացոց թարգմտել ի
լեզու հայոց աշխատասիրութեամբ իմաստա-
սէր Ստեփանոս Լեհացոյ»:

Այս բազմադրյուն փոխառյալ վարդապե-
տը հռչակվել է մաս իբրև նկարիչ: Վախ-
ճանվել է 80 տարեկան հասակում, 1689
թվին և թաղված է ս. Հռիփսիմեի վանքի գե-
րեզմանատանը²⁷:

Ստեփանոս Լեհացին իր թարգմանություն-
ները կատարել է Էջմիածնի դպրոցի ուսման
մակարդակը բարձրացնելու համար և այդ
գրքերից մի քանիսը «գտագործել է որպես
դասագիրք: Իր օրով Էջմիածնում հավաք-
ված գրասեր և գիտնական վարդապետների
մասին ուշադրության արժանի տվյալներ է
հաղորդում ինքը՝ Ստեփանոս Լեհացին, իր
Ինոնիսիտո Արիսպագացու աշխատության
1682 թ. լատիներենից կատարած թարգմա-
նության հիշատակարանում, որտեղ ասվում
է, որ թարգմանությունը կատարել է «ի
խնդրոյ բարեմիտ եղբարցն, որք ի սուրբ
Աթոռս Էջմիածնին, ի հրահանգս իմաստա-
սիրութեան կրթելից զանձինս իրեանց, քան-
զի զայսու ժամանակաւ բազումք էին երե-
ւելիք վարդապետք քաջաբանք, բանաս-
տեղծք, աստուածային գրոց քաջ գիտունք
և հմուտք յորոց մի էր և Առաքել վարդա-
պետն, քաջ բարունի և փառասան, որ գժա-
մանակագրութիւնս հայրապետաց և թագա-
ւորաց գեղեցկաբարձար քանիք դրոշմեաց և
իր իշատակն անջնջելի եղող»²⁸:

Լեհացու ակնարկած Առաքել վարդապետը
Դավրիժեցին է: Նա ծնվել է ԺԶ դարի վեր-
ջում, Թավրիզ քաղաքում: Ուսումն ստացել
է ս. Էջմիածնում Փիլիպոս կաթողիկոսի
հովանու տակ, ձեռնադրվել է վարդապետ:
Վարել է զանազան վարչական պաշտոններ:
Հակոբ կաթողիկոսի ժամանակ եղել է վար-
դապետարանի ուսուցիչ: Նշանավոր է իր
գրած «Պատմություն»-ը:

Ստեփանոս Լեհացին սիրված ուսուցիչ է
եղել: Աշակերտները առիթը չեն փախցնում
նրա գովքը երգելու: Նա դասախոսություն-
ներից նպաստելու համար կազմակերպում
է վանական-դպրոցական խնամված և շատ
հարուստ գրադարան, որի ղեկավար է նշա-
նակում իր ջնդուցույ աշակերտներից Ներ-

սես սարկավագին: Մի հիշատակարանում
Ներսես սարկավագը ինքն իր մասին գրում
է. «Ես, ամենամեղ չար Ներսես ծառայ ձեր
և աշակերտ սրբոյ թարգմանչի քաջ հոռետ-
րի և անհաղթ փոխտփայի և թելադրողի
հրահանգիս Ստեփանոսի Իլուացոյ և բա-
հիբուն վարդապետին...»²⁹, մի ուրիշ տեղում
«գոսուցիչն իմ և զվարժիչն զՍտեփանոս
Իլովցի քաջ հոռետր և թարգմանիչ բարու-
նին, որ էր այդ լի շնորհօք և հանճարով և
սրբեալ հոգով սրբով, զի հանապազ ըստ
աստուածատուր պարգեւօքն զամենայն եղ-
բարս կատարելագործէր փոխտփայական
կրթութեամբ և թեպէտ հոսել յետին գիս:
Վասնորոյ հայցեմք ի տեառնէ Յիսուսէ
Քրիստոսէ մերմէ զի յորժամ նստի յաթոռ
փառաց հատուցէ զվարձս սորին միոյն հա-
զարապատիկ և բիր և բիրապատիկ և գյի-
շատակ իւր անխրամատելի պահեցէ»³⁰:

Հակոբ կաթողիկոսի օրով Էջմիածնի
վարդապետարանը հասել էր ցանկալի
բարձրության: Վալելում էր կաթողիկոսի
լայն հովանավորությունը և բազմաթիվ կա-
րող ուսուցիչների անխնայ ու լարված աշ-
խատանքի պտուղները: Ժամանակի գիտու-
թյունը կենտրոնացել էր Էջմիածնի վարդա-
պետարանում և ավանդվում ձեռնահաստերն:

Աշոտ Հովհաննիսյանը այս առիթով ա-
նում է հետաքրքիր եզրակացությունը. «Այս
վկայությունները կարևոր են որչափ հաղի-
շեցին այն հեղինակն է հենց, որ արժանա-
հավատ տեղեկություններ է հաղորդում
XV—XVII դարերի հայ վանական դպրոցնե-
րի ու նրանց նշանավոր դասապետների մա-
սին... Վանական յուսավորության մի շար-
ժում էր այս, որ սկիզբ առնելով Մովսես
Տաթևացու ջանքերով, զարգացման բարձ-
րակետին հասավ Զուղայեցու օրոք և հան-
գամանորեն նկարագրված է Լեհացու դր-
վատած Դավրիժեցու գրքում»³¹:

Հակոբ Դ Զուղայեցու վախճանումից հետո
սկսվում է այնպիսի մի շրջան: Եղիազար Ան-
թապի (1681—1691 թթ.) և Նահապետ
Ուռհայեցի (1691—1705 թթ.) կաթողիկոս-
ների օրով Էջմիածնի վարդապետարանը
զգալի վայրէջք է ապրում: Դա տիրող քա-
ղաքական պայմանների և եկեղեցու ներքին
կյանքում գոյություն ունեցող պայքարների
ու երկպառակությունների արդյունք էր: Զա-
քարիա սարկավագը այդ մասին գրում է.
«զկարգ և զկանոն առաջին կաթողիկոսացն

²⁷ Լեո, Հայոց պատմություն, հատ. Գ, Երևան, 1946, էջ 420:

²⁸ Իրատնագրարան, ձեռագիր № 5171, թերթ 388ա—389ա:

²⁹ Մատենադարանի ձեռագիր № 110, էջ 485բ:

³⁰ Աճղ, էջ 486բ—487ա:

³¹ Հովհաննիսյան Ա., «Դավրիժեցու հայ պատա-
գրական մտքի պատմություն», հատ. Բ, Երևան,
1959, էջ 164:

քաջայեցաւ ի սուրբ Աթոռոյն և ամենայն վանօրէից»³²:

Ս. Էջմիածնի դպրոցը 18-րդ դարում

ԺԸ դարի երեսնական թվականներին Էջմիածնի վարդապետարանում սովորել է ուրիշների կարգին նաև Սիմեոն Երևանցի, որը հետագայում կաթողիկոսական գահ բարձրանալով Էջմիածնի վարդապետարանում բացեց մի նոր ու փայլուն շրջան:

Սիմեոն Երևանցիին հայ եկեղեցու մեծ դեմքերից է: Անդրադառնում ենք միայն այն ամենին, որ ուղղակի կապված է Էջմիածնի վարդապետարանի նրա օրով կատարած աշխատանքներին:

Սիմեոն իր գահ բարձրանալը նա հռչակված էր իբրև լավ ուսուցիչ, քարոզիչ, վարչական և տնտեսական ղեկավարման լավ ջիղ ունեցող մարդ:

Սիմեոն Երևանցու ուսուցիչներն են եղել Հակոբ և Հովսեփ վարդապետները: Առաջինը Հակոբ Ե Շամախեցի կաթողիկոսն է, որի ձեռնադրումն ու հաջորդն է հանդիսանում Երևանցին: Նրա ուսանողական տարիների պատմությունը գեղազարդված է հրաշապատում դեպքերով, որոնք հաստատում են այն միտքը, թե Երևանցին ուժերի գերագույն լարումով միայն կարողացել է «մարդ դառնալ»³³:

Հնդուհեղով հոգևորական կոչումը, Սիմեոն Երևանցին շուտով դառնում է վանքի աչքառու դեմքերից մեկը և թե մանավանդ ուսումնական հարցերում, այնպես, որ երբ Կ. Պոլսի պատրիարք Հովհաննես Կոլոտը կաթողիկոսին խնդրում է Երևանցուն գործուղել իր մոտ, կաթողիկոսը չի համաձայնում և պատասխանում է. «Շատ համարեցիք մի տղայ սուրբ Աթոռի համար, որ նորան էլ ուզում եք հեռացնել այստեղից»³⁴:

Պատանի հասակում Սիմեոն Երևանցին ավարտելով իր ուսումը Մայր Աթոռի դպրոցում Աթրաֆան Մշեցու օրով, իր գիտելիքների և հեզ բնավորության շնորհիվ անմիջապես կարգվում է նույն դպրոցի ուսուցիչ և ադ օրվանից անվանվում է բոլորի կողմից «Սեդրոտը Երևանցի Սիմեոն»:

Օրմանյան սրբազան քննարկելով ժամանակի պատմիչների փաստարկումներն ու տվյալները այս հարցի մասին, եզրակացնում է.

«Սիմեոն Էջմիածնի դպրոցին ընթացքը կավարտե, օգտվելով մանավանդ Շամախեցիին ուսուցչությունեն, և անմիջապես նույն

դպրոցի մեջ ուսուցչության կը կոչվի, և առաջիկային նշանավոր հանդիսացող Մայր Աթոռ միաբաններ, բոլորն ալ Սիմեոնի աշակերտած և Սիմեոնով զարգացած ըլլալին պարծանոք կհիշեն»³⁵:

Երևանցու ուսուցչական գործունեությունը կաթողիկոսարանի վարդապետարանում կարելի է քաժանել երկուսի՝ նախքան կաթողիկոսության շրջան և կաթողիկոսական տարիները: Առաջինը կարճ է, քայքայողունակ: Սիմեոնը որքան վարժ էր աստվածաբանական գիտությունների մեջ, նույնքան էլ վարժ ու ձեռներեց էր հայկաբանության, շարադրության, երաժշտության, տրամաբանության, բեմասացության և քերթողության մեջ: Դասավանդելիս նա գիտելիքները իր ունկնդիրներին ոչ միայն իր գիտելիքներով, այլև իր անձով:

Իր հասցրած նշանավոր աշակերտներից կարելի է այստեղ հիշել Սիմաս և Իսահակ աստվծաբան եպիսկոպոսներին, Հովսեփ արքեպիսկոպոս Արդուրյանին՝ համայն Բուսաստանի առաջնորդ և ընտրյալ կաթողիկոսին, Հեղկաստանի հայտնի մկրակներ՝ Փիլիպոս, Ղուկկիան և Գրիգոր եպիսկոպոսները, Հովհաննես վարդապետը, Դավիթ և Դանիել կաթողիկոսները, Գալուստ եպիսկոպոս Ջուղայեցին, Մատթեոս վարդապետ Կեսարացին, Թադեոս, Գրիգոր Օշականցի՝ սարկավագները:

Ուսուցչական այս լարված ու քեղուն աշխատանքը ընդհատվում է Ղազար Ջահկեցի կաթողիկոսի հրամանով, որով Սիմեոն Երևանցին նշանակվում էր հայրապետական մկրակ: Այդ օրից սկսյալ Երևանցին կլանվում է վարչական ընթացիկ գործերով: Պարբերաբար Էջմիածին գտնվելիս ան առիթը չի կորցնում իր հոգուն հարազատ վարդապետարանում դասախոսելու համար:

Հազիվ կաթողիկոսական գահ բարձրացած Երևանցին Էջմիածին հրավիրում է գանգազան վանքերում որպես գիտնական ուսուցիչ անուն հանած վարդապետներ և նրանց հետ համախորհուրդ և ձեռք-ձեռքի ձեռնարկում է կաթողիկոսարանի վարդապետարանի բարձրագույն աշխատանքին: Թվեմք մի քանիսը նրա հրավիրած հայտնի ուսուցիչներից. Հարություն վարդապետ Բասենցի, Սահակ Ահագին, Ներսես ավագը (Աշտարակեցի կաթողիկոսի հորեղբայրը), Բարսեղ

³² Մ. արք. Օրմանյան, «Ազգապատում», մասն Բ, էջ 8021:

³³ Գրիգոր Օշականցին հետագայում դառնում է արքեպիսկոպոս և նշանավոր բանաստեղծ: Տես «Պատմա-քանոնական հանդես», 1864, № 4, էջ 101—118:

³⁴ Ջուղայեցի սարկավագ, Բ. Բ, ԾԲ, էջ 107:

³⁵ Աղանց, դիվան Գ, էջ 42:

³⁶ Նույնը, էջ 44:

կեսարացիք, Պետրոս Բերդումյան-Աղամալյան եպիսկոպոսը և այլն:

Լեոն այս վերջինի մասին գրում է. «Սիմեոն կաթողիկոսի ժամանակ ապրում էր Պետրոս եպիսկոպոս Բերդումյան-Աղամալյանցը, որ հռչակված էր իբրև գիտնական աստվածաբան և Էջմիածնի դպրոցի վարքն ու պարծանքն էր կազմում: Սակայն կենսագրական տեղեկություններ լուսավորչական եկեղեցու այդ աստղի մասին մենք չունենք: Հայտնի է միայն, որ նա նախիջևանցի էր և միաժամանակ գտնվում էր Կ. Պոլսում: Ունենք նաև նրա գրվածքների ցուցակը, ուր կան տասնից ավելի աստվածաբանական շարադրություններ: «Մեկնություն գրոցն ծննդոց», «Մեկնություն Հորա», «Մեկնություն Երգոց», «Մեկնություն հայտնության», «Մեկնություն թղթայն Պողոսի առ Եփեսացի», «Քարոզգիրք տարեկան» (2 հատորով), «Աղբյուր բացյալ հստակացն Քրիստոսի», «Այաշիարարան», «Գիրք Աղոթից» (2 հատորով), «Աստվածամամուկություն», «Կշիռ Արդարության», «Երգարան»: Այս շարադրություններից մի քանիսը տրված են, բայց ոչ հեղինակի կենդանության ժամանակ³⁷:

Պետրոս եպիսկոպոս Բերդումյան-Աղամալյանի բոլոր աշխատությունները այժմ սրահավաքվում են Երևանի պետական Մատենադարանում և գրանցված են № № 2856, 175, 8810, 2, 2718, 5887 և այլ ձեռագրերի համարների տակ:

Էլ ավելի սատարելու համար Մայր Աթոռում ծավալում շարժում դարձած կրթական գործին Սիմեոն Երևանցիին Վաղարշապատում հիմնեց թղթի գործարան և տպարան: Նրա հետավոր նպատակն էր վարդապետարանի զարգացման հետ Էջմիածինը դարձնել հայրենի գրականության և հայագիտության կենտրոնը:

Հովհաննավանքից Էջմիածին փոխադրվելուց հետո վարդապետարանը տեղավորվել էր մի ընդարձակ սենյակում, որը այնքան էլ հարմար չէր ուսումնական նպատակների համար: Երևանցիին ձեռնարկեց մի նոր ջենքով ապահովելու վարդապետարանը, որը ավելի նպատակահարմար լիներ դպրոցական կարիքներին: Նոր դպրոցի շինության մասին «Ջամբո»-ում կարդում ենք. «Երևանց գլխավորումսն և զգլխատունսն ձմռան և ամռան յատուկ յատուկ պարսպօքի հիսախակողմն յետ կոյս խցից միաբանիցն, յայնմար ըստ տեղուն և ըստ շինուածոյն, որպէս տեսանես: Զի յառաջ դպրատունն ներ

պարսպի միաբանիցն էր անյարմար ըստ տեղուն և ըստ կացութեան դպրացն, նեղ և նսնմ»³⁸:

ԺԹ դարի 40-ական թվականներին Ծախաթունյան եպիսկոպոսը տեսել և նկարագրել է այս դպրոցը. «Սիմեոն կաթողիկոսի Երևանցույ՝ որ հոգ տարեալ և ալնմ՝ ետ կառուցեալ ի Հիսիսակողմն Տաճարին ի միջոցս երկուց պարսպացն յարեւելս անդ միմատան՝ բաժանեալ ի նմանէ հաստատուն որմով, և ժողովեալ անդր գմանկունս ժառանգատրոս Տաճարին՝ կարգեաց նոցա ուսուցիչս. ուրանոր շարունակեցա ուսումն եկեղեցական ընթերցուածոց և երաժշտութեանց, և ինչ ինչ արտաքին դասասացութեանց՝ քերականութեան, ճարտասանութեան և տրամաբանութեան: Լինէր յայնժամ և ուսումն քարձրագոյն վարդապետական գիտութեանց՝ այն է, դրական աստուածաբանութեան և մեկնութեան սուրբ գրոց: Յայսմիկ ուսման վարդապետաց և սարկաւազաց վարժապետ յատկացեալ էր ակահաւոր մեծանուն եպիսկոպոսն Պետրոս Բերդումեանց կամ Աղամալեանց. Սահակ եպիսկոպոս Գեղամացի՝ որ և քաղցրանազ երաժիշտ»³⁹: Պատմական որոշ փաստեր նկատի առնելով, վերոգրյալը համընկնում է 1771 թվականին:

Սիմեոն կաթողիկոսի ս. Էջմիածնի ժամանակվա դպրոցի մասին խոսում է նաև Մսերյանը... «Պատմութիւն կաթողիկոսաց Էջմիածնի ի Սիմեոնէ մինչ ցժովհաննէսը» աշխատության 4-րդ էջում և երախտագիտությամբ հիշատակում, որ չնայած ս. Էջմիածինը հիշատակված ժամանակաշրջանում գտնվում էր պարսից քարքարոսական տիրապետության ներքո, սակայն Էջմիածնում դպրոցական գործունեությունը բնական շարունակվում էր մինչև Սիմեոն կաթողիկոսի վախճանումը:

Ղուկաս Կարնեցիին իր նախորդի վստահելի անձն ու մոտիկ գործակիցն էր ինչպես վարչական, նույնպես և դպրոցական հարցերում: Ընտրությունն էլ Սիմեոն Երևանցու հանձնարարությամբ տեղի ունեցավ:

Ղուկաս Կարնեցիին հայրապետական գահի վրա մնում է տասնիմեկ ու կես տարի՝ 1780 թվի օգոստոսից մինչև 1788 թվի դեկտեմբեր ամիսը: Ղուկաս Կարնեցիին իր նախորդի պես եղել է գրասեր անձնավորություն: Նա շարունակել է իր նախորդի թողա-

³⁸ Ջամբո, էջ 33—35:

³⁹ Հովհաննես եպիսկոպոս Ծախաթունյան, «Լուորազրութիւն կաթողիկէ Էջմիածնի և հինգ զառանգ Արարատայ» Հ. Ա., Էջմիածին, 1842, էջ 120—121:

³⁷ Լեո, Պատմություն, Գ. հատ., էջ 880: Մսերյան, Պատմություն կաթողիկոսացն Էջմիածնի, Մոսկվա, 1876, էջ 250:

ծը, ոչ անշուշտ նրա թափովն ու ծավալովը, և եթե որոշ ձեռնարկներ (ինչպես տպարանն ու թղթի գործարանը) դադարում են գործելուց, դա կաթողիկոսի անհոգության կամ ցանկության պատճառով չէր, այլ տիրող պայմանների ու մտայնությունների: Նա օգտավետ կերպով շահագործել է տպարանը, որտեղից իր ժամանակ լույս են տեսել գանազան օգտակար հրատարակություններ, որոնք աչքի են ընկնում իրենց խնամվածությանը:

Աթել եպիսկոպոս Մխիթարյանը գտնում է, որ Ղուկաս Կարնեցու ժամանակ ս. Էջմիածնի վարդապետարանը շարունակել է գործել Սիմեոն կաթողիկոսի գծած ուղիով ու ոգիով, ընթացել իր բնականոն հոսքով: Նա բառացի ասում է. «այսօրինակ տեսաց հաստատություն ուսումնարանին և յաւուրս Ղուկաս վեհի»⁴⁰:

Սահակ Մաղկարայ եպիսկոպոսը նույնպես վկայում է. «Յաւուրս Ղուկասու սրբազան կաթողիկոսին վարդապետն էր Կրծի անուանեալ Մարգար եպիսկոպոսն, գոր ինչ ընթերցեալ էին նորէն դաս-դաս տուաւ, և սաղմոսն փառք-փառք համար ասաւ: Յետոյ եղև Գաբի Եսայի վարդապետն վարժապետ, և նա ևս՝ սաղմոսն ետ ինձ բերան ա-

նել երեք-երեք (Գ—Գ) փառք. յետոյ կանոն. յետոյ Գ կանոնի համար առաւ»⁴¹:

Ղուկաս կաթողիկոսի վախճանումից հետո (1788) սկսվում է Ղուկա-Դանիելյան վեհերի չարաշուք ու երկար շարքը, որ մեր պատմության ամենից սև էջերից մեկն է: Հակառակ այդ իրողության ս. Էջմիածնի վարդապետարանը շարունակում է իր բարեբար գործունեությունը:

Դավիթ կաթողիկոսի օրով (1801—1807) վամակյան ժառանգաւորաց վարժարանը կազմալուծման է ենթարկվում:

Տիրող պայմանների քերտմով դպրոցի անվանական պահպանումն իսկ զարմանալի է և ցույց է տալիս, թե մարդիկ նրա անհրաժեշտությանը համոզված էին և եթե չէին կարող այն իր տեղում ու դիրքում պահել, հանցանքը իրենցը չէր: Ծահլաթունյան Հովհաննես եպիսկոպոսը այս դպրոցի տեղն ու պայմանները այսպես է ճշտում.

«Այս վերոյիշեալ տեղի ուսումնարանը տեսաց մինչև ի ժամանակս կաթողիկոսութեան Դաւթի Եմեկեթեցոյ. այլ զկնի այնր լքեալ զայն տեղի վասն գիճութեան և յաւախուտ գոլոյ շինուածոցն՝ պատրաստեցին տեղի ուսման մանկազն զվերնայարկին սրահի դրանց Տրդատայ՝ որ յարևմտակողմն մեծի տաճարի»⁴²:

⁴⁰ «Հայրենասեր», № 77, 1876, Զմյուռնիա:

⁴¹ Մատենադարան, ձեռ. № 6247, էջ 7բ:

⁴² Մատենադարան, ձեռ. № 6247, էջ 6:





Հ. Ժ. ՍԻՐՈՒՆԻ

ԿՈՄԻՏԱՍԻՆ ՀԵՏ՝

ԳԵԹՍԵՄԱՆԻՆ I.—Եղերավեպը

Ու ահա արդեն կսկսի մեծ վեպը: Էջերը որ կհետևեն պատմությունն են այլևս ահավոր դեպքերու որոնց պիտի չհավատա վաղվան սերունդը: Մեծ փոթորիկն է որ պիտի պայթի ու պիտի տապալեն դարավոր կառուցին: Ամբողջ ժողովուրդ մը Գողգոթա պիտի բարձրանա խաչը ուսին, ու պիտի զգեստնվի ճամբան: Ոչ ծերերը պիտի խնայվին, ոչ ալ մանուկները: Պիտի լվկվին հայ սրբությունները, ու պիտի խամրի հայ օճախը: Դարերու ավանդն է որ փոշի պիտի դառնա քաղաքակիրթ աշխարհին աչքերուն առջև, արքունիքով, սուգով, արյունով պիտի ծածկվի Հայոց Աշխարհը: Ժողովուրդ մըն է որ պիտի նահատակվի՝ որովհետև վազեց լուսին ետևեն, ու չուրացավ իր գերեզմանները:

Չորս տարի պիտի տևե այս անդոհաճքը, և իրարու ետևեն պիտի գրվին զարհուրելի էջերը եղերավեպի մը, որ նախընթաց պիտի չունենա հայ տարեգրությանց մեջ:

Կոմիտաս քստմեցեցուցիչ դրվագ մըն է այն մեծ վեպին մեջ: Պիտի խառնեն զայն ալ մահապարտներու հեք կարավանին, պիտի մանածեն հանգրվանն հանգրվան խաչի ճամ-

բուն վրա, բայց ողջ պիտի դարձնեն զայն սպանդեն, որպեսզի ավելի երկար տևե իր չարչալանքը, ու մինչ բովանդակ ժողովուրդ մը պիտի գալարվի արյան ճապաղիքներու սեջ ամբողջ չորս տարի աքսորի ճամբաներուն վրա, ինք ասդին պիտի տվայտի մի-նակը:

II.—Ճիվադին ոտնաձայնը

1914 հուլիս 28-ը սև թվական մը կարճագրեր հայ ժողովուրդի ճակատագրին մեջ ալ: Այդ օրն էր որ կսկսեր առաջին համաշխարհային պատերազմը:

Ան կպայթեր պահու մը, երբ հայ ժողովուրդը երազներով ու հույսերով բռնկած՝ դեռ կհավատար մոտալուտ արշալույսի մը որ իբրև թե պիտի գար ամոքելու դարավոր իր վերքերը, և բանալու իրեն վերելքի ճամբուն:

Սերայովայի ոճիքը, ամիս մը առաջ՝ 1914 հունիս 28-ին, որ պատրվակ պիտի դառնար շուտով աննախընթաց սպանդի մը, պահ մը ցնցեր էր աշխարհը. ցնցեր էր մեզ ալ, բայց դեռ չէինք անդրադառնար լիովին աղետներուն որ մեզ կսպասեին:

Երբ, 1914 հուլիս 28-ին, Ավստրիա պատերազմ կհռչակեր Սերբիո մեջ, արդեն սարսավոր մեզ ալ պաշարեց: Ռազմի շեփորը արթնցուց մեզ մեր ցնորքներեն, և ամեն ինչ խորտակեց մեկեն մեր հոգիներուն մեջ:

Հնչակյաններու ձերբակալությունը երկու օր հետո, այն է հուլիս 17/30-ին, Պոլիսը հա-

*Գարունակված «Էջմիածին» ամսագրի 1905 թվականի ՌՆԱ Ա-ից, Ե-Ժ-ից, 1906 թվականի ՌՆԱ Ա-2-ից, Ը-Ժ-ից, 1907 թվականի ՌՆԱ Գ-2-ից և 1908 թվականի ՌՆ Ա-ից:

մակեց նոր սարսափով մը: Պահ մը ոչ ոք չգիտցավ թե ինչո՞ւ կձերքակալվեին անոնք, ոչ ալ համրանքը գիտեինք բանտ նետվողներուն: Կզգայինք միայն որ դժնդակ շրջան մը կրացվեր հանկարծ մեր առջև, այնքան անուշ երազներն հետո: Կնախագայինք արդեն թե թուրքը պիտի լուծն վրեժը այդ երազներուն, ու պիտի պատժեն լավ օրեր հուսացած ըլլալու մեր հանդգնությունը:

Ու երբ, 1914 հուլիս 23-ին (4 օգոստոս), գորացած կհայտարարեր Թուրքիա, մեր սարսափը ավելի լրիվ եղավ: Այլևս պարզ էր թե թուրքերը պիտի դիմեն նոր արկածախնդրության մը, և ուշ կամ կանոխ պիտի նետվին իրենք ևս կրակին մեջ: Շատ դառն էր հարվածը գոր կրեր էին Տրիպոլիսը իտալացիներուն հանձնելով քանի մը տարի առաջ, ինչպես և նվաստությունը որուն ենթարկվեր էին դեռ նոր քաղկանյան պատերազմին մեջ: Ամորը արքել կուգեին, հոգ չէր թե նոր արկածախնդրության մը գնով: Անոնք անպատճառ պիտի մտնեին հետևաբար պատերազմին մեջ: Շատ ալ իմաստության պետք չկար կոտհելու համար որ իրենց հույները դրած էին Գերմանիո վրա: Իզուր էր որ անոնք իրենց բանակը կազմակերպելու հոգը գերմաններուն հանձնէր էին արդեն տարվան սկզբեն և մարզիչի, կազմակերպիչի դիմակին տակ գերման զինվորականությունը իր ձեռքն էր առեր թուրք բանակը: Լիման փոք Զանդերս փաշան իրականին մեջ հրամանատարն էր երկրորդ գորաբանակին, այսինքն նույն ինքն մայրաքաղաքին:

Ու դեռ լուր չուներինք գաղտնի համաձայնությունեն գոր 1914 օգոստոս 6-ին Թուրքիա և Գերմանիա կնքեր էին մոտալուտ գործակցության մը համար: Թուրքերը դեռ դիմակը վար առած չէին իրենց երեսն, հուսալով դեռ ատեն մը քնացնել մուս ճակատը, որուն հետ սիրալիի համբույրներ փոխանակեր էին դեռ նոր: Նույն այս ամառը ծովային նախարար Ընեմալն ու ելևտական նախարար Օավիտը Փարիզ էին լրկեր Ֆրանսիան օրորելու և անկե դրամ կորզելու համար, ու հաջողեր էին: Ո՞վ կարգելը զիրենք եթե այդ դրամը ծախսեին հիմա Ֆրանսիայի և իր դաշնակիցներուն դեմ կովելու համար:

Օգոստոսի 11-ին գերմանական Գեռեն և Բերնարդ մարտանավերուն հյուրընկալումը Դարդանելեն ներս, ուր անոնք կուգային ապաստանել՝ անգլիական նավատորմին հետապնդումեն խույս տալով, արդեն դիմակը պատռեց: Այլևս տարակույս չթողուց որ թուրքերն ու գերմանները արդեն դաշնակից էին, և որ թուրքերը ասպարեզ կնետվեն շուտով Վիլհելմի կողքին:

Մեր դողը աստիճան մը ևս կաներ: Թուր-

քը, ահավոր զինակցի մը կրթում, հաշվեհարդարի պիտի ենթարկեր անշուշտ ներքին իր բոլոր հոգերը: Ան ինքզինքը ազատ պիտի զգար այլևս իր ոխը առնելու մեզմե ալ:

Բարենորոգմանց հարցին հետ զուգընթաց՝ թուրքերը սկսեցին էին այդեն ցույց տալ իրենց ջղախությունը ամեն հնարավոր առիթով: Նման առիթներ էին եղեր, օրինակ, թուրք ժանդարմայի մը սպանությունը Ատափազարի մեջ տառերու գյուտի հոբեյանի օրերուն, դեպք որ դրդեր էր թուրք իշխանությունները հալածանքի և խուզարկությանց դիմել տեղվույն հայության տոնական ցունծությունը ասարափի մեջ խեղդելով, և Ջեթունի կարգ մը դասալիք հայ զինվորներու պարագան՝ որ պատրվակ էր ելեր թուրքերուն զինվորական արշավանք սարքել Ջեթունի վրա, ճգնելու համար արծիվներու դառավոր բույնը: Ու ասոնք՝ իբրև դեռ պատերազմի մեջ չէր մտած Թուրքիան: Ու ավելցուցեք ասոնց վրա հայերու դեմ կազմակերպված բոլկոտը զանազան զավաններու՝ մասնավորապես Սեբաստիո, Զմյուռնիո և Բոտսայի մեջ, զանազան վայրերու ինչպես Տիգրանակերտի և Ադրիանապոլսի մեջ սարքված հրդեհները՝ ուրոնց զոհ զացին առավելապես հայ թաղեր, և վերջապես այլազան ճնշումներ և հալածանքներ հայ հրոսակներ հետապնդելու, դասալիք հայ զինվորներ ձեռք անցնելու կամ գնդի խուզարկություն կատարելու պատրվակին տակ:

Ի՞նչ պիտի ըլլար մեր վիճակը եթե պատերազմի մեջ մտնեք թուրքը և իր ձեռքերը բոլորովին ազատ ըլլային:

Ի՞նչ պիտի ընեինք մենք, հայերս, թշնամիի մը դեմ որուն հոգին լեցված էր թույնով, և որ այլևս բոլորովին անպաշտպան կզուտներ իր որսը:

Դժվար էր մեր կացությունը, որովհետև թշնամին պիտի չհավտար՝ ինչ քծինք ալ փորձեինք հիմա, և պիտի անուղք մնար ինչքան ալ զգուշ ըլլայինք պատրվակներ չտալու համար իրենց:

Հուլիսի վերջերուն, երբ արդեն մթնոլորտը կմալլեր Եվրոպայի մեջ, Ազգ. վարչությունը որոշեց էր «օսմանյան կառավարության հետ իր ունեցած հարաբերության մեջ վերջին աստիճանի զգուշ և հաշտարար ուղղություն մը ընդգրկել, մուլիս կենսական խնդիրներու մեջ»:

Ու իրավ ալ հազար փորձ ըրավ պատրիարքարանը որպեսզի ողորքե թշնամին, ու անոր առիթ չտա ճգնելու զոհը: Իր փորձերը մամուլի մեջ ալ արձագանք կգտնեին օրը օրին, և մուլիս թուրք թերթերը զոհուհակությամբ կհիշատակեին զանոնք:

Հետո՞: Ի՞նչ պիտի ըլլար հետո: Ոչ թուրքերը մեր սիրո զգացումներուն կհավտային,

ոչ ալ մենք թուրք թերթերու անուշ խոսքերուն...

• •

Փակված էր էջ մը հայոց պատմության մեջ՝ գերեզման դնելով հետը միասին հույսերն ու ցնորքները զորս սպրեցանք քանի մը տարի:

Կզգայինք թուրքս որ դժնդակ էջ մը կրանա մեզի մեր պատմությունը:

Ու կլսեինք արդեն ոտնաձայնը ճիվալին...

III.—Պահ մը ազատ օդի մեջ

Հոգեկան տառապանքի զարհուրելի շրջան մը եղան այն ուրք ամիսները որոնք սկսան պատերազմին հետ և որոնք պիտի գային հանգել այն սև գիշերվան երբ ճիվաղը դուռները զարկավ մանգաղ մը ձեռքը:

Տեսակ մը մղձավանջ համակեր էր քովանդակ հայությունը թուրք մայրաքաղաքին և գավառներու մեջ և երթալով ավելի կիսեղդեր մեզ՝ քանի գերմանական հաղթանակներու յուրերը կուգային զանազան ռազմա-նակատներ և քանի թույնը կխտանար թուրքերու մայրաքաղաքներուն մեջ:

Զգետնված՝ իր խանդավառության մեջ, ու հոգին լեզված հազար կասկածով ու վախով, ամալոր օրեր կապեր մանուկանդ հայ մտավորականությունը: Բաց էին դեռ ճապարհները, բայց ոչ որ մտքեն կանցքներ հեռանալ: Այն մասին պիտի մտածեր, ավա՜ղ, շատ ուշ:

Եվ սակայն ճիշտ այդ օրերուն Կոմիտաս շունչ առնել ուզեց պահ մը: Իր քայքայված ջիղերը կազդույրի պետք ունեին պահ մը: Հոգը չըրավ որ աշխարհ բռնկած էր այդ միջոցին, ու մեկնեցավ Եվրոպա:

1914 սեպտ. 10-ին Գերմանիայեն ան կը գրե Չոպանյանին թե «ամեն իրիկուն օրերս եմ գնում. վազների երկերի շարքն են տալիս աս և եկող շաբաթ. շատ ուրախ եմ, որ սկզբից հասա»¹:

Երաժշտական հանձնաժողովը զոր պատրիարքարանը կազմեր էր նորո 1912-ին պատրիարքական փոխանորդ Դևոնդ վրդ. Դուրյանի նախագահությամբ տակ, անդամ կարգելով անոր Արիստակես Հիսարյան և խորեն Հարությունյան քաճաճները, և չորս ալ աշխարհական օրվան երաժիշտներեն՝ Լևոն Նանյան, Գրիգոր Մեհաբեյան, Գրիգոր Չուխադյան և Երմոկ Գույումճյան², ծընունդ կառներ շրջանի մը երբ արդեն թա-

վեր էին հայ տիրացուներու ակումները, ու իր պաշտոնը ուրիշ բանի մեջ չկայացավ այլևս բայց եթե քննել իրեն ներկայացույ տիրացուները: Այդ հանձնաժողովը ուզեր էր լավագույն պատարագ մը որդեգրել Պոլսո եկեղեցիներուն համար, ու խնդրել էր Կոմիտասին չզանալ իր աջակցությունը:

1914 սեպտ. 28-ին Շարլոտենբուրգեն կգրե Չոպանյանին.

«Պոլսի երաժշտական քննիչ հանձնաժողովին ինչ որ պետք էր գրեցի և տետրակն ալ դարձուցի իրանց: Ինչ կվերաբերի իմ կազմած պատարագի արարողության, ուղղակի անհնար է ամտելի եկեղեցիներում գործածելու համար, որովհետև խիստ քաղդ է՝ ըստ պահանջման եղանակների խորհրդալիորության. ոչ մեկը կառավարել կարող է իմ պատարագը, եթե նույնիսկ հարմար երգեցողներ իսկ գտնելու լինին: Կ. Պոլիս և առհասարակ Ասիան չի տալիս թավ և քամք ձայներ, որոնք մեծ դեր են խաղում բազմաժանրության մեջ. մյուս կողմից իմ պատարագը գրված է 1—9 ձայնով, այնպես որ այդքան նուրբ դասակարգություն ձայների նոքա ըմբռնել, գտնել ու գործադրել կարող են. իսկ նույնը ես ինքս քառաձայնի վերածելն անմտություն եմ համարում, որովհետև խորհրդավորությունը կվերանա և տեղը կանցնե միայն զամպ ու մերկ արվեստ, որ ոչ մի ժամանակ չեմ ցանկանում կատարել ու լսել: Այս է պատճառը, որ չեմ առաջարկել իմ պատարագը, որ դեռ նույնիսկ շատ յուրք ու մանրակրկիտ ուսումնասիրության է կարոտ, վերլուծության է կարոտ. ես չեմ շտապում: Մյուս կողմից, ի՞նչ կասեն. երբ ես խաչատուրյան նոքա գրվածքը և տեղն իմն առաջարկեմ. չէ՞ որ կասեն, դիտմամբ է գեղարվեստ մերը, որպեսզի իր գրածին ընթացք տա: Աստված չանե, այդ անողոր չեմ: Դուքա համար մույն արժեքն ունի թե՛ իմ և թե՛ մի տիրացուի կազմածը (վերջինս գուցե ավելի արժեքավոր լինի), որովհետև ոչ նորա պակասության և ոչ իմի առավելության հասկացողությունն ունենա»:

Եվ սակայն Կոմիտաս անապարեց Պոլիս ուղևոր: Աշխատի կուգեր նույնիսկ մղձավանցի ալդ օրերուն:

IV.—Կոմիտաս մղձավանցի օրերուն

Պոլիս վերադարձին՝ Կոմիտաս քոլորովին անճանաչելի կգտներ Պոլիսը: Հանրային գործունեությունը, հայ կյանքն ենթա, կանգ առած էր իսպառ: Ազգային երես. ժողովը իր նիստերը դադարեցուցեր էր վաղուց, իսկ

¹ «Տեղեկագիր», 286:

² Արիստակես քհն. Հիսարյան, «Ընդարձակ տալիսություն», 1927, էջ 254:

³ «Տեղեկագիր», 286—287:

պատրիարքարանը, շվարած դժբախտ լուրերեն որոնք գավառներեն կհասնեին անընդհատ՝ չէր գիտեր ո՛րը զարքեր գլուխը: Թուրք պարլամենտի հայ անդամները, շվոթած իրենց ալ, իզուր կփորձեին բանով մը օգտակար ըլլալ Զավեն պատրիարքին ու սանոր կողքին մնալ հանդգնող անգոր թաղաքական ժողովի մը: Հայ թերթերը, իրենց ծավալը սեղմած, հեռագրական յուրերը և թուրք մամուլին կարծիքը արձանագրելով կրավականացային:

Ծառեր կարծած էին,— և բնական ալ էր կարծել,— թե սղձավանցի այդ ամիսները ջլատման շրջան մը եղան Կոմիտասի համար նա:

Անոնք որ այդ օրերուն շփում ունեցան իրեն հետ՝ վկա եղան սակայն հոգեկան այն կորուսիւն որ անվթար կմնար Կոմիտասի մէջ: Բոլորես ավելի ան կշարունակէր տերը մնալ իր ջիւղերուն, և ուժ ցերջնչել իր շուրջիններուն ալ:

Օր. Աղավնի Մեսրոպյան, Կոմիտասին ցվիրած իր հուշերուն մէջ, իր ընթերցողներուն պատմելու համար քաջությունը զոր վարդապետը կպահէր այդ օրերուն ալ. հետևալ դեպքը կպատմե.

«1914 թվի աշնանամուտին՝ Հետպելի կղզի դասի կերթալի: Ծոգեցալի կամբջակին վրա հանդիպեցա Կոմիտասին, Փանոս Թերլեմեզյանին և Հրանտ Ասատուրին: Կոմիտասն ու Փանոս Թերլեմեզյանը հյուր կերթալին Հրանտ Ասատուրի մոտ՝ Հայ կըղզիի տունը:

Մեր մոտավորապես երկու ժամ տևող ճամփորդության կեսին Մարմարան հանկարծ մթագնեց, կանաչ-կապույտ ջուրերը սպիտակ փոփոխներով ծածկվեցան և մեր գլխուն վերև շողացող արևը անհետացավ գորշ ամպերու տակ: Պայթեցավ սպառնող փոթորիկը... Հյուսիսային ուժեղ քամին թղթի կտորներու պես օդը հանեց թուրք կանանց հարեմական բաժնի ծանրաքաշ վարագույրներն ու նույնիսկ անոնց ճամփորդական իրերը: Ահավոր աղետը կսպառնար ամենի այլքներուն խաղալիք դարձած մեր շոգեմակին մեջ գտնվող հարյուրավոր ճամփորդներուն:

Կոմիտաս, կորուսի և պաղարյուն, կանգնած կամբջակին վրա, կփորձեր հանդարտեցնել խուճապի մատնված ճամփորդները, համոզելով մեծերը և շոյելով ու փալփայելով անչափահասները: Թուրք կիներն ու աչրերը, անոր քղանցքները համբուրելով, շեհիթ (սուրբ, մաքրակրոն) Կոմիտաս էֆենդիին աղոթքներ կաղերսեին»⁴:

Հարկ կա՞ ըսելու որ երևակայությունն ալ խառնված է այս պատմության: Եւ շատ ալ թոյլեք տալու է մարդ իր երևակայության՝ համարձակությունն տալու համար որ քրիստոնյա հոգևորականի մը մոտենան այդ օրերուն շոգեմակին մեջ, կամ Կոմիտասի ընկերակից տալու համար Փանոս Թերլեմեզյանը որ վաղուց է վան կոտնվեր...: Միակ ճշմարտությունը կորուսի է զոր Կոմիտաս ցույց կու տար վտանգին առջև:

Ըիշտ է որ ան զրկված էր համերգներ տալու հնարավորությունեն: Նախ շրջանը շատ ալ պատեհ չէր հրապարակային նման ելույթներու համար, երբ թեղանթը կորուտար ամեն կողմ սարսափի տակ պահելով նաև Պոլիսը, և երբ, մանավանդ, հայերուն համար միայն քաջվելու պահն էր: Ասկե գատ իր խումբը ցրված էր այդ պահուն: Մեծ մասը իր երգիչներեն զինվոր գացած էր:

Այնուամենայնիվ Կոմիտաս այդ պայմաններուն մեջ անգամ բորներ կենը վերակազմելու իր խումբը:

Կոմիտաս ցվիրված մնաց իր դասերուն ալ: Առաջին հերթին՝ իր մտահոգության անարկան շարունակեցին մնալ իր վեց սաները,— վեց էին դեռ ան ատեն, Արտաշես Ապանյան իր աչքերը տակավին փակած չըլլալով: Անոնցմով կշարունակէր զբաղիլ, թեև անոնցմե ալ զինվոր գացողներ եղան:

1914-ի աշնան տարեմուտին ստանձնեց նաև իր դասերը Ազգային կեդրոնական վարժարանի մեջ: Դասեր ունեցավ Նիկողոսյան դպրոցի մեջ ալ: Խոսքը տանք նորեն Աղավնի Մեսրոպյանին.

«1914 թվի դպրոցական վերամուտին Կոմիտասը Բերա-Բանկալթի Նիկողոսյան երկսեռ գիշերօթիկ և ցերեկօթիկ ազգային վարժարանի կողմն հրավիրվեցավ իբրև երաժշտության դասատու:

Ծատ մեծ եղավ վարժարանի ուսուցչական կազմի և աշակերտության զարմանքը, երբ տեսան որ հակառակ իր բազմազբաղ վիճակին, Կոմիտաս ոչ միայն համաձայնեցավ իրենց վարժարանին մեջ դասեր ընդունիլ, այլև ջերմ փափագ հայտնեց գոնե շաբաթը երկու ժամ զբաղվիլ նաև մանկապարտեզի 8—8 տարեկան երեխաներու երգի ու պարի դասերով:

«Քույրս՝ Արաքսի Մեսրոպյանը, որ Լոնդոնի Կելլերնի Ֆրոպայան ինստիտուտեն մկայված ըլլալով, այդ օրերուն կապված էր Նիկողոսյան վարժարանին՝ իբրև մանկապարտեզի խորհրդատու, կպատմեր որ մանկապարտեզի դասի օրերը Կոմիտաս շատ ուրախ տրամադրության մեջ կըլլար: Ան միշտ դասի ժամեն առաջ կու գար, և օգտագործելով մանուկներու զրոտանքի ազատ

⁴ «Ժամանակակիցները Կոմիտասի մասին», էջ 302—303:

ծամերը, կհավաքեն զանոնք իր շուրջը և կերգեր ու կպարեր անոնց հետ»⁵:

Շատ քիչ մարդիկ կրնան իրենց հոգին այսքան անվթար պահել նման խռովյալ օրերու:

Պոլսեցի 13/26 հոկտեմբեր թվականով կգրե Ֆիլիսյե՝ իր Երվանդ Հակոբյան բարեկամին:

«Ժամանակիս վայրագություններեն ըստ կարելիույն հեռու պահելով միտքս ու զգացումներս, անդադար կաշխատեմ կարևոր ուսումնասիրություններով:

Խմբիս և համերգներու չկրցա տակավին սկսել՝ աշակերտներուս զինվորագրության պատճառով, սակայն և այնպես շաբթուս նոր խումբ կազմակերպելու սկսա: Հույս ունիմ զատկական տոներից հասցնել հնագույն եղանակներով ներշնչված սուրբ պատարագի արարողությունները՝ զորս պիտի ուսուցանեմ նոր խմբիս:

Քաղաքապետությունը հիմը դնելու վրա է երաժշտության մը, որի պաշտոնյաներեն մեկն ալ զիս կանչեցին: չմերժեցի, քայքայեց ներդաշնակության դասերն ստանձնեցի, որ ձայնս խնայեմ ու խնամեմ»⁶:

Արդարև Կոմիտասի Փարիզեն դարձն հետո էր որ թուրքերը նոր փորձ մը քրին անոր տաղանդեն օգտվելու: Այդ փորձը նոր չէ որ կընեին անոնք: Անոնք հաճախ ուզեր էին Կոմիտասը իրենց մեջն ունենալ: Քանիցս եղեր էին անոր համերգներուն, ու անոնցմե բաժնվեր խոր տպավորության տակ: Այդ կերպով անոր համբավը մտեր էր թուրք շրջանակներէ ներս, և իրեն հիացողներ ճարել իշխան Մեջիդ Էֆենդիին սկսյալ մինչև բանաստեղծ Մահմեդ Էմինը:

Այդ օրերուն Պոլսո քաղաքապետն էր դոկտ. Ջեմիլ փաշա, մեկը այն հազվագյուտ թուրքերեն որոնք սրտցալ կերպով տքնած են մայրաքաղաքի բարօրությանն ու բարեգարդությանը համար: Գիտության և մանավանդ նկարագրի մարդ՝ ան ոչ մեկ խոչընդոտի առջև կանգ չառալ Պոլիսը վերածելու համար մայրաքաղաքի մը: Հուշերուն մեջ զորս յույս ընծաւեց վերջերս կպատմե թե ինչպես գտալ Պոլիսը և ինչպես իր հաջորդին հանձնեց զայն:

Դոկտ. Ջեմիլ փաշա կպատմե իր հուշերուն մեջ.

«Պոլսո մեջ քանի մը տնակե գատ ոչ թատրոնի շենք ունեինք ոչ ալ թեմ ելլելու ի վիճակի որևէ արվեստագետ: Այս բանին

համար շատ կմտաւանջուի: Քաղաքապետության գիտական մարմնի խորհրդական Կ. Օրիքի ծրագիր մը պատրաստել տվի Պոլսո Անվեդի հրապարակին վրա թատրոնի շենքի մը և քաղաքապետարանի մը կառուցման համար: Մյուս կողմէ դերասան և դերասանուհի պատրաստելու համար Ֆրանսայի ակադեմիոյ արվեստագետներեն Օդեոն թատրոնի տնօրեն Կ. Անթուանը Պոլիս հրավիրելու տնօրեն կտրգեցի Ծանգաղե հաշի Լեթաֆեթ հարկարածին մեջ հիմնված թատերական արվեստին որուն Դարյույթետայի անունը տվի: Ներկայի մեր ծանոթ դերասաններեն շատերը հոն ուսան և հասան: Թեև շատ աշխատեցա այն առեմ որ թեմ հանեմ նաև թուրք կինը քայքայեցա: Քաղաքապետի պաշտոնեն քաշվելու հետո քաղաքապետական խորհուրդը որոշեց է Դարյույթետայի հատկացումը դադարեցնել և հաստատությունը ցրվել, սակայն հետո արվեստը սիրող քանի մը հայրենակիցներու ջանքերով սույն անհրաժեշտ հիմնարկությունը փրկել կարելի եղավ»⁷:

Իրենց հիմնած այդ հոններվաթորը թուրքերը ի վիճակի չէին ստեղծելու և վարելու իրենց ուժերով: Մեծ արվեստագետը՝ որ Անթուանն էր և զոր Փարիզեն բերեր էին մեծ գոհողություններով՝ հրաշք պիտի չկրնար գործել: Անթուան Փարիզ դարձեր էր առանց այդ հրաշքը գործելու, և թուրքերը դարձյալ ստիպվեր էին դիմել Մեհալյանին և իր հասցուցած նոր ուժերուն, որոնց մեջ թուրք երիտասարդներ ալ կային: Ասոնք պիտի ըլլային օր մը թուրք թատրոնն ստեղծողը:

Դարյույթետայի կողքին թուրքերը հիմը դրեր էին երաժշտանոցի մը ևս: Այնտեղ ալ հար օգնության հասեր էր իրենց: Երաժշտանոցի հույնիսկ արևելյան երաժշտության դասերը անոնք վստահեց ինչ հայու մը, Լեւոն Խանճյանին, որուն նման վարպետ դեռ չուցեին:

Արդ, նույն այդ Ջեմիլ փաշան, որ դեռ կըմնար քաղաքապետի պաշտոնին վրա, Կոմիտասին կարիքը զգաց:

Կոմիտաս պիտի չկրնար մերժել: Ինչքան ալ ծանրաբեռնված ըլլար իր սեփական աշխատանքներով, պահը անպիսին չէր որ թույլատրեր դժկամություն ցուց տալու: Թուրքը չխրտչեցնելու մտահոգությունը Կոմիտասը ևս կտառապեցներ այդ օրերուն: Երբ հայը դժբախտ պահ մը կանգնեց:

Արդարև, Պոլսո թերթերը իրենց 1914 սեպտեմբեր 28-ի (8 հոկտեմբեր) թիվով կհրատարակեին պատմենը կոչի մը որ Կոլ-

⁵ «Ժամանակակիցները Կոմիտասի մասին», էջ 282:

⁶ Ռոբերտ Աթայան, Կոմիտասի 1914—1918 թվականների նամակներից, «Գրական թերթ», 1985, թիվ 18:

⁷ Դոկտ. Ջեմիլ Ռոփուզյու, Վաթսոն տարվան հուշերս, Իսթանբուլ, 1951, էջ 151—152:

կասի փոխարքան հանուն ցարին կարդացած էր օգոստոս 28-ին Թիֆլիսի հայ երեւելիներուն առջև.

«Հայեր, վսեմ թափի մը մեջ բուլանդասլ Մեծն Ռուսաստանի բոլոր ժողովուրդները, Արևմուտքեն Արևելք, ոտքի ելան իմ ձայնիս վրա: Բռնապետության լուծի հինգ դարերն ենք, հորում ձերիններեն այնքաններ իմկան, և մինչ ա՛յնքան ուրիշներ տակավին ամենագարշելի նախատինքներու կենթարկվին, ազատության ծամը վերջապես հնչեց ձեզի համար: Ռուս ժողովուրդը առանց հրապարտության չէ որ կհիշե իր նշանավոր հայ զավակները: Լազարյանները, Մելիքովները և ուրիշներ իրենց ուս եղբայրներու կողքին կռվեցան հայրենիքի մեծության համար: Ձեր դարավոր հավատարմությունը երաշխիք մըն է ինձի համար թե դուք հանդիսավոր այս օրերուն մեջ պիտի գիտնաք ձեր ամբողջ պարտականությունը կատարել, անդդվելի հավատքով մը՝ մեր զինույն և մեր արդար դատին վերջնական հաջողության վրա:

«Հայեր, միացած ձեր արյունի եղբայրներուն՝ ցարերի մակունին տակ, դուք պիտի ճանչնաք վերջապես ազատության և արդարության բարիքները»:

Թահին, զգույշ իր արտահայտությանց մեջ՝ ինչպես կըլլան բոլոր անոնք որոնք դավ մը նշույթան առեն, կրավակաճանար վստահություն հայտնելով որ «հայերը, որոնք հինգ դարն ի վեր օսմ. կայսրության սահմաններուն մեջ իրենց ազգայնության, լեզվին և խղճին տեր ըլլալով ապրած են և այս երկրին ամենն կարևոր դիրքերը զրաված, խոր զարմանք մը պիտի զգան Ռուսիո մեջ հրաշյուք իմն արթնցող ազատության և անկախության սիրուն հանդեպ», և որ ցարին այդ կոչը «ո՛չ մեկ ազդեցություն առաջ պիտի բերե հայ հայրենակիցներուն մեջ, որոնց օսմանցիության նկատմամբ տածած հավատարմական հարումը նշանախնեցի մը չափ անգամ չէ այլափոխված, հակառակ մեկ քանի տարին ի վեր լարվող ամեն կարգի տրտումներու»⁸:

Կոմիտաս տեղյակ էր այս բոլորին: Կզգար որ քաղության նոխագի մը կարիք կար: Այդ նոխագը ինքն ուզեց ըլլալ:

V.—Տքնության նոր ամիսներ

1914 հոկտեմբեր 14-ին Թուրքիան պատերազմի կմտներ Գերմանիո և իր զինակիցներու կողքին: Անձկության նոր շրջան մը կը

քայլեր հայ ժողովուրդին համար: Այլևս ոչ մեկ կասկած կար որ թուրքերը հաշվի պիտի նստին հայոց հետ, ոչ միայն վրեժը առնելու համար հայոց փորձերուն խաղաղ կամք մը ալափոխելու իրենց հայկական մահաճակներուն մեջ, այլև նոր ստիթներ չտալու համար հայուն որպեսզի թուրքը անհանգիստ ընեն: Թուրքերը ավելի պատեն վայրկյան պիտի չգտնեին տարիներն ի վեր իրենց որոճացած դավերը սարքելու համար հայ տարին ղեմ, քան հիմա, երբ այլևս ազատ էին համաձայնական պետությանց անմիջական հակակշիռին, իսկ Գերմանիա իրենց կողքին էր՝ ազատ ձգած իրենց ձեռքերը:

Ազգային իշխանությունները ամեն քան որին անուամենայնիվ՝ ողորելու համար զազանը:

Այսպես, Ազգ. վարչությունը 1914 հոկտեմբեր 20-ին, Թուրքիո պատերազմին մեջ մտնելեն քանի մը օր հետո, կհանձնարարեր պատրիարքին լավ հարաբերություններ մը շակել իթթիհատական կուսակցության և կառավարության հետ, կթելադրեր հայկ. դրամատան վարչության նախաձեռնությունն ստանձնել շրջուն հիվանդանոցի մը, և կորոշեր հրավեր ուղղել հայ ժողովուրդին որպեսզի լիովին կատարե իր հայրենասիրական պարտականությունները:

Ազգ. վարչության առ որոշման վրա էր որ Զավեն պատրիարք հեռագրով հրահանգ կու տար իսկույն բոլոր առաջնորդներուն «հորդոր կարդալ ժողովուրդին որպեսզի ետ չըկենա ամեն կարգի գոհողութեն»՝ պանծաճմանը համար օսմ. զահուն, որուն հարած է տոկուն հավատարմությամբ և մեր նվիրակ հայրենիքին պահպանության ու պաշտպանության համար»:

Հեռագրական այդ հրահանգեն զատ Պատրիարքարանը շրջաքերական մը կուղեր բոլոր զավառներուն, հանձնարարելով որ հայ ժողովուրդը «իմպես դարերն ի վեր օսմ. հառենիքին հանդեպ իր պարտականությունները կատարած է, այսուհետև ևս լատարեն ամենադն անկեղծությամբ» և սիրահոժար պատասխանե կառավարության թուր կոչերուն, և հրահանգելով առաջնորդներուն ու ազգային մարմիններուն, «որպեսզի տեղական կառավարական պաշտոններու հետ սիրալիր հարաբերություններ մը շակեն. անոնց ջանքերուն օժանդակեն», ու թելադրեն ժողովուրդին ալ «որպեսզի իրենց դրացիներուն և հայրենակիցներուն հետ սիրով վերաբերվին, օգնեն անոնց անձնկիրությամբ և գոհողությամբ, հարգեն անոնց զգացումները, հետատես և շրջաֆայաց ըլլան ամեն ժամանակն ավելի, առիթ չտան թուրիմացությանց, և ըստ ամենայնի զգույշ ըլլան իրենց խոսքերուն և վարմունքին մեջ,

⁸ «Մոնիթորո օրինթոյ», 8 հոկտեմբեր 1914:

⁹ «Թահին», 1914 սեպտեմբեր 28 (8 հոկտեմբեր):

գի հայտնի է թե՛ այսպիսի ժամանակի մը մեջ՝ մարդիկ ջղագրգիռ ու դյուրագգաց կը դառնան:

Խառն ժողովը իր հոկտ. 24-ի (նոյեմբեր 6) հիստին մեջ ևս կորոշեր շրջաբերական մը ուղղել գավառի առաջնորդարաններուն որպեսզի հայերը շարունակեն, չթերանան իրենց հայրենասիրական պարտականությունաց մեջ, 10 հազար գույգ գույսա միլիոն թուրք բանակին, Ազգ. հիվանդանոցին մեջ 150 անկողինները սրահ մը պատրաստել պատերազմի մեջ վիրավորված զինվորներուն համար, և խնդրել Հայ բժշկական միությունեն որպեսզի հերաի, Գումքափուի և Ալյուտարի մեջ դասընթացքներ հաստատեն՝ վիրավոր զինվորներու դարմանման համար հիվանդապահներ պատրաստելու նպատակով:

Հետո էինք հավատալե որ այս և մնաց փորձերով կրնանք սիրաշահել թուրքը: Մեզի անձնաճակատ չէին պատրաստությունները գործ կոտեսներ ան ճգմելու համար մեզ իր պատեն սեպած ժամուն: Եվ սակայն մեր կրցածը կընեինք որպեսզի պատրվակ չունենա ան:

*
* *

Կովկասեն հասած լուրերը մեր հոգ մը կավելցնեին մեր այնքան մտատանջությանց վրա: Պոլսո մեջ թուրքը գիտեին արդեն թե Թիֆլիսի մեջ պատրաստություններ կան կամավորական հայ խումբեր կազմակերպելու համար, և թե ուս կառավարությունը խոստովներ կշռայն հայերուն զանոնք իր կողքին ունենալու համար Թուրքիո վրա իր մոտալուտ արշավին ատեն: Թուրքերուն ձեռքը աղվոր պատրվակ էին այդ թուրք իրենց վաղուց ծրագրած դալը փութացնելու համար, թեև անոնք գիտեին որ մուսուլման Պոլսո դաշնակցականները դեմ էին Կովկասի այդ շարժումներուն:

Եվ ահա, Թերեմեման իր 1914 24 հոկտեմբերի (նոյեմբեր 6) թիվին մեջ արձագանք կըլլար այն լուրերուն որոնց համեմատ մինչև Ռուսիա Վրացի և ասեթին, տարրերուն չը վստահելով անոնց թուրքն ալ՝ վրացի և ասեթին սպաներու և գորավարներու հետ միասին Լեհաստան դրկեց, հայերեն 50 հազար հոգիները բանակ մը կազմելով դրկեց մեր արևելյան սահմանագլուխներուն առաջին շարքերու վրա: Մյուս կողմն Կովկասի փոխարքա Վորոնցով Տաշքով Կովկասի հալ պետերը և երևելիները հավաքելով պահանջեց հայերեն կամավորներու զուգորդ կազմել: Ասոր վրա Կովկասի հայաբնակ քաղաքներուն և գյուղերուն մեջ ձեռնարկվեցավ կամավորներու արձանագրության և հավաք-

ված հալ կամավորները զինելով Կովկասի պահպանությունը անոնց հանձնեց:

Թուրք թերթը կավելցնե որ «Ռուսիո այս ձեռնարկները կապացուցանեն թե ներկա պատերազմին առթիվ կուգե օգտվիլ Կովկասի հայերեն և հիշյալ հայերուն շնորհիվ կուգե Կովկասի սահմանագլուխին մեր մեկ կողմն ալ գծառություն սերմանել: Կասկած չկա որ թուրք այս պարագաները ծանոթ են մեր կառավարության և հետևաբար կառավարության կողմն թշնամիին այս վառ ցանկությունց դեմ անհրաժեշտ միջոցները ձեռք առնված են»:

Թերեմեման գոհունակություն կհայտնե որ հայոց պատրիարքարանի կողմն պատշաճ շրջաբերական մը ուղղված է Թուրքիո հայերուն և իր կողմն խորհուրդ կուտար հայերուն յնտոնալ թե ստիպված են կողք-կողքի ապրիլ թուրքին հետ:

«Ազատամարտ» կստիպվե գրելու իր 26 հոկտեմբեր (8 նոյեմբեր) թիվով:

«Մենք դեմ ենք ո՛ւն օտար գրավման այն հողին, ուր կապի թրջահայ ժողովուրդը՝ կողք-կողքի իր թուրք և քուրտ հայրենակիցներուն հետ, Վանեն մինչև Խարբերդ, Կարինեն մինչև Սեբաստիա»:

Թրջահայ ժողովուրդը չի կրնար ոչ մեկ վայրկյան ծախս ապրանք դառնալ և թույլ տալ որ իր պատմական ճակատագիրը ծառայե իբրև շահադիտության մյուս՝ այս կամ այն կառավարության ձեռքը: Թրջահայ զինվորը, իբրև քաղաքացի, պիտի կովի արիությանմբ և վճռականորեն՝ թուրք այն սահմաններուն վրա, ուրկե կարշավե թշնամին: Եվ ինչպես որ մույն հայ զինվորը, բալկանյան ռազմադաշտին մեջ, ապացույցը տվալ իր քաջության և իր պարտաճանաչության, մինչև մուսուլման պիտի ապացուցանե, հավատաքան ձեռք, և այս անգամ:

Նման հավաստիքներով չէր որ թուրքերը պիտի հրաժարեին իրենց սև ծրագիրներեն: Իրականին մեջ պատրվակի ալ պետք չունեին անոնք գործի անցնելու համար: Պատրվակներ հետո էր որ պիտի ճարեին, արդարագնելու ատեն իրենց եղեռնը:

Հուզումնալից օր մը ապրեցավ Պոլիս 1914 նոյեմբեր 9-ին ալ: Այդ օրն էր որ քափիթուլասիաները ջնջված հայտարարե էր Բարձր Ռուսը ամբոխային ցույցեր շղթայագործելով մայրաքաղաքին մեջ, ցույցեր որոնք սարսուռով համակեցին պահ մը Պոլսո քրիստոնյաները: Այդ ցույցերը՝ թուրք մտավորականներն ստացնողոված՝ պողոկոմը չէին միան գնծության. գոր թուրքը կզգար Եվրոպայի յուժեն ազատած տեսնելով իր երկիրը, այլ անոնք տեսակ մը հառաջաբան էին մոլեգնության գոր ան ցույց պիտի տար շուտով քրիստոնյաներուն դեմ: Սպառնա-

կան բացազանշությունները զորս ցուցարարները կաղաղակեին Բերայի պուլտայեն անցած ատեն՝ չէին կրնար մտառու չընել մեզ:

• •

Թող զարմանալի չթվի ընթերցողին երբ իրեն ըսենք թե իր հոգեկան ուժերը անվթար պահեց Կոմիտասու նույնիսկ այդ պահին: Անոնք որ այդ օրերուն զինքը տեսան՝ վկա են իր հոգեկան կոտորվին: Բոլոր լուրերը ան ալ կիսմանար մեզ պես, բայց կոկիմանար մեր բռնություն ավելի: Ինչե՛ր չտեսավ ան իր պատուհանին: Ցուցի բոլոր թափոքները կանցնեին իր տան առջևեն, ու ամեն օր կտեսներ ցուցարարներուն բռնացքները որոնք կճոճեին օդին մեջ: Իր բնակարանեն շատ հեռու չէր Պատերազմական վարժարանը, ու ան հաճախ կտեսներ պահեստի սպացուներու շարքերը որոնք կտողանցեին իր մոտեն, օդը լցնողացնելով իրենց սպառնական երգերով:

Ներքեմի սորմա բան,
Գիտիդորում բեն հարբա.
Էզան սեսի դույուզմայոր,
Խաչ դիքիյմիջ մեմբերե.
Քյաֆիր Մուսթֆ բայրաք ասմը
Ջամի երե, հեր եերե:
(Մի հարցնիր ուր կերթամ
Պատերազմի կերթամ ես.
Էզանի ձայն չի լսվիր ա՛յ.
Խաչ է տնկված մեմբերին.
Գյալուու ուուսը դրո՞չ է պարզած՝
Մզկիթներուն, ամեն տեղ):

Կոմիտաս այդ օրերուն անգամ չըբեց իր աշխատանքները. չգիտեմք՝ կնախագահ՞ր արդեն սև օրը, ու կո՛զեր ավարտել ինչ որ կրնար: Բայց ստույգ է որ ան շարունակեց աշխատել: Չիթունի որ իր մոտիկ աշխատակիցն էր եղած ա՛դ օրերուն՝ կպատմե մեզի.

«Ընդհանուր ազգային խանդավառության այդ շրջանին (1913-ին), իմ նորահաստատ ընտանեկան ու առևտրական պատմաններու թերուժով ես հմարավորություն չուցեցա Էջմիածնեն շարունակել ձգված երգերուն մնացորդ մասը երգելու, որպեսզի Կոմիտաս ծայնագրեր անհապաղ: Հագիվ տարի մը վերջ, 1914-ի նոյեմբերին, կարելի եղավ վերսկսել կիսատ թողված աշխատանքը:

Դարձյալ գիշերները, ընթրիքեն միջև կեսգիշեր, ես իրեն կերթայի: Գրասեղանին ու դաշնակին առջև, ցանկիս վրայեն կերգեի. իսկ Կոմիտաս կծայնագրեր իմ գրի առած Վասպուրականի ժողովրդական երգերեն ու խաղասացքներեն նոր հիսնյակ մը,

մանկապարտեզի երգերն այ միասին առած: Այս ելկրորդ մասին ձայնագրումի ընթացքին էր, որ Կոմիտաս ու ես խորհեցանք կազմել մանկապարտեզի հատուկ երգեր, ժողովրդական երգերն քաղելով ու մշակելով:

Միջոցն ելրուպական զարգացած ազգերն ունեին այնքան սիրուն և գունատիպ պատկերազարդ մանկական երգատեսերեր,— նույնիսկ կովկասահայեր սկսած էին շարք մը նման ձեռնարկներով կրթի մատույշ սերունդը,— մեր մեջ (թրքահայաստան)՝ քաղաքական պատճառներով՝ բոլորովին անմատչելի էր մնացած այդ բարիքն ու անհրաժեշտ սնունդը:

Կոմիտասի հետ լծվեցանք այդ տքնության: Եւ նույն տարվան. 1914-ի, դեկտեմբեր ամսուն գիշերալստան նվիրումներով մեջտեղ դրինք քառասունի չափ մանկական երգեր: Անոնց ամբողջովին նյութերը ես հաճած էի իմ և մասամբ ուրիշներու գրի առած ժողովրդական մանկական երգա-խաղերեն: Ապա՝ թե՛ խոսքերը և թե՛ եղանակները Կոմիտասի հետ հղկեցինք ու մշակեցինք՝ հարկ եղած տեղը նյութն ընդլայնելով կամ կրճատելով: Բառերը քաղատված են ինձմեն:

Մեր նպատակն էր տալ զանոնք տեսողներով, գունավոր պատկերազարդ, եղանակներով ձայնագրված, որպեսզի ծառայեն մեր մանկապարտեզական-պանդոխներուն ձեռքին իբր դասատեսեր:

Այս ձայնագրյալ թերթերը՝ պետք է իրենցին Կոմիտասի Պոլիս թողուցած և մերջերս Փարիզ փոխադրված ձեռագիրներուն մեջ»¹⁰:

Միջև մերջին ատենները, նույնիսկ խաղերու մասին իր եզրակազմությունները շառաղիք և Փարիզի երաժշտական համաժողովին մեջ իր համալավորող ելույթ ունենալն հետո այ, ան հետամուտ էր խաղերու շուրջ իր ծանոթությունները բնորոշելու, և նոր լուսաբանություն հանգելու: Տիգրան Չիթուցին է դառնալ որ մեզ կպատմե.

«Ամենգույն մեր տեսակցություններն ունեցանք ի Պոլիս, 1913—1916. մեն խանդով ան և հարգամիտ ձեռն գնա, հեռ ֆուլբրոնի բաժնաբեռ զանապահ, թե ի՞նչ բառեր, ձևեր. ստույթուններ. առաքանական զիծ ու ակնառններ ծանոթ են հա ամբարագետ ժողովրդին, որպեսզի անոնց միջոցով և արեհատ լուսաբանել երաժշտական հից խաղերու տրուտառներ և բաժանորդ անոնց ծառուր, ահույմ ու տու՜մնեռ: Կհարգանք, թե հոմանիս ի՞նչ բառեր ևս»՝ երաժշտական խաղերու, իստերեթ ամեն մեկին դիմ ուղղված ար-

¹⁰ Տիգրան Չիթուցի, Կոմիտասի հետ, «Հայրենիք» ամսագիր, 1986 դեկտեմբեր, էջ 87:

դեմ ծանոթ սահմանումներեն դուրս. յե ի՞նչ ձևեր ունին մանավանդ՝ այս կամ այն (իր ցանկի առածներեն) միավանկ արմատ հին բառեր, ունեն գործիք նշանակող։

Օր մը գտա գինք սովորականեն տարբեր, հույժ մտածկոտ վիճակի մեջ։ Տենդոտ քայլերով կշափչփեր սենյակին երկայնքը։ Առձեռնը մատներուն մեջ թերթելե հուսահատ՝ սրտենդ ձևով մը դրավ գրասեղանին վրա։ Եկավ դեմս նստավ ու վերցուց բացավ գունավոր պատկերներով գիրք մը, գերմաներեն երաժշտական հատոր մը, հետո ոտներեն ուրիշ մը։ Տուցուց ինձի՝ երգի հատուկ նշաններով էջեր և հրավիրեց որ կոչում ընեմ ֆուլբորիստի պաշարիս, տամ մեկ քանի բառեր ու ձևեր։

Նշանագիծներուն վրա ակնարկ մը մետելով ըսի որ՝ այս նշանին նման գործիք մը գեղջկական արտրի մեջ կկոչվի կանդրիկ։ Ու ձևը թղթի մը վրա գծելով՝ մեկտեղ՝ բացատրեցի կանդրիկին պաշտոնը վիճկիին սայսոռածին մեջ։ Կոմիտաս ուրախութենեն մանուկի պես վեր-վեր ցատկեց և աչքերուն մեջ իր խայտուն ակնարկը շանթելով՝ ըսավ.

—...Վաղուց իմ հույսը կտրել եմ գրավոր աղբյուրներից։ Առձեռնը անգոր է բոլորովին. պետք է փնտրել անգիր աղբյուրների մեջ։ Հավատում եմ որ ժողովրդի բարբառին մեջեն դուրս պիտի բերեմ մեր երաժշտական խազերի բանալին։

Եվ իսկույն արձանագրեց իր ձեռագ տետրին մեջ կանդրիկ բառը, անոր ձևը, պաշտոնը, ինչ որ տվեր էի րուպե մը առաջ։ Ոգեփորված՝ սեղանին վրա առջևս քշեց գույներով ու նշաններով հատուկ մեկ քանի էջեր։ Եվ յուրաքանչյուր ձևին համապատասխան՝

կամ մոտիկ իմաստը շոշափող՝ բառ, ձև, բացատրություն ինչ որ կրցա տալ՝ խնամով ու խանդով արձանագրեց կամ գծեց։

Ապա բերավ նոթատետր մը՝ հայ դասական կամ Ծարականի խազերուն։—Երկար, սուր, ոլորակ, բենկորճ, գարկ, ծունկ, թուր, փուշ, խունճ, պարուկ, թաշա, փաթույթ, քար-քաշ, կորճա և այլն, և այլն։

— Դե՛, Չիթունի, ազգագիրի տոպրակդ խառնե՛ խուզե՛՛ հա՛ն մեջեն ինչ որ կրնաս տալ՝ այս բառերուն և ձայնահիշերուն իբր ստուգաբանություն, իբր հոմանիշ, իբր բացատրություն, իբր նոր ինքնատիպ առում, ժողովրդական անգիր բարբառին հատուկ...»։

Չիթունի կըսե այդ բառերեն շատերուն մասին իր տված ժողովրդական առումներն ու բացատրությունները հրճվանքով լեցուցին Կոմիտասի սիրտը ու կավեցին։

«Այս առիթով էր որ Կոմիտաս ավելի բացվեցավ ինձի՝ իր մտադրած լուրջ աշխատության մասին։ Այն՝ որ իր վերջին քանի մը տարիներու հարատև մտմտությին առանցքը կկազմեր՝ լուծել հայ երաժշտական խազերուն անհայտ մնացած գաղտնիքը, գտնել անոնց բանալին և ստեղծել բուն հայ երաժշտական զեղարվեստը՝ ժողովրդի ոգիին համաձայն»¹¹։


Հոգին հեռուներուն հառած, ջիղերով ամուր, հակած աշխատանքի սեղանին, սղդպես դիմավորեց Կոմիտաս անավոր տարին...

¹¹ «Հայրենիք» ամսագիր, 1938 ղեկոնմբեր, էջ 88—89։

ՍՈՒՐԵՆ Ե. ՔՈՒԱՆԶՅԱՆ

(Պատմական գիտությունների թեկնածու)

ՊԱՏՄԱԲԱՆ ԳԵՈՐԳԵ ԲԵԶՎԻԿՈՆԻՆ ԵՎ ՆՐԱ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



Երկու տարի առաջ, 1986 թ. ապրիլի 30-ին, ծանր հիվանդությունից հետո, իր ստեղծագործական կյանքի ծաղկման շրջանում, մեզանից ընդմիջտ հեռացավ Ռուսիայի ամենաեռանդուն և վաստակաշատ պատմաբաններից մեկը՝ Գեորգե Բեզվիկոնին։

Գուցե շատ քչերը մեր ժողովրդից իմացան, որ անժամանակ շիջող այդ գիտնականի հետ միասին Բուխարեստի հողին հանձնվեց նաև հայության վաղեմի մեկ քարեկամը, որ սկսած իր երիտասարդական հա-

սակից անսահման սիրով ու ոգևորությամբ իրեն նվիրել էր նաև մեր ժողովրդի անցյալը ուսումնասիրելու ազնվագույն գործին։

Գեորգե Բեզվիկոնին ծնվել էր 1910 թ. ապրիլի 14-ին Ժիտոմիրում, հայտնի մտավորականի ընտանիքում։ Իր ստացած ուսումից բացի, նա ևրկու տարի շարունակ հետևել էր Խուլինացի ուշխարհափոխակ պատմաբան և ռալագետ Նիկոլա Յորգայի դասերին, ինչպես նաև լսել փոխտիաության ղեկավար Մ. Ի. Կատարջիի կարդացած փոխտիաության պատմությունը դասընթացները։ Սակայն դեռատի Գեորգեի համար ամենամեծ դպրոցը հանդիսացավ երկրի մեկ ծայրից մյուսը կատարած իր ուսումնասիրական ուղևորությունները և անհամար դիվանատների համբերատար զննումը և ուսումնասիրումը։ Նրա անընդհատ որոնող մյուսքը հսկա ատաղձներ կարողացավ ամբարել շատ ու շատ պատմագիտական հարցերի վերաբերյալ, հարցեր, որոնց մասին իրենից առաջ գրեթե ոչ ոք չէր զբաղվել ուսմանական պատմագիտության մեջ։ Բեզվիկոնին սկսեց գրել և հանդես գալ պարբերականներում, երբ դեռևս գիմնազիան չէր ավարտել։ Դեռ 14 տարեկան էր նա, երբ գրեց ֆրանսերեն իր առաջին հոդվածը, որը ուղարկվեց Փարիզ։ Եվ այսպես նրա բովանդակալից կյանքը սկզբից մինչև իր վերջին օրերը քաղաղիկ մի նվիրում էր դեպի իր ժողովրդի պատմության հետազոտման գործը։ Այդ մի սքանչելի առաքելություն էր նվիրված Ռուսիայի և Մոլդովական ՍՍՀ-ի պատմության մշտնապատ մասերը լուսաբանելու, ճշգրտելու և քաղմաթիվ գանձեր մթությունից լույսին բերելու ուղղությամբ։

Բեզվիկոնին հազիվ 28 տարեկան դեռատի երիտասարդ էր, երբ հաղթահարելով քաղմաթիվ նյութական դժվարությունների, անսահման եռանդով, սկսած 1939 թ. իրեն

նվիրեց «Din trecutul nostru» (Մեր անցյալից) պատմագիտական հանդեսի խմբագրման և հրատարակման դժվարին գործին, և որը շարունակեց մինչև 1938 թ.: Ուսումնասիրողը ինչքան էլ հարևանցիորեն թերթելու լինի հիշյալ ամսագրի շուրջ 2000 էջեր քովանդակող հավաքածուն, որը զարդարված է նաև 700 լուսանկարներով, դժվար չի լինի համոզվելու համար, թե ինչքան մեծ աշխատանք ու եռանդ է ի գործ դրել հեղինակը, այն խմբագրելու և հատկապես շատ հաճախ նրա համարների մեծ մասը ուշագրավ ուսումնասիրություններով ամբողջացնելու համար: Բեզվիկոնի ինչպես հիշյալ հանդեսում, այնպես էլ քաղմաթիվ այլ պարբերականներում հրատարակած մեծ թվով հոդվածները, ինչպես նաև մեծագրությունները հիմնականում շոշափում են երկու հարց. Մոլդովական ՍՍՀ-ի պատմությունը ու մոլդավա-ռուսական և ռումինա-ռուսական դարավոր հարաբերությունները: Ահա այս նախասիրություններն էլ գլխավորաբար մնացին Բեզվիկոնի կյանքի տարերքը և մեծ ճանաչում և հեղինակություն բերեցին նրան: Այդ էր պատճառը, որ ամեն անգամ, երբ հարց էր առաջանում քարծրացնելու ռումին, մոլդավ և ռուս ժողովուրդների դարավոր հարաբերությունների պատմությունը, ինչպես Ռումինական Սոցիալիստական Հանրապետությունում, այնպես էլ Մոլդովական Սովետական Սոցիալիստական Հանրապետությունում հաճախ էր զգացվում Բեզվիկոնի փայլուն իմացության և անսպառ գիտելիքների կարիքը:

Հակառակ իր անժամանակ մահվան, Գեորգե Բեզվիկոնին թողել է շատ հարուստ գիտական ժառանգություն: Բավական է միայն այստեղ նշել, որ միայն նրա տպագիր մեծագրությունների էջերի գումարը մինչև օրս կազմում է շուրջ 7000 էջ, սրանց մեջ ղեռն էն մտնում նույնքան ծավալ ունեցող նրա անտիպ գործերը և հարյուրների հասնող նրա տպագիր հոդվածները:

Բեզվիկոնի գիտական աշխատությունների կարևոր մեկ մասը նվիրված է Մոլդովական ՍՍՀ-ի պատմությանը: Նման գործերից հիշատակենք միայն մի քանիսը. «Ներքեմնի Բեսարաբիան (Ռբշկանի գերեզմանոցը Քիշինևում)» (1928 թ.), «Բեսարաբիացի կիներ» (1934 թ.), «Բեսարաբիացիների դիմանկարներ» (1936 թ.), «Ժաթկայի վանքը» (Բուխարեստ, 1942 թ., 280 էջ), «Ներեկվա և այսօրվա դիմաստվերներ» (Բուխարեստ, 1943 թ., 336 էջ) և այլն:

Ռումինիայի պատմագիտության մեջ հատկապես շատ մեծ է Բեզվիկոնի ծառայությունը ռումինական և ռուսական դարավոր հարաբերությունների պատմությունը ու-

սումնասիրելու գործում: Նա փաստորեն այս առարկայում մնաց անմոռելի և երկար տարիների բեղմնավոր աշխատանքի շնորհիվ ոչ միայն ի հայտ դարձրեց քաղմաթիվ հարուստ նյութեր, այլև ծավալուն ուսումնասիրությունների ստեղծման միջոցով նա կարողացավ մեզ ուրվագծել այդ հարաբերությունների նոր պատմությունը իր բոլոր ղեղավագներով հանդերձ:

Բեզվիկոնին առաջիններից մեկն էր, որ խորապես ուսումնասիրեց ռուս մեծ քանատելի Պուշկինի ունեցած կապերը Մոլդովական երկրի հետ: Այս կարգի գործերից են. «Պուշկինի հերոսները Բեսարաբիայում» (1937 թ.), «Պուշկինը աքսորում» (1947 թ., էջ 184), «Պուշկինի Քիշինևի ընկերները երգիծական բանաստեղծության մեջ» (Հաղորդում Քիշինևում և Օդեսայում կայացած Պուշկինագետների համաժողովում 1958 թ.), «Պուշկինը և Մոլդովայի գրողները» (1960 թ.) և այլն:

Դարձյալ Բեզվիկոնին էր, որ մեծ խնամքով ձեռնամուխ եղավ հետազոտելու միջնադարում ռումինական երկրներից անցնող ռուս ուղևորների թողած հարուստ տեղեկությունները, այսպիսով թարմ նյութեր հայթայթելով ռումինական պատմագիտությանը: Այդ շարքի գործերից ամենից առաջ անհրաժեշտ է հիշատակել «Ռուս ճանապարհորդները Մոլդովայում և Վալաքիայում» (Բուխարեստ, 1947 թ., 484 էջ) ծավալուն հատորը, «Մատենագիտական նշումներ ռուս ճանապարհորդների կողմից 15—18-րդ դդ. ռումինական երկրներում կատարված ուղեվորությունների վերաբերյալ» (Բուխարեստ, 1957 թ.), և այլն:

Ռուս նշանավոր հեղափոխական գործիչ Պլեխանովի Ռումինիա գտնվելու հարցին են նվիրված նրա «Պլեխանովը Ռումինիայում» (1948 թ.), «Պլեխանովի անցումը դեկտ. Պ. Ալեքսանդրովի հիմնադրած գաղութից» (1949) գործերը: Բեզվիկոնին իր հայտնաբերած նյութերի հիման վրա անդրադարձել է նաև ռուսների խաղաղած դերին Ռումինիայի առողջապահության պատմության մեջ: Այս շարքից են. «Ռումին-ռուսական բժշկական կապերի պատմությունից» (1957 թ.), «Անտիպ տեղեկություններ 1848—1849 թթ. Վալաքիայում գործող ռուսական հիվանդանոցների վերաբերյալ» (1959 թ.) և այլն:

Բեզվիկոնին վերոհիշյալ հարաբերությունների մանրամասն հանրագումարը տվեց ընդհանրապես ռումին-ռուսական հարաբերությունների պատմությանը նվիրած իր մեծարժեք մեծագրությունների մեջ: Հիշյալ գործերը և, ինչպես հեղինակի մոտ աշխատություններից շատ-շատերը, ունեցել են ի-

րեց շարունակական զարգացումը և արժանացել մի քանի հրատարակությունների: Այդ հարաբերությունների պատմությանը հեզվիկոնից հետո հանդիպել է իր «Ռուսիա-ռուսական հարաբերություններ» (Բուխարեստ, 1845, էջ 120) գործը, ավելի ուշ ճորանոր հարուստ նյութերի հիման վրա նա կրկին է անդրադարձել նույն հարցին, գրելով «Նյութեր ռուսիա-ռուսական հարաբերությունների պատմության վերաբերյալ» (1958 թ., 813 էջ) հատորը և վերջապես դարձյալ ավելի ճոխացված ձևով՝ «Ռուսիա-ռուսական ռուսիա-ռուսական կապերի պատմության» (1962 թ., 347 էջ) աշխատությունը: Նշենք նաև այն մասին, որ հեզվիկոնի անտիպ թողած գործերում գտնվում է նույն հարաբերությունների պատմությանը հանդիպած ճոխացված ու նկարագրող և տպագրության պատրաստ մի այլ հատոր ևս: Բեզվիկոնի հայտնի մասնագետ էր նաև հին գերդաստանների նյութագրությունների պատմության: Բացի նման բնույթի տպագիր բազմաթիվ գործերից իր ձեռագիր ժառանգության մեջ են գտնվում նաև «Մորուզի» (850 էջ), «Նշումներ ռուսական նյութագրության և կենցաղագրության վերաբերյալ» (50 էջ), «Մուղոլական նյութագրությունը», «Ցարա Ռուսիայի նյութագրությունը», «Բեռարաբիայի նյութագրությունը» և այլն: Բեզվիկոնից նաև բազմաթիվ մատենագետ էր: Հատկապես նրա անտիպ գործերի գլուխ-գործոցն է հանդիսանում «Ռուսիա-ռուսական և ռուսիա-սլավոնական հարաբերությունների մատենագիտությունը» (700 էջ), ձեռագիրը գտնվում է տպագրության համար պատրաստ վիճակում ռուսական ակադեմիայի պատմության ինստիտուտում), «Ռուսիական ակադեմիայի ռուսերեն վավերաթղթերի ցուցակը» (850 էջ), «Մուղոլական ՍՍՀ-ի մատենագիտությունը», (ռուսերեն գրված հազարավոր քարտեր): «Ռուսիական ակադեմիայի ռուսերեն ձեռագրերը» (տպագրված՝ 1949 թ. 64 էջ) և այլն: Դարձյալ Բեզվիկոնի գրչին է պատկանում Սովետական Միությանը հանդիպած հատորը, հրատարակված 1945 թ. (124 էջ), որը 1947 թ. վերամշակված և ճոխացված ձևով՝ արժանացավ երկրորդ հրատարակության (151 էջ): Նրա ուշադրությունից չի վրիպել նաև Ռուսիայի մայրաքաղաք Բուխարեստի պատմության ուսումնասիրումը: Նա հեզվիկոնի է Բուխարեստի կենսագրական նշումներին հանդիպած 900 էջանոց մի աշխատության (1963 թ.), որը բազմաթիվ է ռուսիական ակադեմիայի պատմության ինստիտուտի կողմից, և այլ բազմաթիվ աշխատություններ, որոնց խորագրերի թվումն իսկ բազմաթիվ էջեր կարող է գրավել:

Գեորգե Բեզվիկոնից այն գիտնականներից էր, որ դեռ շատ երիտասարդ հասակից աչքի էր ընկել և գնահատվել ինչպես իր հայրենիքում, այնպես էլ արտասահմանում: Դեռ 25 տարեկան երիտասարդ էր Բեզվիկոնից, երբ սկսեց ընտրվել մի շարք գիտական ընկերությունների թղթակից անդամ և արժանացավ շքանշանների: Նա թղթակից անդամ էր ընտրվել Փարիզի, Բյուսելի, Մոֆիայի և այլ վարների պատմագիտական ընկերությունների, ինչպես նաև մրցանակի արժանացել ռուսիական ակադեմիայի կողմից: Անսահման եռանդի տեր գիտնականն ու ազնվագույն այս մարդը, որ միևնույն ժամանակ համեստության մի տիպար էր, դեռ վաղուց արժանացել էր նաև արտասահմանյան և հայրենի շքանշանների: Ֆրանսիայի պատմագիտական և կենցաղագիտական ինստիտուտը նրան շնորհեց ոսկե մեծ մեդալ: Նույնպես նա արժանացավ Ֆրանսիական Հանրապետական Լեզեռնի III կարգի շքանշանին, դարձյալ Ֆրանսիական «Arts-Science-Lettres» ակադեմիական ընկերության վերմել մեդալին, և այլն: Ռուսիայի մեծագույն վիպասան և խաղաղության պաշտպանության միջազգային մրցանակի դափնեկիր Միհայիլ Սուրովյանով «Hans Ancyte» ընկերության կողմից, Բեզվիկոնից շնորհեց 1936 թ. պատմագիտական աշխատությունների համար սահմանված մրցանակը: Դարձյալ Բեզվիկոնից էր, որ 1948 թ. արժանացավ նաև Ռուսիական ակադեմիայի Նրստորեյի անվան մրցանակին: Գեորգե Բեզվիկոնի գիտական գործունեությունը մեծ դրվատանքի է արժանացել ինչպես ռուսիական, այնպես էլ արտասահմանյան գիտական մամուլում: Տարբեր ազգությունների պատկանող բազմաթիվ երևելի անձնավորություններ առանձին գրաշխատություններով բարձր են գնահատել նրա աշխատությունները: Ռուսիացի աշխարհագրագիտական Նիկոլայ Յորգան, որ առաջին օրվանից հետևել էր Բեզվիկոնի ջանքերին, դեռ շատ վաղ կոհան էր նրան սպասող փայլուն ապագան: Յորգան դեռ 1936 թ., երբ Բեզվիկոնից հագիվ 26 տարեկան էր, նրան ուղղած իր նամակում գրել էր հետևյալը. «Միշտ էլ նկատել եմ քո այնքան թանկագին աշխատությունները և արժեքավորել եմ գիտությանը մատուցած քո այնքան օգտավետ ծառայությունները»:



Ինչպես հայտնի է, հայագիտությունը Ռուսիայում բավականին հարուստ ավանդույթներ ունի: Ռուսիայի առաջավոր

մտավորականության մեջ նկատվեցին 18-րդ դարի վերջից գտնվել են հայտնի պատմաբաններ և արվեստաբաններ, որոնք իրենց իրերի պատմությունը ուսումնասիրելու ընթացքում հանդիպելով նաև այդ երկրում ապրած հայերի դարավոր համակեցությունը վաստակող լուսավոր հետքերի, ազնվություն են ունեցել գրավելու նաև մեր ժողովրդի պատմությամբ։ Սկսած Ռոմանի եպիսկոպոս Մելքիսեդեկ Շտեֆրենսկուից (1822—1882), որ ջերմ մի հայասեր էր և հրատարակության հանձնեց Մոլդովայի մի քանի հայկական հին եկեղեցիների արձանագրությունները, մինչև մեծանուն պատմաբան Իսկոպակ Մ. Հաժդեան (1888—1907), որն իր քաղաքային աշխատությունների մեջ մեծ սիրով անդրադարձավ նաև հայերին, հասնելով հռչակավոր Նիկոլա Յորգային (1871—1940), որ առանձին աշխատություններ նվիրեց Կիլիկյան Հայաստանի, ինչպես նաև ռումինահայ գաղութի պատմությանը։ Հիշենք նաև արվեստաբան Գեորգե Բալշին (1868—1934), որ մեծ գուրգուրանքով ուսումնասիրեց նաև հայ արվեստի թողած ազդեցությունները ռումինական ճարտարապետության վրա և վերջապես պրոֆ. Պոկոտ. Վլադ Բընդեանուի (1900—1968), որ նման էր հայերեն գրաբարին և արտակարգորեն սիրեց հային և մինչև վերջին շունչը եվրոպայում և Ռումինիայում հայագիտության ոգեշնչողը հանդիսանալուց հետո իր ցանկությամբ մահից հետո իսկ հայերից չըքաժանվելու համար՝ իր վերջին հանգիստը գտավ Բուխարեստի հայոց գերեզմանոցում։ Եղան նաև ուրիշներ ևս, որոնք իրենց համեստ նպատակի թափնը բերեցին և դեռ շարունակում են բերել երկու ժողովուրդների վիճակագրական գործում։ Նրանց անունները միշտ խորին երախտագիտությամբ պիտի հիշվեն հայ ժողովուրդի լիակատար պատմության մեջ։

Ահա ռումինացի հիշյալ հայագետների շարքում իր պատվավոր տեղն ունի նաև քաղաքական գիտնական Գեորգե Բեզվիկոնին։ Նա ինչպես Քիշինևում, այնպես էլ Բուխարեստում հաճախ ջրջապատված է եղել հայ բարեկամներով։ «Է՛հնձ համար միշտ էլ համակրելի են եղել աշխատասեր հայերը,—գրում էր մեզ ուղարկած իր նամակներից մեկում, Բեզվիկոնին,—մեզանից ոչ հեռու գտնվում էր հայկական գերեզմանոցը, և ես հաճախ էլ, որ դիտում էի գերեզմանային հետաքրքրական կոթողները։ Հայերի մասին գրած իմ առաջին աշխատության վրա ես աշխատել եմ մի ամբողջ տարի, և այն հանդիսանում է իմ ամենաառաջին լուրջ ուսումնասիրություններից մեկը»։ Բեզվիկոնին Ռումինիայում և Մոլդովական ՍՍՀ-ում կատարած

ուղևորությունների ընթացքում հաճախ է հանդիպել հայկական հուշարձանների, ինչպես Սոլդովայում և ի մասնավոր ռումինահայության երբեմնի Աճին հանդիսացող Սուչավայում (Հանկատարի վանքը և այլն), Խոմանում և այլն։ Նա քաղաքից քաղաք ուսումնասիրել է հայերի վերաբերյալ քաղաքային դիվանատներ, ինչպես նաև հայկական հուշարձաններ, որոնցից կարևոր մի մասը ոչ ընչազալ երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում։ Դեռ վաղ երիտասարդությունից հայերի և հայոց անցյալին վերաբերող նյութերի հետ շփումը՝ Բեզվիկոնին դարձրին նաև հայերի թողած դարավոր հետքերի ջերմեռանդ հետազոտող և մեր ժողովուրդի սիրելի բարեկամ։ Նա կարևոր ավանդ է մուծել հայ-մոլդովական և հայ-ռումինական, ինչպես նաև հայ-ռուսական դարավոր կապերի ուսումնասիրության պատմության մեջ։

Բեզվիկոնիի առաջին հայագիտական աշխատությունը կրում է «Հայերը Բեսարաբիայում։ Նախիջևանի և Բեսարաբիայի թեմը։ Մանուկ թեյ» խորագիրը և լույս է տեսել 1934 թ.։ Աշխատության մեծագույն առավելությունը կայանում է ոչ միայն նրանում, որ նա հանդիսանում է հայ կարևոր գաղթավայրերից մեկի պատմությունը ուրվագծելու առաջին համառոտ փորձը, այլև այն, որ նա հիմնականում խարսխվել է հեղինակի կողմից հայտնաբերված դիվանային անտիկ նյութերի վրա։ Ուսումնասիրությունը բաժանված է տասը հատվածների։ Սկզբի մասում հեղինակը անդրադարձել է գաղութի պատմությանը իր ծագման օրից մինչև 19-րդ դարի սկիզբը։ Առանձին կանգ է առել Բեսարաբիայի թեմի առաջին հոգևոր առաջնորդ Գրիգոր արքեպիսկոպոսի վրա։ Զաքարյանի կյանքին և նրա հիմնադրած Քիշինևի կալվածների վրա։ Խոսվում է նաև թեմի առաջնորդներ Ներսես Աշտարակեցու և Գաբրիել Այվազովսկու և վերջինիս հաջորդների գործունեության մասին, որից հետո անդրադառնում է նաև թեմի կյանքին մինչև 20-րդ դարի սկիզբը։ Ուշագրավ է հատկապես հալածող նշանավոր դիվանագետ և հայտնի ռուսաբան Մանուկ թեյ Միդայանի և հայ կալվածատիրության նվիրված թափնը։ Աշխատությունը փակվում է Բեսարաբիայի հայ կաթոլիկների մասին գրված համառոտ ակնարկով։

Բեզվիկոնին երկրորդ անգամ անդրադարձավ հայերին 1935 թ. իր «Դեմքեր և ստվեր»

¹ Gheorghe Bevilconi, Armenii în Basarabia Eparhia Nahicevaneană și Basarabeană. M. nuc bel., "Din trecutul nostru", Januaria 1934, No.3 — 4, Chis'nău 62 p.

ներ հյուսիսագին Մոլդովայից»՝ ուսումնասիրության մեջ, որ կանգ առավ երկու հայ ա-կանավոր գերդաստանների պատմության վրա: «Իրանցից առաջինը նվիրված էր Ռուսիայում ապրող Միրզա բեյի վերջին շա-նավիդներին (էջ 29—80), որ խոսեց Մա-նուկ բեյի եղբոր՝ Սիրզա բեյի հետնորդների մասին, որոնցից ոմանք դեռևս ապրում էին իր ժամանակ: Ոչ պակաս ուշագրավ էին հու-կովիցայում գործող հայազգի նշանավոր Պրուցկուլ կամ Պրուցկուլյան ասպետական տիտղոսի արժանացած գերդաստանի մա-սին նվիրված էջերը (90—97), որոնք կարե-վոր նպաստ են բերում Ռուսիանայ գեր-դաստանների ցարդ չգրված նյութագրության պատմության համար: Նշվում է, որ սույն գերդաստանի նահապետի անունը նախա-պես եղել է Տոնավազ և որը շատ դեռատի հասակում մոտ գործելով Մոլդովայի իշխա-նի պալատում մականվանվել է Պրուցկուլ (ռուսիներեն՝ մանուկ): Սույն գերդաստանից էր Գրիգոր Պրուցկուլը, որ Մոլդովայի իշխա-նին կոստանդին Զեհան Ռակովիցը իշխա-նի (1749—1753 և 1756—1757 թթ.) կողմից նշանակվեց հայերի դատավոր և կառավա-րիչ: Հոգվածում խոսվում է նաև վերջինիս հետնորդների մասին:

Եթե իր առաջին հայագիտական գործում Բեզվիկոնին անդրադարձել էր նաև Մանուկ բեյի կյանքին և գործունեությանը, ապա հե-տագա տարիներին միշտ որոնող գիտնակա-նը նորանոր փաստաթղթերի հայտնաբեր-ման շնորհիվ կարողացավ երկրորդ հրատա-րակության միջոցով ավելի հիմնավոր ու-սումնասիրության նյութ դարձնել այդ նշա-նավոր հայի դիվանագիտական գործունե-ությունը: Այդ գործը լույս տեսավ 1938 թ. «Մանուկ բեյ»² խորագրով և բաղկացած էր 55 էջերից: Թեև Բեզվիկոնիից առաջ հայ և օտար հեղինակներ հոգվածներ և երբեմն մեծագրություններ էին նվիրել Մանուկի կյանքին, սակայն նրանք հաճախ խառն են եղել առասպելներով. հետևաբար դրանք հեռու են եղել այդ նշանավոր անձի գործու-նեության լրիվ պատկերը ներկայացնելուց: Բեզվիկոնին ճիշտ կերպով նկատել էր, որ մինչև իր աշխատությունը դեռևս ոչ ոք չէր գրել նրա քննական կենսագրությունը. «Մինչդեռ,—գրում էր Բեզվիկոնին իր առա-ջաբանում,—այդ հույսկապ հայի ստվերը արժանի էր ավելի մեծ ուշադրության, հատ-

կապես բոլոր այն երկրներում, որ նա գոր-ծել էր. իբրև բուդաբակյան քաղաքների կազմակերպիչ, հարձրագույն Դոան դրագո-ման (թարգման) և բեյ, իբրև կոմսիոնար, Պա-հարնիկ և իշխան Մոլդովայաքիայում, սեր-բերի և Բուխարեստի ազատարար, Բուխա-րեստի խաղաղության դաշինքի կնքման կազմակերպիչ, հայերի իշխան՝ Վիեննայի վեհաժողովում, Նորին վսեմություն և ա-պետ՝ Ռուսաստանում, հարգված Ալեքսանդր Ա կայսրի կողմից, և վերջապես նախագծերի նախաձեռնող, որոնց իրագործվելու դեպ-քում մոռացումից դուրս էր բերվելու հեռա-րաքիան»: Եվ իսկապես Բեզվիկոնիի հա-ջողությունը շատ մեծ եղավ, քանի որ նա ոչ միայն լրիվ չափով տեղյակ էր իրենցից առաջ Մանուկ բեյի մասին գրված աշխատություն-ներին, այլև իր այս նոր ուսումնասիրությու-նը կառուցել էր դիվանային հետևյալ երեք հիմնական աղբյուրների, ինչպես նաև այլ անտիկ նյութերի հիման վրա. ա) Հնչեշ-տում դեռևս երկրորդ համաշխարհային պա-տերազմից առաջ պահվող Մանուկ բեյի գերդաստանի դիվանը, բ) Քիշինկի պետա-կան դիվանի նյութերը, գ) Մոլդովական կոմպուլունգ քաղաքի Մանուկ բեյի եղբոր վերջին շառավիղներից հայազգի Տիգրան Պրուցկուլի դիվանը և այլ նյութեր: Սույն աշ-խատությունը բաղկացած էր հինգ մասից. ա) ներածություն, բ) Թուրքիայում, գ) Դա-նուբյան պատերազմը (1806—1812 թթ.), դ) վերջին տարիները, ե) Մանուկ բեյի հա-ջողությունը: Այս աշխատությունը կարևոր նվաճում էր, քանի որ նրա շնորհիվ է, որ Մանուկ բեյի կենսագրությունը դրվեց գի-տական հիմքերի վրա և մեկդի վանելով նրա անվան շուրջ ստեղծված առասպելների շղարշը, առաջին անգամ լինելով ցույց տրե-վեց, որ նա լույս մի խանի (քարավանատուն) տեր հարուստ մեկը չէր եղել, այլ հանդի-սացել էր 19-րդ դարի սկզբի հայազգի նշա-նավոր մի դիվանագետ, և որի անունը ի պատվի էր մեծ պետությունների բազմաթիվ նշանավոր անձնավորությունների մոտ, և որը նշանակալից ծառայություններ էր մա-տուցել ինչպես Բալկանյան թերակղզու ժո-ղովուրդներին, այնպես էլ Ռուսաստանին: Հետագայում նորահայտ նյութերի հիման վրա, Բեզվիկոնին պատրաստեց նաև Մա-նուկ բեյին նվիրված մի նոր գործ ես:

Բեզվիկոնին հետագա տարիներին ևս շա-րունակելով հայ գաղութի պատմության ու-սումնասիրման գործը, 1944 թ. հրատարա-կեց «Բեսարաբիայի հայերը մինչև 19-րդ դարը» վեղճագրով հոդվածը³:

⁴ Gheorghe Bezviconi, Armenii din Basarabia până în secolul al XIX, «Viaja Basarabiei», 1944 No. 1—2, p. 37—39.

² Gheorghe Bezviconi, Figuri și umbre din nordul Moldovei, „Din trecutul nostru”, Ianuarie-Septembrie 1935, No. 21—24, p. 23—37.

³ Gheorghe Bezviconi, Manusc, editia II, «Din trecutul nostru», 1936, Martie-Aprilie, No. 51—55, 56 p.

1940 թ. ռումինական հայտնի հրապարակագիր Վարդան Մեշտոմյանի խմբագրած և հրատարակած «Ararat» հայագիտական ռումիներեն հանդեսում լույս տեսավ նրա հայագիտական մի այլ հոդվածը. «Ութ քառեր ռումինական հանրագիտարանի համար»³ խորագրով և ուր ուրվագծեց Գարրիել արքեպ. Այվազովսկու, Հովսեփ արքեպ. Արդուջյանի, ռումինական թեմի առաջնորդ Հուսիկ արքեպ. Ջոհրայանի, Մակար Ա կաթողիկոսի, Մանուկ քեյի, Ներսես Աշտարակեցու և Գրիգոր արքեպ. Ջաքարյանի ամփոփ կենսագրությունները և Նախիջևանի ու Բեսարաբիայի թեմի մասին: Դրանք մեծ մասամբ լույս տեսան նաև նույն 1940 թ. հոկտեմբերին հրատարակված Լուչիան Դեմետեսկուի «Enciclopedia Cugetarcea» հանրագիտարանում և ուր քաջի վերոհիշյալներից հրատարակվեցին դարձյալ Բեզվիկոնի գրած Բեսարաբիայի հայոց թեմի հոգևոր առաջնորդներ՝ Ներսես Խուդավերտյանի, Գրիգոր Աղաբիրյանի, Գրիգոր Գաբիշյանի և այլոց կենսագրությունները:

Գեորգե Բեզվիկոնին 1941 թ. ռումինական քաղաքականական քննադատ Հ. Շ. Սիրուցու խմբագրած և հրատարակած «Ani» տարեգրքում լույս ընծայեց հայերից վերաբերող մի այլ հոդված՝ «Հայկական գերեզմաններ Պրուտի և Պենեսի միջև» խորագրով⁴: Հեղինակը իր առաջարկում գրում է այն մասին, որ իր երկարատև ճանապարհորդությունների ընթացքում միշտ հետաքրքրվել է հայերի անցյալի վկաները հանդիսացող հուշարձաններով, հետազոտելով հայոց եկեղեցիներն ու գերեզմանները: Այստեղ խոսում է Խոտիցի հայոց հիմնավոր ցամաքի ավերակների, ինչպես նաև Բուրգի և Աքքերմանի հայոց եկեղեցիների և գերեզմանների մասին: Վերջին գերեզմանատանից նշում է հատկապես Ասվատուրով գերդաստանի գերեզմանների մասին և համարում է դրանք արվեստի գործեր: Քիշինևի մասին խոսելիս կանգ է առնում հայ կաթողիկոսների և հայ լուսավորչականների գերեզմանների վրա: Նշում է Գլիրակ Թովմա Հոհանյան Ագուլեցի վարդապետի գերեզմանակոթողի (մահացած 1827 թ.) և այլ քարձրաստիճան հայ հոգևորականների դամբարանների մասին: Վերջում խոսում է նաև եկեղեցու մոտ գտնվող Մանուկ քեյի գերեզմանի և նրա կառուցած Հնչեշտ ավանի եկեղեցու մասին:

«Ani» տարեգրքի 1942—1943 թթ. միացյալ հատորում Բեզվիկոնին հրատարակեց «Գրիգոր արքեպիսկոպոս Ջաքարյան»⁵ խորագրով հոդվածը: Այն առաջին խնամված ուսումնասիրությունն էր Գլիրված ականավոր հայ հոգևորականի կյանքին և գործունեությանը: Նա ծագում էր Մուղդվայի հիմնավոր հայ գաղթօջախ Աքքերմանից (այժմ Ուկրաինական ՍՍՀ) և իբրև Արդուջյան արք.ի հավատարիմ անձ հետագայում մասնակից եղավ Դավիթ-Գանգեյան կաթողիկոսական պալատին: Նախապես գլխավորում է Մուղդվայաքիայի թեմը և ապա 1812 թ. դառնում նորաստեղծ Բեսարաբիայի թեմի հայոց առաջնորդը: Հեղինակը իր ուսումնասիրության մեջ ցույց է տվել, որ անգամ այդ շրջանին, դեռևս, նա շարունակել էր ղեկավարել Մուղդվայաքիայի հայոց թեմական գործերը: Ռումինական ականդեմիայում պահված Գրիգոր Պլյուզիտի դիվանում կան նամակներ գրված Գրիգոր արքեպիսկոպոսի կողմից, ուր նա խոսում է իր ունեցած կապերի մասին ոչ միայն հայերի, այլև ռումինացի և ռուս անձնավորությունների հետ: Ռուս նշանավոր գրող Պուշկինը իր գրագրության մեջ նշել է հայ արքեպիսկոպոսի կազմակերպած ընդունելությունների մասին: Ցույց է տրվում, որ Գրիգորի և Մանուկ քեյի գործունեության ժամանակաշրջանում մեծանում է նաև հայերի հեղինակությունը Բեսարաբիայում: Վերջում խոսում է Ջաքարյանի կալվածների, նրա մահվան և իր հետնորդների մասին:

Նույն տարեգրքի վերոհիշյալ հատորում դարձյալ լույս տեսավ իր մի մահախոսական Գլիրված Մուղդվայի կրթությունը քաղաքի հասարակության նուտար Տիգրան Պրուցկույի (1871—1942 թթ.) հիշատակին⁶: Խոսելով նրա կյանքի և գործունեության վրա, հեղինակը կանգ է առնում Պրուցկույի արտասահման կատարած երկար ճանապարհորդությունների, գրադարաններ և բանկեր հիմնադրելու նպատակով նրա գործադրած ջանքերի, ինչպես նաև իր միջոցներով արտասահման ուղարկված ուսանողների և վերջապես իր ամբողջ կյանքը իբրև հասարակական նուտար գրկվածների կարիքներին ի սպաս դնելու մասին: Նա հիմնականում հրապարակագիր էր և դեռ 1924 թ. հիմնադրել էր «Justitia» հանդեսը, որը և պաշտոնաթերթն էր Ռումինիայի նուտարների, և

³ Gheorghe Bezviconi, 8 cuvinte pentru Dicționarul Enciclopedic Român, "Ararat", București, 1940, No. 187.

⁴ Gheorghe Bezviconi, Morminte auzmedești dintre Prut și Nistru, "Ani anuarul culturii armene", București 1941, p. 389—393.

⁵ Gheorghe Bezviconi, Arhiepiscopul Grigori Zaharian, "Ani anuar de cultura armenească" 1942—1943, București, 1943, p. 481—488.

⁶ Gheorghe Bezviconi, Tigran Pruncu, Լուչիան և Գլիրվ. p. 613—624

աշխատում էր երկրում ստեղծել Ռումինիայի հասարակական նոտարների ընդհանուր միություն: Պրոմկույի ջանքերը դրվատանքը էին արժանացել նաև Խոսայիայում: Ինչպես նշեցինք, Տիգրան Պրոմկույը իբրև Մանուկ բեյի եղբոր Սիրգա բեյի շատակիղ ուներ ունեցող մի դիվան, որը ուսումնասիրեց հեզվիկոնին: Պրոմկույը ոգի ի բռնի աշխատեց փրկել Հնչեշում գտնվող Մանուկ բեյի պալատը:

Բեզվիկոնին հայերին անդրադարձավ նաև 1962 թ. Բուխարեստում իր հրատարակած «Ռումնասիրությունը ռումինա-ռուսական հարաբերությունների պատմության» խորագրով արժեքավոր մենագրության մեջ: Եկատի ունենալով, որ այդ գործի արժանիքների մասին առանձին գրախոսությամբ սրանից առաջ անդրադարձել ենք⁹, ուստի այստեղ համառոտակի կխոսենք միայն հեղինակի կողմից հայերին նվիրած բաժնի վերաբերյալ: Նախ և առաջ հեղինակը կանգ է առել հայերի հնագույն անցյալի պատմության վրա և ապա նշել հայերի գաղթելու պատճառների մասին: Նա ևս մյուս ռումինացի նշանավոր հեղինակների հետ այն կարծիքին էր, որ հայերը Մոլդովայում հաստատվել էին դեռևս մոլդովական պետության ձևավորումից էլ առաջ: Բեզվիկոնին ապա անդրադարձնում է հայերի գլխավոր գաղթօջախների, նրանց կառուցած հնագույն հուշարձանների և երկրի կյանքում հայազգի նշանավոր անձնավորություններից մի քանիսի խաղացած դերի մասին: Վերջում հեղինակը խոսում է նաև ռումինական մի շարք հուշարձանների վրա (Դեալի վանքը, Կոթուեա դե Արմեշիի իշխանական եկեղեցին, և այլն) նշմարվող հայկական և վրացական արվեստի թողած ազդեցությունների մասին: Նրա կարծիքով կովկասյան և հայկական ազդեցություններ նշմարվում են նաև գերեզմանաքարերի, դռների և պատուհանների վրա կատարված զարդաքանդակների, ինչպես նաև ձեռագրերի մանրանկարների վրա: Ըստ նրան անգամ արևմտյան մի քանի զարդային էլեմենտներ ունեցող հուշարձանները սպորտը են հայ արվեստագետների աշխատանքի: Բեզվիկոնին խոսելով 1806—1812 ռուս-թուրքական պատերազմի մասին առաջին անգամ լինելով ռուս-ռումինական կապերի պատմության նվիրված մի մենագրության մեջ, հանգամանակից կերպով կրկին կանգ է առել հայազգի մեծ դիվանագետ

և ռուսական կողմնորոշման ջատագով Մանուկ բեյ Սիրգայանի գործունեության վրա: Վերջում հեղինակը անդրադարձել է նաև Մոլդովայի մշակույթի մեծ լուսավորիչ, ծագումով հայ Գեորգե Ասաբիի տպարանում հայկական բաժին հիմնվելու և վերջինիս հանդեսում հայ գրականության և Հայաստանի մասին հրատարակած հոդվածների մասին, և այլն:

Բեզվիկոնին մեզ հայտնի ամենավերջին հայագիտական նոդիվոնը ճյուղագրական բնույթի անտիպ մի գործ է նվիրված Մոլդովայի հայազգի Միսիր հնագույն գերդաստանի պատմությանը¹⁰: Աշխատությունը գրվել էր 1957 թ. ռումինական ակադեմիայի հանձնարարությամբ. իբր պատասխան ջանքերով հայից Լ. Միսիր անուն մի հայի հարցադրման, որը խնդրել էր իրեն ուղարկել Ռումինիայի Միսիրների մասին նյութեր: Հանգուցյալ գիտնականը մեզ է տրամադրել սույն հոդվածի մեքենագիր օրինակներից մեկը, որից էլ քաղում ենք հետևյալ տվյալները: 1870 թ. Յոն Միսիրի կողմից կազմված ճյուղագրության մեջ, իբրև գերդաստանի նահապետ 1385 թ. հիշատակվում է Գրիգոր Միսիրը: Իսկ ըստ Լեհաստանի թագավոր Վադիսլավի դիպլոմի՝ Լվովի առևտրականների մեջ հիշվում է 1427 թ. մի այլ Ս. Միսիր: Հեղինակը հիմնականում անդրադառնում է Ռումինիայում ապրած Միսիր գերդաստանի հինգ ճյուղերի մասին և խոսում ևս Ռոման քաղաքի ճյուղի մասին, բ) Ռոմանի մի այլ ճյուղի, գ) Բոտոշանի ճյուղի, դ) Բոտոշանի մի այլ ճյուղի մասին և ի վերջո ե) Ֆոկշանի ճյուղի վերաբերյալ: Նա խոսում է այս գերդաստանի կողմից երկրին ընծայված նշանավոր անձնավորությունների մասին և ապա կանգ առնում ժամանակակից Միսիրների վրա: Հիշենք այդ ակնանավոր Միսիրներից մի քանիսին. 1781 թ. Ավստրիական և ռուսական բանակներին (թուրքերի դեմ մղված մարտերի ընթացքում). Ռոմանից Վասիլ Միսիրը իր եղբոր հետ օգնություն են ցույց տալիս նրանց սննդամթերքով և հյուրընկալում իրենց տունը: Մոլդովայի և Վալաքիայի միավորման նախօրյակին (1857—1858 թթ.) Միսիր գերդաստանի բազմաթիվ ներկայացուցիչներ գտնվում էին միավորման առաջավոր կողմակիցների թվում: Վասիլ Միսիրը (1848—1929 թթ.) եղել է հայտնի իրավաբան, հրապարակագիր, ծերակուտական և երկրի կալվածների նախարար: Պետրե Միսիրը (1856—1929 թթ.) Յաշի և Բուխարեստի համալսարանների միջազգային իրա-

⁹ Gheorghe Bezviconi, Contribuții la Istoria Relațiilor Româno-Ruse, București, 1962.

¹⁰ Сурен Коланджян, Цейное исследование «Литературная Армения», Ереван, 1964 г., № 5, стр. 194—196.

¹¹ Gheorghe Bezviconi, Familia Misir (— ևս ևսիս) .

վումքի ուսուցչապետ, ծեռակույտի փոխ
նախագահ, մտերիմ ընկեր նշանավոր թա-
տերագիր Յ. Լ. Կարաջալեի հետ, հրապա-
րակագիր ու իրավունքի և գրականության
վերաբերյալ բազմաթիվ աշխատությունների
հեղինակ։ Նա նաև Ռումինական ակա-
դեմիայի պատվավոր անդամ էր և հա-
մաշխարհային ժողովների մասնակից։ Վա-
րդիան Միսիրը թղթակցել է Մետերնի-
խի հետ։ Միսիրներից հայտնի էր նաև
փաստաբան Յոն Միսիրը, որ քաղաքա-
պետ դարձավ Բոտոշանի և հեղինակեց
Առաջին համաշխարհային պատերազմի
տպավորությունների իր մատյանը՝ «Սե-
ռած աղջիկը», որի ներածությունը գրեց
Ն. Յորգան, գիրքը ունեցավ մի քանի հրա-
տարակություն։ Բեզվիկոնի այս անտիպ
սեղմ աշխատությունը գրված է հեղինակին
հատուկ մեծ բարեխղճությամբ և փաստերի
հիման վրա և ցարդ մեզ հայտնի լավագույն
ճյուղագրությունն է գրված անվանի ռումի-
նահայ մի գերդաստանի մասին։

Անշուշտ միայն վերոհիշյալ գործերով չեն
աահմանափակվում Բեզվիկոնիի հայագի-
տական աշխատությունները, սակայն հիմ-
նականում նկատի ունեցանք ամբողջությամբ
հայ պատմությանը նվիրված նրա գործերը։
Ասենք նաև, որ գիտնականի ինչպես տպա-
գիր այլ բնույթի մեծագրություններում և
հոդվածներում, այնպես էլ անտիպ գործե-
րում ապագա հետազոտողը դեռ շատ նյութ
կարող է գտնել մեր պատմության վերաբեր-
յալ։ Ինչպես հայտնել էր մեզ Բեզվիկոնի, իր
անտիպ մատենագիտությունների մեջ նա
առատ նյութ էր կուտակել նաև հայերի մա-
սին։

*
* *

Գեորգե Բեզվիկոնիի հայագիտական գոր-
ծունեությունը սկզբից ևեթ արժանացավ հայ
ակադեմիկոս մշակների ուշադրությանը և
նրանց անվերապա գնահատանքին։ Դեռևս
1934 թ. վերջերից էր, երբ Քիշինևում Բեզ-
վիկոնիի հետ հանդիպեց մայր Հայրենիքից
ժամանած հայ ձեռագրագիտության մեծա-
նուն վաստակավորը, Ամենայն Հայոց կա-
թողիկոսության լիագոր պատվիրակ Տ. Գա-
րեգին արքեպ. Հովսեփյանը (ապա կաթո-
ղիկոս Մեծի Տանն Կիլիկիո), որ անսահման
խանդավառությամբ ընդունեց հայագետի
այդ ժամանակ դեռ նոր լույս ընծայած հայա-
գիտական անդյուհիլ գործը՝ «Հայերը Բեսա-
րաբիայում» գրքուկը։ Մեծանուն գիտնա-
կան հոգևորականը իբր հիշատակ Բեզվիկո-
նիին նվիրելով իր լուսանկարը, այդ առթիվ
գրեց նաև հետևյալ տուլերը. «Նա Ձեզ եմ դի-

մում ոչ իբրև մի հայի, այլ իբրև գիտության
մի մարդու, մեծապես գնահատելով Ձեր
գործը։ Մաղթում եմ, որ Ձեր գրիչը ի սպաս
դրվի մարդկության և գիտության օգտին։
Այդ նույնքան օգտակար է լինելու ինչպես
հայերին, այնպես էլ ընդհանրապես մարդ-
կության համար։ Ես նա պատմաբան եմ և
գիտեմ թե ինչպիսի ազնիվ ասպարեզ էք
Դուք ընտրել։ Ձեր աշխատության օրինակ-
ներից մեկը ես հանձնելու եմ Էջմիածնի
Մատենադարանին, որպեսզի հայտնի դառ-
նա, որ Հայաստանից և հայերից հեռու գրտ-
նովում են գրչի մշակներ, որոնք օտար լինե-
լով հանդերձ մեր ժողովուրդից իրենց տա-
ղանդը նվիրաբերում են հայ ժողովրդի
պատմության ուսումնասիրությանը։

Ռումինահայ թեմի հոգևոր առաջնորդ
Հուսիկ արքեպ. Ջորգայանը ևս Բեզվիկո-
նիի հայագիտական առաջին գործի վերա-
բերյալ հատուկ շնորհակալագիր էր գրել
1934 թ. փետրվարի 12-ին։

Հայ բազմադյուն մշակ Արշակ Չոպան-
յանը իր գոհունակությունը հայտնելով Բեզ-
վիկոնիին նրա «Մանուկ բեյ» աշխատության
վերաբերյալ, ձեռնարկել էր այն Փարիզում
ֆրանսերեն հրատարակելու աշխատանքին,
սակայն 1939 թ. պայթելով երկրորդ համաշ-
խարհային պատերազմը նրա ցանկությունը
ի կատար չաժվեց, և «Մանուկ բեյ»-ի ֆրան-
սերեն թարգմանությունը մնաց Չոպանյանի
դիվանում։

Ռումինահայ մշակներ Վարդան Մեշտուն-
յանն ու Հ. Մ. Սիրունին իրենց հրատարա-
կած հանդեսներում ընթերցող լայն հասա-
րակությանը ծանոթացրին հայագիտության
քննազավառում Բեզվիկոնիի կատարած մի-
անգամայն գնահատելի գործերի հետ և մեծ
սիրով հյուրընկալեցին նրա աշխատակցու-
թյունը։

Այս տողերը ստորագրողը թեև դեռ պա-
տանեկության տարիներից էր հաղորդակից
դարձել Բեզվիկոնիի հատկապես հայագի-
տական աշխատություններին, սակայն մի-
այն նրա բեղմնավոր կյանքի վերջին տարի-
ներին էր, որ նամակագրության միջոցով
բախտը ունեցավ ճանաչելու գիտնականին
ու մարդուն և հայասերին։ Նա ոչ միայն բազ-
մավաստակ և ճանաչում գտած գիտնական
էր, այլև համեստ ու միանգամայն ազնիվ
մի անձնավորություն, և որը երբեք չէր
զլանում իր խորհուրդները տալ և խրախուսել
նոր ասպարեզ մտնող երիտասարդներին,
այդ թվում նաև մեզ։ Նրա վերջին տարիների
քուռն ցանկությունն էր կրկին անդրադառ-
նալ իր երիտասարդական տարիքում կա-
տարած հայագիտական գործերին և իր հա-
վաքած նորանոր ճոխ նյութերի օգնությամբ
հարստացնել և դարձնալ հրատարակել

դրանք: Սակայն նա միևնույն ժամանակ մտածում էր զբաղվել նաև հայագիտական նոր հարցերով: Նա իր նամակներից մեկում գրում էր այդ մասին. «Զբաղվում եմ Մոլդովայի միջնադարյան պատմությամբ: Ինձ հետաքրքրում է ամեն ինչ, որ հրատարակվել է Մանուկ քելի, Գր. արքեպ. Զաքարյանի, Բեսարաբիայի ու Նոր Նախիջևանի թեմի և նրա մյուս հոգևոր առաջնորդների վերաբերյալ, ինչպես նաև հայկական ավատատիրության սկզբնական շրջանի պատմությամբ, երբ Հայաստանը և իր հարևանները իշխանական տներ ունեին, Ռումինիայի հայերով և այլն: Աշխատում եմ, ինչքան որ հնարավորություն է ինձ տալիս իմ առողջական վիճակը»: Նա դարձյալ անդրադառնալով իր նախորդ մեծ գործին գրում էր. «Իհարկե այսօր Մոլդովական ՍՍՀ-ի հայերի պատմությունը շատ ավելի լավ և ամբողջական կարող էի գրել», սակայն հեղինակին ուրախացնում էր այն հանգամանքը, որ երիտասարդությանը իր գրած այդ գործում օգտագործել էր այնպիսի նյութեր, որոնք այժմ անհետացել էին գիտության համար: Մի այլ անգամ մեծ ուրախությամբ էր ավելտում այն լուրը, որ մեկի մոտ գտել էր 19-րդ դարի սկզբից մի շարք վավերաթղթեր Գր. արքեպ. Զաքարյանի վերաբերյալ և ցանկություն էր հայտնում հետազայում այդ մասին մի հոդված գրել:

Ի տես արյան և մոխրի միջից հառնած Հայաստանին, Բեզվիկոնին մեծ ոգևորությամբ հետևում էր մեր հայրենիքի առօրյային և հայագիտության ձեռք բերած նորանոր նվաճումներին: Հայագետ պրոֆ. դոկտ. Վլադ Բրեզեցանուց իբրև Հայաստանի գիտ. ակադեմիայի «Պատմաքանասիրական հանդեսի խմբագրական մարմնի անդամ, անշուշտ խմբագրության հրավերով, առաջադրել էր Բեզվիկոնին իր աշխատակցությունը բերել Հայաստանի կարևոր հանդեսին: Նույնպես Բեզվիկոնին գրախոսություններ գրեց Հայաստանի գրողների ռուսերեն պաշտոնաթերթ «Литературная Армения» հանդեսի մի շարք համարների մասին և որը պետք է հրատարակվի Ռումինիայի արեվելագետների «Studia et acta orientalia» հանդեսի մեջ: Նա վերջում հնարավորություն ունեցավ նամակագրական կապ հաստատելու անվանի հայագետ Լևոն Մելիքսեթ-Բեկի հետ, որի աշխատություններին նա վաղուց ծանոթ էր: Բեզվիկոնին շարունակ հետաքրքրվում էր Հայաստանի ակադեմիայի և Մաշտոցյան Մատենադարանի հայագիտական հրատարակություններով. մեծ ուշադրությամբ կարդում էր հայ ժողովրդի պատմությունը ու այլ հայագիտական գործեր: Նա մեծ հիացմունքով էր խոսում հայ

արվեստի և հայ պատմության մասին և որոնց նվիրված հատուկ աշխատ էր կազմում. «Ինչ, հրաշալի արվեստ և պատմություն ունի ձեր ժողովուրդը, միշտ էլ ես սիրել եմ նրան»: գրում էր նա: Նրա մեծագույն ցանկությունն էր, թեկուզ կարճ ժամանակով, իր տիկնոջ հետ գալ և տեսնել Հայաստանն ու նրա սիրտը՝ մեր քաղաքամայր Երևանը. իր վերջին նամակներում Բեզվիկոնին գրում էր. «Կարող է մի օր առիթը պիտի ունենանք այցելելու Երևանը, որը այնքան սիրում եմ իբրև Հայաստանի սիրտը», և կամ «Մեծ հույսով կը կատարեի այդ ճանապարհորդությունը, որպեսզի 10—14 օր մնամ այն ժողովրդի մեջ, որին սիրում և արժեքավորում եմ դեռ երիտասարդ հասակից»: Սակայն ակադես, որ չիրականացավ նրա այդ փայտալած երազը:

Նա իր տալագիր ամենավերջին սովոր աշխատությունից օրհնակներ իբրև նվեր ուղարկել էր Ամենայն Հայոց Վեհապետ կաթողիկոս Ս. Տ. Վազգեն Ա-ին, (որին ամենամեծ ծանոթ էր դեռևս Ռումինահայ թեմի երբեմնի առաջնորդ Հուսիկ արքեպ. Զոհրապյանի ժամանակից), ինչպես նաև Հայաստանի գիտ. ակադեմիայի գրադարանին:

Բեզվիկոնին կարծեք նախագալով իր մոտալուտ վախճանը շարունակում էր աշխատել մեծ եռանդով գիշեր ու ցորեկ: Նրա վաղաժամ մահով ինչքա՜ն գործեր կիսատ մնացին և ինչքա՜ն գեղեցիկ ծրագրեր չիրագործվեցին: Նրա անընչացած մարմինը այժմ հանգչում է Բուխարեստի ճշանավոր Բելուի գերեզմանոցում, որի մասին էլ նա այնքան գեղեցիկ էջեր է գրել, և շատ մոտիկ է գրեցրվում իր թանկագին ուսուցչապետի և հրաշակավոր գիտնականի՝ Նիկոլա Յորգայի դամբարանին: Երկու տարբեր սերունդների ներկայացուցիչներ են թեև այդ գիտնականները, սակայն նրանց անունները միշտ նվիրական են մնալու նաև մեր ժողովրդի համար, որովհետև նրանք մեր անփոխարինելի քարեկամները մնացին մինչև իրենց վերջին շունչը:

Հանգուցյալ գիտնականի այրին՝ տիկ. Տատիանա Բեզվիկոնին օրհնակելի ու բացառիկ նախանձախնդրությամբ և մեծ գուրգուրանքով այսօր պահպանում է իր ամուսնու բովանդակ գիտական ժառանգությունը, և ավարտված գործերը պատրաստում է տպագրության հանձնելու համար:

Պատմաքան Գեորգե Բեզվիկոնիի վաղաժամ մահը, ոչ միայն խոշոր կորուստ է Ռումինիայի և Մոլդովական ՍՍՀ-ի գիտության համար, այլև մեծ կորուստ է նաև հայ ժողովրդի և Ռումինիայում ծավալվող հայագիտական աշխատանքների համար, որոնք

արդեն շատ ծանր հարված էին կրել հայագետ պրոֆ. Վլադ Բրնըցեանուի մահով:

Հայ-մոլդովական և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունը Մոլդովական ՍՍՀ-ում և Ռումինիայում ուսումնասիրել փորձող ապագա պատմաբանը, առանց Գեորգե Բեզվիկոնիի հայագիտական ժառանգության չի կարող հաջողության հասնել, քանի որ նրա գործերը ուսանելի և արժեքավոր շատ բան են բովանդակում և բացի այդ, ինչպես նշեցինք, նրա օգտագործած նյութերի մի մասը այժմ գոյություն չունի և այդ մասին մեզ հատուկ եղող միակ

աղբյուրը դարձյալ հանդիսանում է ռումինացի հայագետի նույն ժառանգությունը:

Նվիրելով վերոհիշյալ տողերը ռումինացի գիտնականի կյանքին, գալիս ենք մեր հոգու պարտքը և խորին հարգանքը մատուցելու նրա պայծառ հիշատակին: Հայ ժողովուրդը իր լավագույն երախտագիտությունը հայտնած կլինի անմոռանալի հայասեր և հայագետ Գեորգե Բեզվիկոնիի հիշատակին, եթե մի օր կարողանա, իր համար այնքան սիրելի եղող, մեր Մայր Հայրենիքում հայերեն թարգմանությամբ լույս ընծալել նրա հայագիտական վաստակի մի հատորյակը:





ՍԻՐԱՔԻ ԳՐՔԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ (Լ Ր Ա Ց Ո Ւ Մ)

«Էջմիածին» ամսագրի 1988 թ. ԺԱ.—ԺԲ միաջուլ համարում տպագրված են Սիրաքի գրքի հնագույն թարգմանության նորահայտ հատվածներ¹, այդ թվում՝ նաև հիշյալ գրքի

խե գլուխը: Վերջինիս 4—9 տները տպագիր բնագրում պակասում են: Մատենադարանի № 5808 ձեռագրի հիման վրա հրապարակում ենք պակասող տները:

- 4 Հաստովք և հեզութեամբ նորա սիրեաց զնա²,
Ընտրեաց զնա յամենայն մարմնոց:
- 5 Լսեցոյց նմա զծայն իւր
Եւ էնոյծ զնա ի մէզն:
- 6 Եւ ետ նմա յայտ յանդիման պատուիրանս,
Աւրէնս կենաց և հաճնարոյ,
Ուսուցանել Յակոբայ զուխտ նորա³
Եւ գիրաւունս նորին⁴ Իսրայելի:
- 7 ԶԱհարոն բարձրացոյց զսուրբն նման նորա⁵
Զեղբայր նորա ի տոհմէն Ղևեայ,
Հաստատեաց նմա ուխտ յաւիտեանց.
Եւ ետ նմա ուխտ քահանայութեան ժողովրդեանն:
Երանելի արար զնա քաջազարդութեամբ
Եւ զգեցոյց⁶ նմա պատմութեան փառաց:
- 8 Ագոյց նմա կատարումն պարծանաց
Եւ հաստատեաց զնա անաւթ զարդութեան⁷
Անդրաւարտիս և պճղնաւոր և թիկնանոց
- 9 Եւ պատեաց⁸ զնա նոճաձևաւք,
Ոսկի զանգակաւք յոշովիւք շուրջնակի,
Հնչել զծայն ի քայլս նորա,
Լսելի առնել հնչիւն ի տաճարի
Ի յիշատակ որդւոց ժողովրդեան նորա:

¹ Գևորգ Արզարյան, Սիրաքի գրքի հնագույն թարգմանության նորահայտ հատվածներ: «Էջմիածին», 1988, հ. ԺԱ.—ԺԲ, էջ 58—70: Զոհրապյանի և Բազրատունու հրատ. Սիրաքի գրքի գլ. ԺԸ, տ. 80—գլ. Ի, տ. 28 նույնությամբ մասին տես՝ Մովսիսյան, Սիրաքայի հին հայ թարգմանությունները—«Սիրուն», 1988, № 5, էջ 152:

² Զեռագրում՝ սրբեաց փխ. սիրեաց զնա:

³ Զեռագրում չիք նորա: Վերականգնում ենք ըստ Երո սաղեսմի ձեռագրի: Տես Դուրյան, Ե, նորագիտ գլուխներ Սիրաքայի գիրքին հին թարգմանություններ:—«Սիրուն» 1927, էջ 248:

⁴ Զեռագրում՝ մմին փխ. նորին:

⁵ Զեռագրում՝ նմա փխ. նորա:

⁶ Զեռագրում՝ զգեցոյց:

⁷ Զեռագրում՝ պատեալ:





ՀԱՆԳԻՍՏ

Տ. ՎԱՐԴԱՆ ԵՊՍ. ՏԵՐ-ՍԱՀԱԿՅԱՆԻ
(1878—1968)

1968 թվականի հունվարի 20-ին Բաքվում վախճանվեց Մայր Աթոռի ավագագույն միաբան տ. Վարդան եպս. Տեր-Սահակյանը:

Տ. Վարդան եպիսկոպոսը ծնվել է 1878 թվականին Լեռնային Ղարաբաղի Ջրաբերդի շրջանի Գյուլյաթալ գյուղում՝ քահանայի ընտանիքում:

Նախնական կրթությունը ստացել է Ջրաբերդի շրջանի Կուսապատ գյուղի հնգամյա դպրոցում: 1896—1901 թվականներին սովորել է Շուշիի թեմական դպրոցում: Նույն թվականին նշանակվել է ուսուցիչ Ջրաբերդի շրջանի դպրոցում, ուր պաշտոնավարել է մինչև 1904 թվականը:

1904 թվականին ձեռնադրվելով քահանա հարեհի գյուղի վրա, նույն տարին հրավիրվում է Հյուսիսային Կովկասի Գրոգնի քաղաքը, ուր պաշտոնավարում է ուղիղ 25 տարի՝ որպես քահանա և ուսուցիչ:

1928 թվականին տեղափոխվելով Բաքու, միաժամանակ զբաղվում է ուսուցչությամբ: 1945 թվականին նշանակվում է Բաքվի հայոց ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում ավագերեց: 1951 թվականին, Տ. Գևորգ Զ կաթողիկոսի հանձնարարությամբ, մտնում է ս. Էջմիածնի միաբանների շարքը և 1952 թվականին վեղար է ստանում: 1952—1954 թվականներին վարում է վրահայոց թեմի առաջնորդական պաշտոնը: 1954 թվականին նշանակվում է Նոր Նախիջևանի և Հյուսիսային Կովկասի թեմակալ առաջնորդ:

1955 թվականին Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսից եպիսկոպոսական ձեռնադրություն է ընդունում և ընտրվում է անդամ Գերագույն հոգևոր խորհրդի:

1962 թվականից կոչվելով հանգստի տ. Վարդան եպիսկոպոսը իր վերջին տարիները անց էր կացնում երբեմն ս. Էջմիածնում, երբեմն Բաքվում՝ իր հարազատների մոտ:

Հանգուցյալի վերջին օծումը կատարելու համար հունվարի 21-ին Բաքու մեկնեց տ.



Հուսիկ եպս. Սանթրոյանը՝ ընկերակցությամբ արժ. տ. Կոմիտաս ավագ քահանա Շիրինյանի:

Վերջին օծման և թաղման արարողությունները կատարվեցին հունվար 23-ին՝ Բաքվի ս. Գրիգոր Լուսավորիչ առաջնորդանիստ եկեղեցում:

Տ. Հուսիկ եպիսկոպոսը իր դամբանակալում խուսեց հանգուցյալի կյանքի և գործունեության մասին:

Հանգիստ իր ոսկորներին: